ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ա 85321

ՉԱՎԱԽՔ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1999

947.925

ԴՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63. 3 (2Հ)
Մ 537

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Մելքոնյան Ա. Ա.
Ջավախք: Պատմության ուրվագծեր
Մ 537
Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. , 1999, 103 էջ + 21 լուսանկար

Աշխատությունը նվիրված է պատմագրության մեջ տակավին չուսումնասիրված բնագավառներից մեկի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջավախք գավառի պատմության հարցերին: Գրքույկում համառոտակի ներկայացված է գավառի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև խորհրդային ժամանակաշրջանը, առավել հանգամանալից լուսաբանված են 1918-1921թթ. փոքրկալից իրադարձությունները: Հավելվածում զետեղված են նորահայտ վավերագրեր, որոնք լույս են սփռում հիմնախնդրի կնճռոտ շատ հարցերի վրա:

Գրքույկը նախատեսված է պատմաբան-մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Մ 0503020913 ԳՄԴ 63 . 3 (2Հ)
703 /02/-99 © ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 1999

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ջավախքի՝ Ախալքալաքի գավառի, ինչպես և նրան հարակից Ախալցխայի և Ծալկայի շրջանների պատմությունը, թեև վերջին տարիներին սկսել է հետաքրքրել առանձին ուսումնասիրողների,սակայն շարունակում է մնալ հայոց պատմության առավել թույլ ուսումնասիրված բնագավառներից մեկը: Խորհրդային շրջանում հայ պատմաբանների համար հատկապես ,,հասու չէր,, այդ հիմնախնդրի նոր ժամանակահատվածի՝ 19-20-րդ դարերի պատմությունը: Հայ մասնագետները կամ ուղղակի խուսափում էին Ջավախքին վերաբերող խնդիրների քննությունից կամ էլ շրջանցում էին սուր ու կնճռոտ քաղաքական հարցերը նախապատվությունը տալով երկու բախտակից ժողովուրդների՝ հայերի ու վրացիների փոխհամագործակցության ու բարեկամության դրվագների լուսաբանմանը: Աշխարհաքաղաքական միանգամայն նոր պայմաններում, երկու հարևան երկրների անկախության կայացման ու ամրապնդման իրավիճակում, ի շահ տարածաշրջանային խաղաղության ու համագործակցության, պատմական ճշմարտության լիակատար բացահայտումը դառնում է կենսական անհրաժեշտություն և կարող է բացառապես բխել դրացի ժողովուրդների շահերից: Այդ տեսակետից կարևոր է հստակորեն տարբերակել ճշմարտացի պատմությունը (նաև իր անցյալի դառը դասերով ու սուր ելևէջներով), ներկա քաղաքական հիմնախնդիրների և այսօր համակողմանիորեն հայ-վրացական համագործակցության հրամայականից: Կարծում ենք, այդ նպատակին կարող է ծառայել նաև Ջավախքի ուրվագծային պատմության և հատկապես նրա ամենաողբերգական շրջանի 1918-1921թթ. հարցերին նվիրված ներկա գրքույկը: Աշխատությանը կցված է հավելված՝ արխիվային նորահայտ փաստաթղթերով, որոնք հատկապես նոր լույս են սփռում Ջավախքի 1918-1921թթ. պատմության փոթորկալից ժամանակաշրջանի դեպքերի վրա:

Գրքում զետեղված լուսանկարների համար հեղինակը շնորհակալություն է հայտնում Սամվել Կարապետյանին, Սերգեյ Շիրինյանին և Տիգրան Բաբայանին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՋԱՎԱԽՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Պատմական Հայաստանի Մեծ Հայքի թագավորության 15 նահանգներից (աշխարհներ) տասներեքերորդը Գուգարքը, զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսային հատվածը: Այն արևելքից սահմանակից էր Ուտիք, արևմուտքից Տայք, հարավից Այրարատ նահանգներին, իսկ հյուսիսից Իբերիային (Վիրք, Վրաստան): Նրա վարչական կենտրոնը Ցուրտավ քաղաքն էր: Գուգարքը Հայկական թագավորության չորս սահմանակալ բդեշխություններից մեկն էր և ժամանակ առ ժամանակ օգտվում էր որոշ ինքնուրույնությունից: Ըստ վրաց առանձին պատմաբանների, Գուգարք տերմինը վրացական ծագում ունի, և այդ տեղանունն առաջացել է երկրամասը բնակեցնող գոգարների կամ գարգարների անունից: Սակայն հայկական աղբյուրներն այդպիսի էքնոս չեն հիշատակում: Իսկ ինչ վերաբերում է գարգարացվոց երկրին, ապա այն, ըստ ակադեմիկոս Ս. Երեմյանի, կապ չունի Գուգարքի հետ:[1]

Գուգարքի հիմնական ինները գավառներն էին Ձորոփորը, Կողբոփորը, Օոբոփորը, Տաշիրը, Թռեղքը, Կանգարքը, Կղարջքը, Վերին Ջավախքը և Արտահանը[2]: Մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387 թ.) նահանգն իր մեջ ընդգրկում էր նաև հարակից Շավշեթը, Ներքին Ջավախքը, Մանգլեացփորը, Քուիշափորը, Բողնոփորը, Խանցիխեն և Պարուարը[3]: 16 գավառների ընդհանուր տարածքը 16,5 հազ. քառ. կմ-ից ավելի էր:

Գուգարաց գավառներից Ջավախքը հիշատակվում է ութերորդը: Այն ընկած էր նահանգի կենտրոնական մասում և զբաղեցնում էր գլխավորապես համանուն սարահարթի (Ախալքալաքի սարավանդ, Ջավախքի լեռնադաշտ) ու վերջինս շրջափակող լեռնակազմությունների տարածքը, հյուսիսից սահմանակցում է Թռեղքի (Թրիալեթ), արևելքից Սամսարի ու Ջավախքի լեռներին (Կեչուտի, Մթին), իսկ հարավում Ախալքալաքի սարավանդի շարունակությունը կազմող Աշոցքի սարահարթին[4]:

«Ջավախք» տերմինի մասին պատմագրության մեջ հայտնվել են տարբեր տեսակետներ: Ըստ վրաց «Քարթլիս Ցխովրեբայի» (Քարթլիի տարեգրությունը, նաև Քարթլիի կյանքը)

մատենագիր Լեոնտի Մրովելու Կուրի դաշտավայրը, Փոցխով գետի շրջատարածքը (պատմական Սամցխե գավառ, այժմ՝ Ախալցխա) և հարակից այլ հողեր ժառանգություն են հասել վրացիների նախահայր Քարթլոսի թոռանը՝ Զավախոսին, Մցխեթոսի որդուն: Զավախոսի անունից էլ երկրամասը կոչվել է Զավախք, վրացերեն՝ Զավախեթի: Սակայն այս «հիմնավորումն» իրավամբ համարելով առասպելական և խիստ պարզունակ, հետագայի ուսումնասիրողներից շատերը փորձել են գտնել ուրիշ բացատրություններ: Ոմանք, հաշվի առնելով Զավախքում գարի աճեցնելու համար բարենպաստ կլիմայական պայմանները, նրա անունը կապում են վրացերեն ջավի՝ գարի բառի հետ: Ուրիշները փնտրել են այդ տարածքում ջավախների էթնոս՝ ցեղ[5]:

Իրականում Զավախք տեղանունը, ինչպես երևում է ուրարտական (Վանի թագավորության) արձանագրություններից, մ. թ. ա. 9-րդ դարի վերջից Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հիշատակվող Զաբախա կամ Զաբախյան երկրի անվան տառադարձված տարբերակն է՝ Զաբախա-Զաբախա-Զավախա-Զավախք[6]: Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786-764 թթ.) թողած Խորխոռյան արձանագրության մեջ՝ 785-784 թթ. գրավված Դիաուխի կամ Դայա (Տայք), Տարիունի (Դարույնք՝ Բասեն) և այլ երկրների թվում նշվում է Զաբախան: Վերջինս հիշատակվում է նաև ուրարտական հաջորդ մի քանի թագավորների թողած արձանագրություններում: Թեև Զավախքի մասին մ. թ. ա. 8-րդ դարից ավելի վաղ հիշատակություններ չկան, սակայն, ուսումնասիրելով մինչուրարտական շրջանը, կարելի է ենթադրել, որ այն կամ վարչականորեն մաս է կազմել մ. թ. ա. 2-րդ հազարամյակում գոյություն ունեցած հայկական առաջին պետական կազմավորումներից մեկի, ամենայն հավանականությամբ Հայասային և էթիունիին, կամ էլ եղել է բավական ընդարձակ ինքնուրույն կազմավորում՝ ընդգրկելով հետագայի Գուգարք աշխարհի ամբողջ արևմտյան հատվածը: Ավելի հավանական է երկրորդ տեսակետը. պատահական չէ, որ Արգիշտիի վերոհիշյալ արձանագրությունում Զաբախան հիշատակվում է իբրև գրավված երկիր: Նշանակում է մինչև մ. թ. ա. 8-րդ դարի սկիզբը Զավախքը եղել է ինքնիշխան ցեղապետություն և այդ ժամանակ որպես հայ էթնոսով բնակեցված տարածք, միավորվել է Վանի միասնական թագավորության մեջ՝ կազմելով նրա հյուսիս-արևմտյան ամենաընդարձակ ու սահմանամերձ նահանգը[7]:

Հետուրարտական՝ Երվանդունյաց Հայաստանի ժամանակաշրջանից (մ. թ. ա. 6-2-րդ դդ.) Ջավախքի մասին ուղղակի տեղեկություններ գրեթե չկան: Միայն կարելի է վկայակոչել առասպելախառն, բայց ուշագրավ երկու հիշատակություն՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» և «Քարթլիս Ցխովրեբայից»: Պատմահայրը նշում է, որ Վաղարշակ Ա-ն «զկէս մասինն Ջավախաց» ժառանգություն է տալիս Շարայի ցեղից Գուշարին և նրան նահանգի վրա կարգում բդեշխ՝ Հայոց երկիրը հյուսիս-կովկասյան լեռնականներից պաշտպանելու համար[8]: Հավաքական ու կիսաառասպելական կերպար Վաղարշակի այս ձեռնարկումը ուսումնասիրողներից շատերը վերագրում են մ. թ. ա. 3-րդ դարին: Ստացվում է, որ այդ ժամանակ Ջավախքը եղել է Երվանդունիների պետության կազմում և տրվել է Գուշարին, որի անվան հետ է կապվում Գուգարք տեղանունը՝ այսինքն, երկրամասը դադարել է ընդարձակ նահանգ լինելուց և մտել է նորաստեղծ Գուգարք սահմանակալ բդեշխության մեջ, ընդ որում՝ իր հերթին տրոհվելով երկու մասի՝ Ջավախք Վերին և Ջավախք Ներքին: Վերին Ջավախքը նույնանում է Խորենացու նշած «կես մասինն Ջավախաց» տարածքի հետ, քանի որ տրվել է հարևան Շարայի՝ Շիրակի գավառին: Ներքին Ջավախքը աղբյուրներում չի հիշատակվում: Սակայն եթե կար Վերինը, որը գավառի բարձրադիր հարավային և հյուսիս-արևելյան մասն էր, նրա համեմատությամբ ցածրադիր արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածը, բնականաբար, պետք է կազմեր Ներքին Ջավախքը[9]:

Հատկանշական է, որ Խորենացու վերոհիշյալ վկայությունը մ. թ. ա. 3-րդ դարում Ջավախքի մասին ձևափոխված «վրացական» տարբերակով բերվում է «Քարթլիս Ցխովրեբայում», որի համաձայն, ինչպես վերը հիշատակվեց, այն բաժին է ընկել այս անգամ Ջավախոսին: Բանն այն է, որ մ. թ. ա. 270-ական թթ. Մեծ Հայքի հյուսիսային հարևանությամբ կազմավորվել է Վրաց Փառնավազյան պետությունը (Իբերիա, Վիրք), որն, օգտվելով հայ Երվանդունիների հակառակորդ Սելևկյանների օժանդակությունից, հայոց երկրից գրավել և անջատել է Գուգարքն ու Ջավախքը, ինչպես և հարակից այլ շրջաններ: Այդ ժամանակ Ջավախքի կենտրոնը Օունդա[10] ամրոցն էր, որը հայերը կոչում էին Քաջատուն կամ Քաջաց քաղաք: Վերը թվարկված տարածքները վրացիներից հետ վերցնելու մասին վկայում է հույն հեղինակ Ստրաբոնը: Նա գրում է, որ մ. թ. ա. 2-րդ դարում հայոց Արտաշես թագավորը (189-160) ի թիվս այլ հողերի իբերներից գրավել (այն է՝ վերադարձրել է -

Ա. Մ.) և իր երկրին է միացրել Գոգարենեն՝ Գուգարքը[11]: Նույն վկայությունը մեկ այլ խմբագրությամբ հանդիպում է նաև վրացական աղբյուրներում: Ըստ Լեոնտի Մրովելու, քարթվելները՝ վրացիները, Ջավախեթը գրավելու համար Արտաշեսի դեմ պայքարում դուրս են բերել օսերին[12], հայկական աղբյուրներում հիշատակվող ալաններին: Կնշանակի, հայ-ալանական պատերազմը, որի մասին պատմում է Մ. Խորենացին «Արտաշես և Սաթենիկ» հայտնի առասպելում, ընթացել է նաև Ջավախքի համար: Արտաշեսը կարողանում է ոչ միայն ետ վերադարձնել հայկական հողերը, այլև իրեն ենթարկել Վրաց փոքրիկ թագավորությունը: Փաստորեն այդ ժամանակ Գուգարքի բդեշխին է անցնում վրաց գահը: Զարմանալի չէ, որ հետագայի որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք «բդեշխ գուգարացոց և վրաց» արտահայտությանը:

Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում ևս Ջավախքի վերաբերյալ հիշատակություններն աղքատիկ են, և գավառի մասին պատկերացում կարելի է կազմել հիմնականում ամբողջ նահանգի՝ Գուգարքի միջոցով: Վերջինս մինչև Արշակունիների անկումը՝ 428 թ., շարունակել է մնալ իբրև Մեծ Հայքի հյուսիսային պաշտպանական նահանգը և նրանից չի անջատվել նույնիսկ մ. թ. առաջին դարի առաջին կեսին (1-52 թթ.), երբ հայոց գահին, ի թիվս այլ օտարների, բարձրացել էին նաև վրացիներ:

Խնդրո առարկա գավառին վերաբերող ժլատ հիշատակումներից թերևս խիստ արժեքավորը, որը նրա ժողովրդագրական վիճակի գողտրիկ վկայություն է, պատկանում է վրաց տարեգրի գրչին: Ըստ ավանդության, Հռիփսիմյան քրիստոնյա քարոզիչ քույրերից Նինոն՝ հայկական աղբյուրների Նունեն, Հայաստանից փորձում է անցնել Վրաստան և լինում է Ջավախքում, որտեղ Փարվանա լճի ափին հանդիպում է մցխեթցի հովիվների և, նրանց հետ խոսելով հայերեն, կարողանում է պարզել Մցխեթ տանող ճանապարհը[13]: Այս վկայությունը որոշակի պարզություն է մտցնում երկու կարևոր հարցերում: Նախ, որ Նունեն մինչև Վիրք անցնելը, եղել է Հայաստանում, ծանոթացել հայերենին և, ի թիվս այլ քարոզիչների, այնտեղից քրիստոնեությունը տարածել վրաց աշխարհում[14]: Երկրորդ՝ Ջավախքի գործածական լեզուն հայերենն էր, այն հայաբնակ էր, այլապես Մցխեթից եկած հովիվների համար անհրաժեշտություն չէր լինի սովորելու հայոց լեզուն:

Արշակ Բ-ի օրոք (350-368) Գուգարաց նահանգն ապստամբում է և հարում վրաց թագավորին: Պապ թագավորի հրամանով Մուշեղ

սպարապետը ետ է գրավում Գուգարքը, պատժում բդեշխին ու նրան օժանդակած իշխաններին և վերականգնում հայ-վրացական սահմանը՝ Կուր գետը. « ...զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ յերկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»[15]:

Ուշագրավ է, որ գտնվելով Գուգարքի կազմում, Ջավախքը 3-4-րդ դդ. պահպանում էր իր ներքին ինքնուրույնությունը: Այստեղ իշխում էին Վարծավունի[16] նախարարական տան ներկայացուցիչները: Արշակունյաց Հայաստանի կյանքում վերջիններս ունեցել են իրենց ուրույն տեղը: «Գահնամակում» Վարծավունիները 70 նախարարների թվում հիշատակվում են 23-րդը: Պատերազմի ժամանակ Հայաստանի չորս զորավարություններից Արևելյան ուղղության զորքերի մեջ նրանք ունեցել են 200 զինվոր[17]:

387 թ. Հայաստանի բաժանումից հետո Արշակունիների ազդեցությունը Գուգարքի և Ջավախքի վրա զգալիորեն թուլացավ, իսկ 428 թ. հայոց թագավորության կործանումից հետո նրանք միացվեցին Սասանյան Իրանի տիրապետության տակ կազմավորված Վրաց մարզպանությանը, ճիշտ այնպես, ինչպես նույն ժամանակ Արցախը կցվեց պարսկահպատակ մեկ այլ մարզի՝ Աղվանքին:

Ինչպես ամբողջ Հյուսիսային Հայաստանը, Ջավախքը ևս պարսկական լծի տակ մնաց մինչև 7-րդ դարը՝ արաբական արշավանքները: 7-րդ դարի հեղինակ Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնի» երկում, արաբական արշավանքների առիթով, նորից հանդիպում ենք Ջավախքի մասին հիշատակության: Պատմիչը վկայում է, որ արաբ զորավար Աբդռահիբը 7-րդ դ. կեսերին ասպատակել է Հայաստանի գավառները՝ Հարքը, Բասենը, Ջավախքը, Վանանդը, անցել Վիրք, և ավարով վերադարձել Արաբիա[18]: Այստեղ հատկանշականն այն է, որ Ջավախքը թվարկվում է հայոց գավառների շարքում, իսկ հետո նոր միայն նշվում է Վիրքը: Նշանակում է 7-րդ դ. 40-50-ական թթ.՝ արաբական առաջին արշավանքների շրջանում, այս գավառն արդեն ոչ թե Վիրքի, այլ Հայաստանի կազմում էր:

Ջավախքը արաբական տիրապետության տակ մնում է մինչև 9-րդ դ. վերջը, երբ Բագրատունյաց Սմբատ Ա-ն (890-914), Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչի վկայությամբ «երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց՝ և զայնս ևս ամրոցս իւրոյ տէրութեանն առհասարակ յինքն գրավէր նուաճէր»[19]:

10-րդ դ. 70-80-ական թթ. Գուգարքի մեծ մասը մտնում էր Լոռվա կամ Կյուրիկյան (նաև՝ Գուգարքի, Ջորագետի) թագավո-

ության տարածքի մեջ: Վերին Ջավախքը, հատկապես նրա հարավային մասը՝ Գոգչենը[20], որոշ ժամանակ դեռ մնում է Բագրատունիների ազդեցության տակ, իսկ Ներքին Ջավախքը 10-րդ դ. վերջին գրավում են հետզհետե հզորացող վրաց Բագրատունիները: 11-րդ դ. սկզբին նույն ճակատագրին է արժանանում նաև բուն Վերին Ջավախքը: Շուտով վրաց թագավորները Ջավախքն ու նրան հարևան Սամցխեն[21] վերածում են իրենց թագավորության հարավում ընկած ուժեղ պաշտպանական գավառների՝ կենտրոնախույս ուժերի, Բյուզանդական կայսրության, մի փոքր ավելի ուշ՝ սելջուկ-թուրքերի դեմ: Բագրատ Գ-ն 11-րդ դ. սկզբին կառուցապատում ու ամրացնում է գավառի բնակավայրերից մեկը և կոչում Նոր Քաղաք, վրացերեն՝ Ախալքալաք (ախալի՝ նոր, քալաքի՝ քաղաք): Բագրատ Դ-ն 1044-1047 թթ. Լիպարիտ Օրբելյանի դեմ պատերազմի ժամանակ Թափարվան գետի և նրա ձախակողմյան Քառասունաղբյուր վտակի գոյացրած թերակղզու մասում կառուցում է Ախալքալաքի բերդը: Վրաստանից այստեղ են բերվում որոշ թվով վրացի վերաբնակիչներ:

Վրաց տիրապետությունը երկար չի տևում: 1064 թ. Հայաստանն ու Վրաստանը ենթարկվում են սելջուկյան ասպատակություններին: Այդ թվականին սուլթան Ալփ-Արսլանը « ... և իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւալիս /Ջաւախս- Ա. Մ./,- գրում է պատմիչ Մատթեոս Ուռհայեցին,- և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ալախ (Ախալ-քաղաք- Ա. Մ.) և ուժգին զօրութեամբն առաւ Ալախ քաղաքն. և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին՝ անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ էր թիւ»[22]: Նույն իրադարձության մասին հիշատակում է նաև Վարդան պատմիչը. Տուղրիլի հորեղբոր որդին՝ Ալփ-Արլսանը «...եկն դարձեալ հարիւր հազարաւ, եւ առ զնոր քաղաք, զոր Վիրք Ախալ-քաղաք ասեն»[23]: Պատմիչների այս վկայություններից երևում է, որ 11-րդ դարի կեսերին իբրև վարչական կենտրոն Ծունդային փոխարինած Ախալքալաքը սարսափելի կոտորածների ու բռնագաղթի հետևանքով կորցրել էր իր բնակչության զգալի մասը:

12-րդ դարի սկզբին վրաց Դավիթ Շինարարին (1089-1125) հաջողվում է սելջուկ-թուրքերից ետ գրավել Լոռին ու Ջավախքը: Սակայն ամբողջ 11-րդ դարի ընթացքում այն, ի թիվս այլ գավառ-

ների, ձեռքից ձեռք է անցնում: 1175 թ. օգոստոսին Գանձակի սուլթան-աթաբեկ Ելդկուզի զորքերը ասպատակում են Զավախքն ու Թռեղքը: Գեորգի Գ-ն (1156-1184) խուսափում է ճակատամարտից և չի կանխում սելջուկների գործողությունները[24]: Անին ու Շիրակը ավերելուց հետո Ելդկուզը «...ընդ նմին աւերէ զԱխալ քաղաք և զՁավախեթ և առժամայն դառնալով ի Դուին, սատակի ինքն և սուլտանն և այլ բազումք ի մեծամեծաց»[25]: Միայն 12-րդ դարի վերջին, Թամար թագուհու (1184-1213) պատմիչի վկայությամբ, սելջուկների նկատմամբ Զաքարե և Իվանե Զաքարյանների տարած հաղթանակներից հետո Վրաստանին է ենթարկվում Զավախքից մինչև Սպեր ընկած տարածքը[26]:

Այս շրջանում շարունակվեցին քարթվելական (վրացական) էթնիկական նոր խմբերի ներթափանցումները Զավախք, այնտեղ ուղղափառության՝ վրացադավանության տարածման դեպքերը, երևույթներ, որոնք վրաց Բագրատունիների ուժեղացման ժամանակաշրջանում (12-րդ դ.-13-րդ դ. սկիզբ) հատկանշական էին ոչ միայն Ախալքալաքի, այլև հայ-վրացական զինակցության շնորհիվ Վրաստանին անցած Հյուսիսային Հայաստանի մյուս գավառներին: Այսուհանդերձ, այդ գավառներից Լոռին, Սամցխե-Ախալցխան, Տաուշը, Սևանի շրջակա գավառները, ինչպես և Զավախքը շարունակում էին գերազանցապես մնալ հայաբնակ: Պատահական չէ, որ այդ տարածքները վրաց արքունիքը հանձնեց հայ Զաքարյաններին, որոնք Վրաստանի հովանավորության ներքո ստեղծեցին իրենց իշխանապետությունը:

Թամար թագուհու պատմիչը գրում է, որ Զավախքում կուսակալներ էին Սարգիս Երկայնաբազուկ Թմոգվելին (Թմոգվեցին) և Շալվա Թորելին (Թորեցի): Առաջինը նստում էր Թմոգվի, հայկական Թմուկ կամ Թմկա բերդում, որը գտնվում էր Կուրի ձորում, Օունդա ավանից ոչ հեռու, իսկ երկրորդը՝ հավանաբար Թորեա գյուղում: Այն, որ Զավախքում եղել են երկու կուսակալներ՝ գավառապետեր, պատահական չէ: Նշանակում է շարունակում էր պահպանվել գավառի նախկին վարչական բաժանումը: Թորեցիները նույնպես ենթարկվում էին Թմկաբերդի Զաքարյաններին: Ախալքալաքը, որն օգտվում էր քաղաքային ինքնավարությունից, ամբողջ գավառի վարչական ու տնտեսական կարևորագույն կենտրոնն էր:

13-րդ դ. 20-ական թվականների կեսերին Զավախքը ենթարկվեց միջինասիական տիրակալ Զալալեդդինի, իսկ 30-ականներին մոնղոլների ասպատակություններին[27]: Սակայն մի

քանի գավառներում, այդ թվում Ջավախքում, Ջաքարյանների ինքնավար վիճակը պահպանվեց: Ըստ 1245 թ. նոր վարչական բաժանման մոնղոլների հսկողությամբ Ջավախքը թողնվեց Թորեցիներին: 1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցին, օգտվելով վրաց թագավորների և մոնղոլների հակամարտությունից, կարողացավ հիմնադրել մի ընդարձակ իշխանություն՝ Տաշիրից մինչև Էրզրում, Սամցխեի աթաբեկություն անունով, որն իր մեջ ընդգրկեց նաև Ջավախքը: Մինչև 14-րդ դ. սկիզբը, մոնղոլներին որոշ քանակությամբ հարկեր վճարելով, Հայաստանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում կազմավորված, հիմնականում հայաբնակ այս իշխանությունն իր ինքնուրույնությունը պահպանեց մինչև 1535 թ.՝ պայքար մղելով Քարթլիի, Լենկ-Թեմուրի, նրա հաջորդների՝ Թեմուրյանների, 15-րդ դարից՝ թուրքմենական կոյունլու ցեղերի դեմ: Ինչպես Բագրատունիների, Ջաքարյանների, այնպես էլ վերջիններիս հաջորդներ Ջաղեցիների օրոք, հայ մշակութային կյանքը Ջավախքում զգալի վերելք ապրեց, որի պերճախոս վկայություններն են պահպանված բազմաթիվ հայկական ճարտարապետական կոթողները[28]:

15-րդ դարի վերջից Ջավախքը հայտնվեց զանազան նվաճողների տեսադաշտում: 1484 թ. պարսից Յաղուբ խանի զորքերը ավերեցին այն, կոտորեցին ու գերեվարեցին բնակչությանը, իսկ գավառը կրակի մատնեցին[29]: 1535 թ. Իմերեթիայի ու Քարթլիի թագավորները համատեղ ջանքերով պարտության մատնեցին Սամցխեի աթաբեկի զորքերին և տիրեցին Ախալքալաքին ու Ախալցխային: Սակայն Սեֆյան Իրանի դեմ պատերազմների ընթացքում 1547 թ. օսմանյան թուրքերը գրավեցին այդ քաղաքները: 1555 թ. Ամասիայում կնքված պարսկա-թուրքական հաշտությամբ Ջավախքն անցնում էր Պարսկաստանին: Սակայն 1578 թ. պատերազմը վերսկսվում է, թուրքերը նորից ներխուժում են Ջավախք և շուտով այն մտցնում նորաստեղծ Չլդըրի, հետագայում՝ Ախալցխայի նահանգի (էյալեթ, վիլայեթ) մեջ՝ 1637 թ. այն վերածելով ինքնուրույն գավառի՝ սանջակի:

Նվաճված տարածքներում օսմանցիներն անցկացնում են աշխարհագիր՝ տեղի բնակչությանը հարկման ենթարկելու նպատակով: 16-րդ դ. վերջին կազմված թուրքական հարկացուցակներից մեկն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ախալքալաքի գավառի ժողովրդագրական իրավիճակի մասին: «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար» կոչվող այդ փաստաթղթում թվարկվում են գավառները՝ իրենց գյուղերով և

նրանցում ապրող մարդկանց անվանացանկերով: Պարզվում է, որ Ախալքալաքի բնակավայրերի մեծ մասում բնակիչները քրիստոնյաներ էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուններ: Հայկական կամ հայերի կողմից լայնորեն գործածվող անուններ հանդիպում ենք Կոկիայում (Ռուբեն, Ռոսեբ (Հովսեփ), Օրջայում (Հանես Իշխանի, նրա եղբայր Սարգիս, Ավագ Հանեսի, Կիրակոս, Սիմոն, Ղազար, Նազարի որդի), Կոթելիայում (Զաքար), Բարայեթում (Միտիչի (Մկրտչի) թոռ, նրա որդի Սարգիս), Տուրցխում (Մասուրի (Մանսուր) որդի Սարգիս, Ավագ), Խանդոյում (Հակոբ), Վաչիանում (Քերոբ), Քարծեփում (Բայանդուր), Հոկամում (Մանվել Սարգսի), Քիլդայում (Խաչատուր), Վերին և Ներքին Խոսպիաներում (Միտիչ (Մկրտիչ) Տեր-Բեկի, Խոսիկ-Հուսիկ, Սահակ), Ջիգրաշենում (Զաքարի թոռ), Մեծ Մաջադիայում (Հակոբ), Նաբայաքևում (Հավաթեղ Կարապետի), Կորխում (Ռոստոմ, նրա որդի Կիրակոս, Շահաբա Մկրտիչի, Հանես Սարգսի, Կիրակոս Ասվա/ծա/տուրի), Գումբուրդոյում (Խարաբայի որդի Դավիթ, Մկրտիչ՝ Ամիրխանի որդի, Յարալ Կիրակոսի, Շահկուլի որդի Աբրահամ, Մանուկ), Օյավերդում (Աբաս), Խուլգումոյում (Ասվա/ծա/տուր, Արտաշես), Հեշտիայում (Տեր-Հակոբ), Մեծ Խորենիայում և Ջամդուրայում (Գրիգոր, նրա եղբայր Մոսե, Սահակ Գրիգորի, նրա եղբայր Սարգիս, Տեր-Հակոբ, նրա եղբայր Յարալ, Խաչատուր, Մուրադ Ջիհանշեի), Օրջայում (Վահրամ, Սարգիս, Եղիազար), Զրեսկում (Շահմուրադ, Ռոսեփ (Հովսեփ), Սիմոն, Սամսոն, Ասվա/ծա/տուր), Ղաուրմայում (Սարգիս), Բավրայում (Բայանդուր), Թորիայում (Առաքել, Բայանդուր, Ջանիբեկ Սարգսի, Մկրտիչ), Աբուլում (Եղիազար, Դավիթ, Սարգիս), Ախալքալաքի բերդում (Մուրադ, նրա եղբայր Ջադիկ), Փոքր Մուրջախեթում (Հանես Սարգսի), Փոքր Մամզարայում (Դոլիկ Ասվա/ծա/տուրի), Ծունդայում (Ջոջիկ Ջիանշեի, նրա եղբայր Մանուկ), Սուլդայում (Շերմազան, նրա որդի Սիմոն), Էրինջայում (որդի Եղիազարի, նրա եղբայր Մանաս, Հակոբ), Խոզաբունում՝ Խոզափինում (Մանուկ Ասվա/ծա/տուրի), Արագովայում (Սարգիս), Ափնիայում (Աբաս), Բեժանոյում (Սիմոն), Այաստանում (Արզուման), Լոմատուրցխում (Ալիբեկի որդի Ռոստոմ), Զակում (Եղիազար, Ռոսեփ-Հոսեփ), Բուռնաշեթում (Սարգիս) և այլն: Ուշագրավ է, որ կան նաև բնակավայրեր, որոնց բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: Այսպես. նշանավոր Թմուկ (Թմոգվի) բերդաքաղաքն ըստ նույն աղբյուրի գերազանցապես հայաբնակ էր: Այնտեղ հանդիպում ենք հետևյալ

անունների. Սարգիս Առաքելի, Ռոստոմ, Անանիայի որդի, նրա եղբայր Մկրտիչ, որդի Վարդանի, որդի Եդիգարի, Հովհաննես Բայանդուրի, Պապու Շիրինի, Բերիկ Փիրազիզի, նրա որդի Մկրտիչ, Մուրադ, Տեր-Հակոբ, Բերիկ Մուրադի, նրա եղբայր Մարգար, Հակոբ, Սարգիս Մելիքի և այլն: Զուտ հայաբնակ էր Չլդրի գավառի Քենարբել գյուղը՝ Ծառուկի որդի, նրա եղբայր Ասվա-/ծա/տուր, Մարգարի որդի, Ղուլիջանի որդի Նորսես (Ներսես), Խոսիկ-Հուսիկ, Ռոստոմի որդի, Սարգիս Մուխքարի, Միկիրտիչ Վելիջանի, Միտիչի որդի, նրա եղբայր Սարգիս, Մուրադ Կարապետի, Մարտիրոս Ավանեսի, Հովհաննես Ամիրազիզի, նրա եղբայր Կարապետ, Խաչիկ Համբարձումի, Թոռնիկ Ծառուկի, Խաչատուր Ալեքսանի, Մարգար, Պապու Մարգարի և այլք:

Հայաշատ էին նաև նույն գավառի Մեծ և Փոքր Կարծախ գյուղերը՝ Նադար Շահնազարի, Վարդան, Գրիգոր Սուքիասի, Ջհանշե Կիրակոսի, Մկրտիչի որդի, նրա եղբայր Վարծել, Բայանդուր, Խաչիկ Յարալի, որդի Սահակի, որդի Անտոնի, Տեր-Հակոբ Ջոմերդի, նրա որդի Շահազիզ, Յարազիզ Տեր-Հակոբի, Սարգիս, Ասվա/ծա/տուր, Դիարբեկ Սահակի, նրա եղբայր Ասվա/ծա/տուր և այլն:[30] Հատկանշական է, որ վերոհիշյալ անունների մեջ բազմիցս հիշատակվում է Տեր-Հակոբ անունը, իսկ Խոսպիայում՝ Տեր-Բեկը, հանգամանք, որը վկայում է տվյալ բնակավայրում հայ քահանայի, այն է՝ նաև հայկական ծխի ու եկեղեցու առկայության մասին:

Հետագա դարերում օսմանյան երկարատև ու դաժան տիրապետության ընթացքում խնդրո առարկա գավառը ևս զերծ չմնաց բնակչության բռնի մահմեդականացումից: Իսլամ ընդունեց հայության հատկապես այն հատվածը, որը վրաց գերիշխանության շրջանում դարձել էր քաղքեդոնական[31]: Իսլամացած այդ տարրերը արդեն 17-18-րդ դդ. եկվոր թուրքերի հետ Ախալցխայում, Ադիգենում, ավելի քիչ՝ Ախալքալաքում հայտնի էին ընդհանուր «մեսխեթցի»[32] աշխարհագրական անունով: Այսպես, ըստ վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի, 18-րդ դ. 40-ական թթ. Ախալքալաքի գավառի Բարալեթ և Կոկիա հայտնի բնակավայրերի հիմնական բնակիչները մեսխերն ու հայերն էին[33]: Թեև քրիստոնյաների համեմատությամբ մահմեդականները սակավաթիվ էին, սակայն օտար տիրապետության ավերիչ իրադարձությունները հող էին նախապատրաստում գավառի էթնիկական դիմախեղման համար: Հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 1730-ական թթ. կեսերին Նադիր խանի (հետագայում՝ շահ) արշավանքը: Հյուսիսային Հայաստանից գերված 6000 հայ բնակիչների նա բռնագաղթեցրեց

Պարսկաստան: «...Եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու և զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,- գրում է Աբրահամ Կրետացին,- եւ քշեցին զայր ու զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ՁՌ (6000), որպես և լսեմք»[34]: Այդուհանդերձ, ինչպես երևում է Ղուկաս Ինճիճյանի մի վկայությունից, 18-րդ դարի վերջին Ախալքալաքի գավառը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ երկրամաս: Միայն Ախալքալաք քաղաքում ապրում էին 600 ծուխ հայեր և վրացիներ[35]:

18-րդ դ. վերջին տասնամյակներին Ախալքալաքի գավառը թուրքերից գրավելու փորձեր կատարեցին վրաց թագավորները: 1772 թ. Կախեթի Հերակլ 2-րդ և Իմերեթիայի Սողոմոն թագավորները պաշարեցին Ախալքալաքի բերդը, սակայն հաջողություն չունեցան: 19-րդ դ. սկզբին նրա համար գործուն պայքար ծավալեց իր ազդեցությունն Անդրկովկասում օրեցօր ուժեղացնող Ռուսական կայսրությունը: 1807 թ. ապրիլին ֆելդմարշալ Գուդովիչի զորքերը օղակեցին Ախալքալաքը, սակայն տալով խոշոր կորուստներ, հեռացան: 1810 թ. սեպտեմբերի 5-ին գեներալ Պաուլուչչիի զորագունդը Ախալքալաքի մոտ կարևոր հաղթանակ է տանում թուրքերին օգնության եկած Երևանի Հուսեին Ղուլի խանի զորքերի նկատմամբ, իսկ 1811 թ. դեկտեմբերի 8-ին Կոտլյարևսկու զորաջոկատը, անցնելով Թռեղքի ծյունառատ լեռներով, հանկարծակի ներխուժում է Ջավախք և գրավում Ախալքալաքի բերդը: Բայց 1812 թ. Բուխարեստի հաշտությամբ այն վերադարձվում է Թուրքիային:

1828 թ. հուլիսի 24-ին գեներալ Պասկևիչը սրընթաց գրոհով գրավում է Ախալքալաքը, իսկ 26-ին՝ Խերթվիսի (Խըրթըզի) բերդը: 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրով Ախալքալաքի և Ախալցխայի գավառներն անցնում են Ռուսաստանին: Պատերազմական գործողությունների ընթացքում մեծապես տուժել էին այստեղի հայկական ու վրացական բնակավայրերը. նրանցից շատերն ամայացել էին, իսկ բնակիչներն արտագաղթել էին[36]: Ռուսների կողմից գավառի գրավումը հնարավորություն տվեց տեղական բնակչության մի մասին վերադառնալու և մասնակիորեն վերաշինելու մի քանի բնակավայրեր՝ Հոկամը, Բարալեթը, Կոկիան, Գոնդուրան, Աբուլը, Դիլիսկան, Մաջադիան, Արագովան և այլն: Արդեն պատերազմի վերջում՝ 1829 թ. գավառում հաշվվում էր 1716 (մոտավորապես 10-11 հազար շունչ) հայ, 639 մահմեդական եւ 179 վրացի ընտանիք[37]:

1829 թ. վերջին Արդահանի, իսկ 1830 թ. ամռանը Էրզրումի, Բասենի, Խնուսի, մասամբ Դերջանի գավառներից 58 հազար

հայեր Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ղեկավարությամբ, օգտվելով Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածի ընձեռած հնարավորությունից, հաստատվեցին Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում[38]: Միայն Ախալքալաքի գավառում էրզրումահայերը տեղացիների հետ վերաշինեցին կամ հիմնադրեցին շուրջ 50 գյուղ: 1831 թ. Ախալցխայից եկած մի քանի տասնյակ հայ ընտանիքներ կիսավեր Ախալքալաքի հարավային մասում հիմնադրեցին նոր և ընդարձակ թաղամաս: Այսպես Ջավախքի տեղաբնիկ հայության թիվը համալրվեց արևմտահայերով, որոնք հիմնականում լինելով ավելի ստվար, հավանաբար գլխավորապես արևելահայերենով խոսող տեղացիներին (որոնց կոչում էին եռլի կամ եռլական) պարտադրեցին արևմտահայերենը[39], ինչպես և իրենց կենցաղն ու սովորությունները: 1830-ական թթ. արևմտահայ գաղթականների փոքր մասը, չստանալով ռուսական իշխանությունների խոստացած բարեկեցիկ պայմանները, հեռացավ Արևմտյան Հայաստան[40], իսկ մեծագույն մասը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, մնաց և շենացրեց երկրամասը: Շուտով Ախալցխան և Ախալքալաքը կրկին դարձան Անդրկովկասի էթնիկապես հայահոծ գավառներ, քանի որ տեղի «մեսխեթցիների» մի զգալի զանգվածը, չկամենալով մնալ ռուսական տիրապետության տակ, գաղթեց Թուրքիա: 1831 թ. Ախալքալաքի գավառի հայության թիվն անցավ 30 հազարից, որոնցից, ինչպես վերը նշվեց, 1716 ընտանիք, մոտավորապես 10-13 հազար մարդ, տեղաբնիկներ էին (վերջիններիս մի մասը կաթոլիկներ էին)[41]:

1840 թ. Ախալքալաք գավառը, որ կազմում էր թուրքական նախկին սանջակի հիմնական տարածքը, մտցվեց Վրացահիմերեթական, իսկ 1846 թ.՝ Թիֆլիսի նահանգի մեջ: 1860-ական թթ. այն դարձավ Ախալցխայի ենթագավառը, 1874 թ. վերածվեց ինքնուրույն գավառի: Նույն՝ 1874 թ. Ախալքալաքին տրվում է գավառային 3-րդ, 1890 թ.՝ 2-րդ կարգի քաղաքի կարգավիճակ, 1896 թ. քաղաքային պարզ ինքնավարություն[42]:

1841-1843 թթ. Ռուսաստանի տարբեր մարզերից աքսորված ռուս աղանդավորները՝ դուխոբորները, գավառի հարավային մասում (այժմյան Նինոծմինդայի շրջան) հիմնում են 8-9 գյուղեր: Այսպես Ջավախքը դառնում էր բազմազգ. 1886 թ. գավառում հաշվվում էր 110 գյուղ, որոնք միավորվում էին 10 գյուղական համայնքներում՝ Արագովա (13 գյուղ), Բարալեթ (23), Վարևան (9), Վաչիան (11), Գորելովկա (8), Դիլիսկա (9), Կարծախ (10), Սաթխա (8), Խերթվիս (11), Հեշտիա (8), ընդամենը մոտավորապես 63,8

հազար բնակչությամբ, որից 46386-ը հայեր էին (39150-ը առաքելական, 7236-ը կաթոլիկ), 6674-ը ռուսներ (6597-ը դուխոբորներ), 3735-ը վրացի, 6824-ը մահմեդական, 53-ը հրեա,14-ը եզդի, 102-ը հույն[43]: Բերված տվյալներից ակնհայտ է, որ գավառի բնակչության ճնշող մեծամասնությունը հայերն էին 72,7%: Մահմեդականները 10,7% էին, ռուս դուխոբորները 10,4%, վրացիները՝ 5,8%: Հայերը գերակշռում էին ոչ միայն գյուղերում, այլև Ախալքալաք քաղաքում (1893 թ. քաղաքի 4303 բնակչից 4084-ը հայեր էին)[44]: 19-րդ դարի վերջին նույն 110 գյուղերում և քաղաքում ապրում էր 63799 մարդ, որից 50467-ը՝ հայ[45] (ամբողջ բնակչության 79%-ը):

Ռուսական տիրապետության շրջանում Ախալքալաքի գավառը սոցիալ-տնտեսական և մշակութային զգալի վերելք ապրեց: Ախալքալաքը դարձավ արհեստավորական կենտրոն, իսկ գյուղերը սկսեցին կարևոր դեր խաղալ Անդրկովկասում հացահատիկի արտադրության բնագավառում: 1830-ական թթ. սկզբներին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ Ախալքալաքում բացվեց Մեսրոպյան արական դպրոցը: 1856 թ. բարերար Կարապետ Յաղուբյանի ջանքերով վերաշինվեց Ս. Խաչ եկեղեցին: 1870 թ. սկսեցին գործել Սանդխտյան օրիորդաց, իսկ 1880-ական թթ. սկզբին՝ ռուսական դպրոցները, 1889 թ. քաղաքային ուսումնարանը:

19-րդ դարի վերջին Ախալքալաքում Ջ. Տեր-Գրիգորյանի և Պ. Աբելյանի ջանքերով ստեղծվեց ազատագրական խմբակ: Այստեղ իր գործունեությունը ծավալեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը[46]: Ջավախքը տվեց այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Հովհ. Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Վահան Տերյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Ռուբեն Դարբինյանը և ուրիշներ:

A II 85321

Ծանոթագրություններ

1. Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 46:
2. Նույն տեղում, էջ 110:
3. Տաշիրը հիմնականում համապատասխանում էր խորհրդային Հայաստանի Ստեփանավանի և Կալինինոյի (այժմ Տաշիր) շրջաններին, Թումանյանի շրջանի հարավային մասին, Կողբոփորը՝ Նոյեմբերյանի, Ձորոփորը Թումանյանի մեծ մասին, Վերին Ջավախքը՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի և Բոգդանովկայի /Ինոծմինդա/, Թռեղքը՝ Ցալկայի, Մանգլեացփորը՝ Մանգլիսի, Ցոբոփորը՝ Մառնեուլի, Բողնոփորը՝ Բոլնիսի շրջաններին: Հարավի Կղարջք, Արտահան, Շավշեթ և այլ գավառներ այժմ Թուրքիայի տարածքում են:
4. Ջավախքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1800մ է: Ամենաբարձր գագաթն Աբուլն է՝ 3301 մ: Կլիման խստաշունչ է՝ ձմեռը ցուրտ և երկարատև, ամառը՝ կարճատև ու զով (տարեկան միջին ջերմաստիճանը՝ 4-4,5 աստիճան): Գավառը հարուստ է լճերով՝ Փարվանա, Տաբաձորուրի, Սաղամո, Խոզապիին, Խանչալի, Մադաթափա և այլն: Լեռնադաշտը ծածկված է սևահողերով: Բացի հյուսիսային մասից, Ջավախքն անտառազուրկ է: Փարվանայից սկիզբ է առնում Կուրի աջակողմյան Թափարվան վտակը:
5. 13-14-րդ դդ. պատմիչ Ստ. Օրբելյանն ընդհակառակը՝ երկրի անունից բխեցնում է բնակիչների՝ ջավախուրների անունը: Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Ե., 1986, էջ 303:
6. Կարագեոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք 1, Եր. 1998, էջ 94, 132, 195, 203-204 և Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. Ա., Ուրարտական աղբյուրներ. Ե., 1981, էջ 58, 67:
7. Երեմյան Ս., Ուրարտու պետությունը, քարտեզ. Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ. , հ. Ա, Ե. 1971:

8. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1881, գիրք Բ, գլ. Ը, տե՛ս նաև Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ 1885, էջ 35:

9. Վերին Ջավախքը, որն այժմ համընկնում է Ախալքալաքի և Նինոծմինդայի վարչական շրջաններին, զբաղեցրել է մոտ 2700 քառ. կմ տարածք, իսկ Ներքին Ջավախքը՝ ներկայիս Ասպինձայի՝ պատմական Ասպնջակի շրջանը և Արտահանի հյուսիսային մասը, կազմել է մոտ 1400 քառ. կմ: Տ՛ես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց» ի, էջ 78:

10. Ծունդան հաճախ նույնացվել է այժմյան Ախալքալաքի Սուլդա գյուղի հետ: Ոմանք էլ այն տեղադրել են Կուրի ձորում՝ Նաքալաքև գյուղի տեղում:

11. Ստրաբոն. Օտար աղբյուրները հայերի մասին, հ. 1, Ե. 1940, էջ 54-57, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 196:

12. ქართლის ცხოვრება, ტ. I, თბილისი 1955, გვ. 48–49.

13. Նույն տեղում, էջ 85-86:

14. Պատահական չէ, որ ըստ պատմագիրների, վրաց Միրիան (Միհրան) թագավորը 320-ական թթ. Հայոց Տրդատ Մեծի օրինակով և օժանդակությամբ է քրիստոնեական դարձի բերել վրաց ժողովրդին:

15. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Եր., 1987, էջ 322:

16 Ենթադրվում է, որ Վարձավունիների անունից է ծագել հետագայի Վարձիա քաղաքի (10-13-րդ դդ.) անունը (ներկայիս Ասպինձայի շրջանում):

17. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե. 1987, էջ 282, 294, հմմտ.՝ Ալիշյան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 424-425:

18 Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե. 1989, էջ 114. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 682:

19 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ244:

20 Այժմ Ախալքալաքի հարավում կա Գոգաշեն անունով գյուղ:

21. Սամցխե կամ Մեսխեթ գավառը համապատասխանում է ներկայիս Ախալցխայի և Ադիգենի վարչական շրջաններին:

22. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Եր., 1991, էջ 158:

23 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 136: Վարդան պատմիչի այդ վկայությունից հետևում է, որ հայերը քաղաքը կոչել են ոչ թե վրացական ձևով Ախալքալաք, այլ՝ Նոր քաղաք: փաստորեն նույն միտքը կա նաև Ուռհայեցու մոտ, որը գործածում է միայն Ախալ՝ նոր տեղանունը: Չպետք է մոռանալ, որ Ախալ և քաղաք բառակապակցության մեջ վերջին բառը միայն վրացերեն չէ. քալաքը նաև հայկական քաղաք բառն է:

24 Մարգարյան Հ. Գ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Ե. 1980, էջ 122:

25 Մանր ժամանակագրություններ, հ. 2, Ե. 1956, էջ 502, հմմտ՝. Ստ. Օրբելյան, ժամանակագրութիւն, Ե. 1942, էջ 18-19:

26 Жизнь царицы Тамары, Памятники грузинской исторической литературы, т. V, Тбилиси 1985, с. 37 ,46.

27. Վրաց ժամանակագրություն /1207-1318/, թարգմանությունը հին վրացերենից Պ. Մուրադյանի, Ե. 1971, էջ 66, 73:

28. Ե. Լալայանը 19-րդ դ. վերջին ականատես է եղել այդ ժամանակաշրջանին վերաբերող բազմաթիվ խաչքարերի (Լալայան Ե., երկեր, հ. 1, Եր. 1983, էջ 55): Դրանց մի մասն ուսումնասիրվել է Սամվել Կարապետյանի կողմից, (Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, Եր. 1995): Ծունդայում, Թմբկաբերդում և այլուր հայտնաբերված XIV-XV դարերի հայերն արձանագրություններ ունեցող խաչքարերի մասին աշխատություններ ունի նաև վրաց պատմաբան Լ. Դավլիանիձեն /տ՝ես არტანუჯი, ახალგაზრდა ისტორიკოსთა სამეცნიერო-პოპულარული ჟურნალი, თბილისი 1998, N 7 გვ. 19, 58:

29. Էփրիկյան Ս. , Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ 1902, էջ 62:

30. გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, თბილისი 1941, გვ. 191–243, 275–278.

31 Վրաստանում Հայաստանի անմիջական օժանդակությամբ

քրիստոնեության տարածումից հետո վրաց եկեղեցին ընկավ հայ առաքելական եկեղեցու ազդեցության տակ և փաստորեն կազմեց նրա մի ծյուղը: Սակայն 607-608թթ. վրաց կաթողիկոս Կյուրիոն Սկուտրիեցին, քաղաքական նկատառումներով հասավ հայ-վրացական եկեղեցական պառակտմանը և նախընտրեց հունադավանությունը: Ջավախքի հայերը մնացին առաքելական եկեղեցու ենթակայության տակ և միավորվեցին գավառի Զրեսկ հոգևոր կենտրոնի /այժմ Զրես գյուղ/ շուրջը: Վրաց Բագրատունիների հզորացման շրջանում վրացական եկեղեցին պարտադրեց Սամցխեի, Ջավախքի և պատմական Տայքի հայերի մի մասին ընդունելու քաղքեդոնականություն: 17-րդ դ. հեղինակ Հակոբ Կարնեցու վկայությամբ վերջիններս «ազգաւ և կրօնիւն վրացի /էին-Ա. Մ./, բայց հայի լեզուաւ խօսէին» (Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Ե. 1956, էջ 554):

32. Վրաց պատմաբաններն ու ներկայիս քաղաքական գործիչներն այդ տերմինի մեջ էթնիկական իմաստ են դնում փորձելով մեսխեթցիներին ներկայացնել իբրև զուտ վրացիների:

33 ქართლის ცხოვრება, ტ. IV, თბილისი 1973, გვ. 669–670.

34 Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե. 1973, էջ 67:

35. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 124-127:

36. 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ռուսական զինվորական մարմինները Ջավախքից զգալի թվով քրիստոնյաների վերաբնակեցրին 1801թ. Ռուսաստանին անցած Արևելյան Վրաստանում և Լոռիում (Акты, собранные кавказской археографической коммиссией, т. IV, Тифлис 1870, с. 810, 813, т. V, 1873, с. 18): Մանրամասն XIX դ. I քառորդին Ջավախքում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին տես Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին («Իրան-նամէ», 1998, 1-2-3, էջ 12-16):

37. Տեր-Մինասյան Ռ., Ախալքալաքի պայքարը, «Դրոշակ», Փարիզ 1926, թիվ 1 և «Հայաստան», ՀԱԱԿ պաշտոնաթերթ, 15 մայիսի, 1990թ., էջ 10-11:

38. Արևմտահայ գաղթականության համար Ախալցխայի ու Ախալքալաքի ընտրության հարցը պատահական չէր: Այդ գավառները մինչ այդ ենթարկվում էին էրզրումի հոգևոր թեմին և իրենց բնակլիմայական, աշխարհագրական պայմաններով քաջածանոթ էին թեմի առաջնորդ Կարապետ Բագրատունուն, առավել ևս, որ Ջավախքն իր այդ տվյալներով շատ նման էր էրզրումի գավառներին: Անշուշտ, տեղի ընտրության հարցում կարևոր էր նաև ռուսական իշխանությունների շահագրգռությունը, որոնք գրաված հողերը ցանկանում էին բնակեցնել քրիստոնյա հայերով:

39. Ջավախքի գյուղերից այսօր արևելահայերենով խոսում է միայն Բարալեթը, որի մասին հիշատակում է Վախուշտ պատմիչը: Այն մյուս գյուղերի նման զանգվածաբար չբնակեցվեց էրզրումահայերով և պահպանեց թե՛ իր արևելահայ տեղական բարբառը, և թե՛ տեղաբնիկներին հատուկ սովորությունները: Փաստորեն բարալեթցիների միջոցով այսօր որոշ պատկերացում կարելի է կազմել Ջավախքի տեղաբնիկ հայերի մասին:

40. Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163 ᵃ , վ. 1216, թ. 1, վ. 1223, թ. 1, թղթ. 163 ᵃ , վ. 1331, թ. 1-3, վ. 1403, թ. 1, թղթ. 163 ᵇ , վ. 78, թ. 1, Центральный государственный исторический архив Республики Грузия, ф. 11, д. 418, док. 713, ф. 2, оп. 1, дл . 3396, 4587, 4619.

41. Անտեսելով՝ Ախալքալաքի տեղաբնիկ հայության մասին վերը բերված բազմաթիվ փաստերը (այդ թվում՝ վրացական աղբյուրները)՝ առանձին վրաց պատմաբաններ ու գործիչներ փորձում են այս շրջանում հայերի հայտնվելը կապել հիմնականում 1829-1830թթ. արևմտահայերի ներգաղթի հետ (տե՛ս ლომსაძე შ., სამცხე-ჯავახეთი, თბილისი 1975, გვ. 342-365):

42. Էփրիկյան Ս., Նշվ. աշխ., էջ 63:

43. Ахалкалакский уезд тифлисской губернии. Статистический временник Кавказского края, вып. 2, Т. 1887, с. 18-19.

44. Մելքոնյան Ա., Ախալքալաք (Հայկական համառոտ հանրագիտարան) հ. 1, Ե. 1990, էջ 100:

45. Էփրիկյան Ս., Նշվ. աշխ., էջ 64: 1886թ. համեմատությամբ հայ բնակչության զգալի աճը բարձր ծնելիության և 1894-

96թթ. կոտորածներից փրկված արևմտահայերի այստեղ հաստատվելու արդյունք էր:

46. «Երկիր», 12 նոյեմբերի 1995թ., էջ 5:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱՎԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԷՋԸ (1918- 1921)

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Անդրկովկասի զանազան ազգային-քաղաքական շրջանակներում լուրջ քննարկման խնդիր դարձավ երկրամասի նոր վարչատարածքային բաժանման հարցը, որի անհրաժեշտությունը հայ, վրացի և թաթար (ադրբեջանցի) գործիչները բացատրում էին ցարիզմի կողմից մտցված նահանգային բաժանման մեջ ազգային-տարածքային գործոնի անտեսման հանգամանքով: Այդ քննարկումները վերսկսվեցին 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո: 1917թ. ամռանը վրաց մենշևիկները գտնում էին, որ Անդրկովկասի տարածքային բաժանման հարցում պետք է առաջնորդվել ազգագրական սկզբունքով, այսինքն՝ որտեղ գերակշռում է տվյալ էթնոսը, այդ տարածքը պետք է միացնել տվյալ վարչամիավորին, ընդ որում վիճելի տարածքների խնդրում անհրաժեշտ էր նկատվում հանրաքվեն: Այս ժողովրդավարական դիրքորոշումը ընդունելի էր նաև վրացական այլ կուսակցությունների համար[1]: Նման արդարացի մոտեցումը կիսում էին հայ քաղաքական բոլոր շրջանակները: Այդ սկզբունքի կիրառման դեպքում Թիֆլիսի նահանգի կազմում եղած հայկական և գերազանցապես հայերով բնակեցված Բորչալուի (Լոռու հետ միասին) ու Ախալքալաքի գավառների և Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան հատվածի (Ղարաբաղ և Զանգեզուր) վարչական վերաենթարկման հարցը Երևանի նահանգին, կդառնար անխուսափելի: Նախկին Երևանի նահանգի հետ այդ տարածքները կկազմեին 54 հազ. քառ.կմ՝ 1970 հազ. բնակչությամբ, որից հայեր՝ 1169 հազ., մահմեդականներ՝ 546 հազ., վրացիներ՝ 7 հազ. և այլն[2]:

1917թ. գարնանից Պետրոգրադում իրավաբան Զուրաբ Ավալովի գլխավորությամբ սկսեց գործել հատուկ հանձնաժողով Անդրկովկասի վարչական վերաբաժանման հարցը քննարկելու համար: Այդ հանձնաժողովը որոշում ընդունեց Բորչալուի Լոռու

տարածքի 4/5-ը և Ախալքալաքի գավառը Թիֆլիսի նահանգից հանելու և նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու մասին[3]: Միաժամանակ ընթացան նաև այլ խորհրդակցություններ, որոնցում հայերի շահերը ներկայացնում էին Ալ. Խատիսյանը և Ավ. Շահխաթունյանը[4]: Վերջինս ավելի ուշ հրատարակեց մի աշխատություն[5], որում հիմնավորում էր ազգագրական սկզբունքով Անդրկովկասի վերաբաժանման նպատակահարմարությունը:

1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին վրաց քաղաքական ուժերը, հատկապես ազգային դեմոկրատները, հանդես եկան Թիֆլիսի նահանգից Բորչալուի և Ախալքալաքի գավառները անջատելու դեմ: Ընդ որում, «Թիֆլիսի նահանգ» բառերը նրանք նույնացնում էին վրացական ազգային պետականության հետ: Այսպես 1917թ. քննարկումների արդյունքում վարչական բաժանման հարցը վերածվեց ազգային-տարածքային, պետական սահմանազատման հիմնախնդրի:

1917թ. հետհոկտեմբերյան փուլում վրաց քաղաքական շրջանակներում Ռուսաստանից անջատվելու ձգտման ուժեղացման հետ մեկտեղ, ազգագրական սկզբունքը հետզհետե մոռացության տրվեց: Լոռու ու Ախալքալաքի հարցում գերակշռեց վրացիների անզիջում ու կարծր դիրքորոշումը:

Ախալքալաքի հայությունը 1918թ. սկզբին փորձեց յուրովի լուծել այդ հարցը: Հունվարի 21-ին Ախալքալաքի գավառային գործադիր կոմիտեն որոշում կայացրեց վարչականորեն Ալեքսանդրապոլի գավառին միանալու մասին[6]: Այդ քայլը Հայաստանին միանալու ձգտման յուրօրինակ դրսևորում էր:

1917թ. դեկտեմբերի վերջին և 1918թ. սկզբին, ոգևորված Անդրկովկասից ռուսական բանակի հեռանալու հանգամանքից, թուրքական հրամանատարությունն սկսեց ակտիվորեն նախապատրաստվել հարձակման: Թուրքերի դրդմամբ աշխուժացան Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականները՝ «մեսխեթցիները»: Նրանք հարձակվեցին Ախալցխա քաղաքի վրա, որի հայ և վրացի բնակչության հերոսական ինքնապաշտպանությունը գլխավորեց երիտասարդ գործիչ, քաղաքագլուխ Զորի Զորյանը[7]:

1917թ. վերջին ձևավորվեց Ախալքալաքի Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ Մկրտիչ Մարգարյանը: Խորհուրդը ստեղծեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որը որոշ աշխատանք կատարեց ակտիվացած մեսխեթցիների սանձարձակությունները

զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գավառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար՝ գրելով զինական համագործակցության բազմաթիվ վառ էջեր: Ախալքալաքի գավառի հարավ-արևմտյան մասում՝ Հոկամ, Խավեթ, Էրինջա գյուղերի թուրքերի դեմ հաջողությամբ համատեղ պայքար էին մղում հայկական Գումբուրդո, Կարծախ, Սուլդա, Վաչիան և Կուր գետի ձորում ընկած՝ վրացական գյուղերի բնակիչները: Սակայն 1918թ. մարտ-ապրիլին Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո, Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Ախալքալաքցիները կարողացան փրկել Արդահանի և Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների հիմնականում կանանց ու երեխաների՝ նրանց փոխանակելով Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ[8]:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը փորձեց ռազմական օգնություն ցուցաբերել Ախալքալաքին: Գավառ ուղարկվեց գնդապետ Առաքելովը, տեղում սկսվեց հայկական կորպուսի առանձին գնդի կազմավորման գործը: Ցավոք, ի տարբերություն Ախալցխայի, Ախալքալաքից հեռացած ռուսական կայազորը իր հետ տարավ զինամթերքի մեծ մասը և հնարավոր եղավ զինել գնդին զինվորագրվել ցանկացող 5 հազ. երիտասարդներից միայն 2 հազարին: Անդրկովկասյան սեյմը ոչ մի իրական քայլ չկատարեց թուրքական ներխուժումն Ախալքալաք կանխելու ուղղությամբ: Անպատասխան մնացին ախալքալաքցի հայտնի մտավորականներ, գրող Դերենիկ Դեմիրճյանի և հասարակական գործիչ Պողոս Աբելյանի[9] դիմումները սեյմին՝ հարուստ հացամթերքը թուրքերի ձեռքը չընկնելու համար գավառից նախապես դուրս բերելու վերաբերյալ[10]:

1918թ. մայիսի 7-ին (20) թուրքական զորքերը Չլդրրի կողմից ներխուժեցին Ախալքալաքի գավառ: Տեղի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու վատ զինված ջոկատները Կարծախի մոտ՝ Գյոք Դաղ լեռան շրջանում կարողացան կազմակերպել կարճատև դիմադրություն: Գնդապետ Առաքելովը փոխանակ մեկնելու ճակատ, շարունակում էր ինքնապաշտպանական ուժերի գործողությունները «ղեկավարել» Ախալքալաքից՝ 25-30 կմ հեռավորությունից: Շնորհիվ ռուսական բանակից զորացրված զինվորականներ Լյուդվիգ Դեմիրճյանի, Խորեն Մնոյանի, Զարմայր Խանոյանի, Թիֆլիսից ժամանած Պողոս Աբելյանի, ռուս սպա Ռեզնիկովի խմբերի մղած պաշտպանական ծանր մարտերի,

հնարավոր եղավ ապահովել գավառի բնակչության արտագաղթը[11]: Վրաց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվող վրացական զորաջոկատն առանց մարտի մեջ մտնելու, թողեց ռազմաճակատի գիծը:

Գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը հիմնականում Ծալկա տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Չգաղթեցին միայն թրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Այսպես մինչև մայիսի վերջը արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը[12]:

Գավառ ներխուժած թուրք ասկյարներն ու տեղի մեսխեթցիները թալանեցին գյուղերն ու սրի քաշեցին տեղում մնացած բնակչության մի մասին: Գերի վերցված բնակչության մյուս մասից էլ առանձնացվեցին աշխատունակ հարյուրավոր տղամարդիկ և աքսորվեցին Թուրքիա, իսկ ավելի քան հազար ծեր տղամարդկանց ու կանանց աքսորեցին Բակուրիան՝ գաղթականների ճամբար: Ահավոր աղետի ենթարկվեցին Խորենիա և Թախչա գյուղերի բնակիչները, որոնց զգալի մասը չէր կարողացել գաղթել: Նրանց մեծ մասը արգելափակվեց մարագներում և վայրագորեն ոչնչացվեց[13]:

Թուրքական հրոսակները սպանդ կազմակերպեցին նաև Մեծ Արագյալ, Գումբուրդո, Աբուլ, Բեժանո գյուղերում, Ախալքալաք քաղաքում և այլուր: Կոտորածն ավելի մեծ մասշտաբներ կընդուներ, եթե տեղ-տեղ բնակչությունը չդիմեր ինքնապաշտպանության: Թշնամին հատկապես համառ դիմադրության հանդիպեց Սաթխա գյուղի մատույցներում[14]: Բորժոմի շրջանում տեղակայված վրացական զորքերի հրամանատար գեներալ Արջևանիձեն ոչ միայն ռազմական ու նյութական օգնություն ցույց չտվեց հայ գաղթականներին, այլև զինաթափեց հայ կամավորներին և, ստանալով Վրաց ազգային խորհրդի կարգադրությունը, արգելեց ախալքալաքցի փախստականներին տեղավորվելու Բակուրիանում և Վրաստանի այլ շրջաններում: Վրաստանի խորքերը տեղափոխվելու արտոնություն ստացան միայն վրացի գաղթականները[15]:

Ախալքալաքի զանգվածային գաղթի օրերին կյանքի կոչվեցին Անդրկովկասյան երեք հանրապետությունները: Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30-ի անկախության հռչակագրում իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն: Անշուշտ, «հայկական գավառներ» անորոշ

բառակապակցության ընտրությունը ինքնանպատակ չէր: Նման ձևակերպումով Ազգային խորհուրդը մի կողմից խուսափում էր ռազմաքաղաքական այդ բարդ իրավիճակում օսմանյան թուրքերի և նորաստեղծ հարևան պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից, թեկուզև անորոշ սահմաններով, հայտնում էր իր իրավունքները հայկական այդ տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում վերջինիս տակ կարելի էր նկատի առնել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Ղարաբաղը, և՛ Ջավախքը, և՛ այլ վիճահարույց տարածքներ:

Սակայն ընդամենը մեկ շաբաթ հետո՝ հունիսի 4-ին վրաց մենշևիկները, որոնք Գերմանիայի հովանավորությամբ նախապատրաստել էին Վրաստանի անկախության հռչակումը, Բաթումում Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտության պայմանագրով իրենց իրավունք վերապահեցին գերազանցապես հայերով բնակեցված Ախալցխայի և Ախալքալաքի գավառները հանձնելու թուրքերին: Կարծում ենք, որ նման քայլը թելադրված չէր միայն թուրքերին դիմադրելու անկարողությամբ: Այն նաև հեռու գնացող նպատակ էր հետապնդում: Նախ, ստեղծվում էր տպավորություն, թե նորահռչակ Վրաստանը ևս Հայաստանի նման լուրջ տարածքային զիջումներ է անում ռազմական հաղթանակներ գրանցած Թուրքիային և երկրորդ՝ իր կնքած առաջին միջազգային պայմանագրով արձանագրում է իր իրավունքները այդ գավառների բախտը տնօրինելու հարցում: Պատերազմում Թուրքիայի ռազմական անհաջողության դեպքում Վրաստանը կարող էր նորից վերականգնել իր «օրինական» իրավունքը Ախալցխայի և Ախալքալաքի նկատմամբ: Եվ վերջապես, որ ամենացավալին է, թուրքական բռնազավթումը կարող էր արմատապես փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը. այն է՝ զրկել նրան իր հայկական էթնոնկարագրից: Հետագա դեպքերը բացահայտելու եկան վրաց քաղաքական շրջանակների այդ ազգայնական ծրագրերը:

Կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հարցը՝ արդեն հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները սկսեցին բանակցությունները այդ խնդրի շուրջ: Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և վարչապետ Ն. Ռամիշվիլին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին ի դեմս Ա. Ահարոնյանի, Հ. Քաջազնունու և Ալ.Խատիսյանի, առաջարկեցին Բորչալուի գավառի հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Ախալքալաքի մասին խոսք չկար, քանզի

այն գրավված էր թուրքերի կողմից, թեև, ինչպես նշվեց, վրացիները ապագայում նրա հարցի լուծումը ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Սակայն շուտով սահմանազատման հարցով Հայոց ազգային խորհրդի նշանակած հատուկ հանձնախմբին (Խ.Կարճիկյան, Գ. Խատիսյան և Գ. Ղորղանյան) Ի. Օերեթելին հայտարարեց, որ Վրաստանը ռազմավարական նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից և Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում, վրաց գործիչը հավատացնում էր, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կստեղծվի կյանքի ավելի ապահով վիճակ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի այդ քայլի դեմ բողոքեց Խ. Կարճիկյանը վրաց մենշևիկների նման մոտեցումը բնութագրելով Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ[16]: Սահմանային հարցերով հայ-վրացական խորհրդակցությունները մտան փակուղի և վերսկսվեցին միայն աշնանը, երբ թուրքերը սկսեցին հեռանալ գրավված տարածքներից:

Այդ ընթացքում ախալքալաքցի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս Բակուրիանի ու Բորժոմի բնակավայրերի ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ ետդարձի ուղին դեպի գավառ թուրքերը:

1918թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին իր այդ տմարդի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ[17]: Մինչդեռ հայտնի է, որ հունիս-օգոստոս ամիսներին գաղթականների մեջ դեռ համաճարակային հիվանդություններ չկային: Դրանք հայտնվեցին ավելի ուշ աշնանը: Եթե նույնիսկ այդ պատճառաբանությունն անգամ հիմնավորված լիներ, չէր կարող վրաց իշխանություններին ազատել ախալքալաքցի փախստականների իրենց քաղաքացիների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Նշենք, որ այդ «պարտականության» փոխարեն, գեներալ Արջևանիձեի վերջին ջոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ հնարավորություն ընձեռելով թուրքական հրոսակ-

ներին ավազակային հարձակումներով նորանոր վնասներ հասցնելու գաղթականներին[18]:

Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ թիֆլիսաբնակ ջավախքցիներից կազմակերպվեց «Ախալքալաքի Հայրենյաց (Հայրենակցական - Ա.Մ.) միությունը», որի վարչության մեջ մտան 10 հոգի, այդ թվում ճանաչված հասարակական գործիչներ Պողոս Աբելյանը (քարտուղար), Բ.Օհանջանյանը (նախագահ), Գր. Պապոյանը (տեղակալ), Հովհաննես Մալխասյանը, Ջալալ Տեր-Գրիգորյանը, Կարապետ Շահպարոնյանը[19]: Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը և կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար: Ախալցխա թուրքական հրամանատարության մոտ ժամանած ախալքալաքցի գաղթականների պատվիրակության խնդրանքը՝ իրենց հայրենի գավառ վերադառնալու թույլտվություն ստանալու վերաբերյալ, կտրականապես մերժվեց: Թուրքերը, չթաքցնելով Ախալքալաքի գավառը կայսրությանը վերադարձնելու իրենց պլանները, հայտնեցին, որ հայկական գյուղերն արդեն բնակեցված են Թուրքիայից բերված մահմեդական վերաբնակիչներով: Ուշագրավ է, որ Ախալքալաքը հայաթափելու և այն Թուրքիային բռնակցելու իրենց հայակուլ ծրագրերում երիտթուրքերն այնքան հետևողական էին, որ ախալքալաքցի գաղթականներին հայրենի գավառ վերադառնալու խնդրում անդրդվելի մնացին ոչ միայն հայկական տարբեր կազմակերպությունների, օտարերկրյա բարեգործական հաստատությունների, այլև դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսի միջնորդությունների նկատմամբ[20]:

Այսպիսով, և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման:

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության (միության) նորանոր բողոք-դիմումներին կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոնման մասին, հոկտեմբերի 4-ին վրաց կառավարության գրասենյակի պետ Կոժուխովը Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ պատասխանեց. քանի որ Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, վրաց իշխանությունները առաջարկում

են ամենակարճ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն:

Գաղթականական խորհրդի նախագահ, հայ ժողովրդական կուսակցության ղեկավար Սամսոն Հարությունյանի նախաձեռնությամբ հրավիրվեց շտապ խորհրդակցություն[21], որին մասնակցեցին նաև Վիրահայոց ազգային խորհրդի նախագահության անդամները: Ախալքալաքցիների կողմից նիստին հրավիրված Պողոս Աբելյանը հայտնեց, որ ինքը թուրքական առաքելության նախագահ Աբդուլ Քերիմից տեղեկացել է, որ թուրքերը հեռանալու են Ախալքալաքից և դեմ չեն հայերի վերադարձին գավառ, առավել ևս, որ Կ.Պոլսում հայոց պատվիրակությունը (նախագահ Ավ. Ահարոնյան) իր կառավարության հետ այդ հարցում ձեռք է բերել համաձայնություն: Պահանջվեց Կուժուխովից թուրքական մերժման պատճենը: Պատասխան չստացվեց: Ակնհայտ դարձավ, որ Վրաստանի կառավարությունը, մեղքը բարդելով թուրքերի վրա, չէր կամենում թույլատրել հայերի վերադարձը: Այսպես արհեստականորեն սովահարությունը հրահրվում էր[22]:Գաղթականության վիճակը դառնում էր օրհասական. սկսվել էին ցրտերը, անձրևները, սպառվում էր անասնագլխաքանակը: Վրացական իշխանությունները թույլատրեցին Քութայիսից, Գորիից, Բորժոմից եկած հարյուրավոր ավազակների ու սպեկուլյանտների չնչին գներով գաղթականներից գնելու, առանձին դեպքերում էլ՝ վրացական միլիցիայի օգնությամբ խլելու տասնյակ հազարավոր գլուխ անասուններ: Այս հատուկ քաղաքականության շնորհիվ Վրաստանի կառավարությունը լուծեց իր բնակչության պարենային խնդիրները:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի, Հայաստանի ներկայացուցիչ Ա.Ջամալյանի ուսերի վրա: Հայաստանի անունից Ազգային խորհուրդը նշանակեց մշտական ներկայացուցիչներ՝ Արշակ Թորոսյանին Բակուրիանում, Արարատ Տեր-Գրիգորյանին Ծալկայում[23]: Գաղթականներն էլ իրենց կողմից լիազոր նշանակեցին Մեսրոպ քահանա Մելեյանին: Ինչպես վերջիններս, այնպես էլ հայկական ամերիկյան զանազան կազմակերպություններ, անհատներ որոշակի աշխատանք կատարեցին գաղթականությանն օգնելու համար: Սակայն գաղթականության

զանգվածն այնքան մեծ էր՝ 80-85 հազ. մարդ, որ կատարված աշխատանքը չէր կարող լինել շոշափելի:

Մինչև 1918թ. դեկտեմբերը բծավոր տիֆն ու խոլերան սկսեցին հնձել գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան աճող է գնում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»[24]:

1918թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի[25]:

1918թ. նոյեմբերից, հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները, հաճախ շրջանցիկ ճանապարհներով, գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանից Ախալքալաք անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին[26]:

Վերադարձող գաղթականներից կազմված փոքրաթիվ զինված խմբերը, թուրքերի դուրս գալուց հետո, փորձեցին կարգ ու կանոն հաստատել Ախալքալաքում: Ալեքսանդրապոլի գավառին հարող լճերի (Մադաթափա, Փարվանա, Սաղամո) շրջանը վերցվեց զինվորական հսկողության տակ:

Սակայն նոյեմբերի 29-ին Երևանում Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին հայտարարեց, որ հայ-վրացական սահմանագիծը իր կառավարության կարծիքով պետք է անցնի նախկին Թիֆլիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնելու են Վրաստանի կազմի մեջ:

Այս հայտարարությունից մեկ շաբաթ չանցած՝ դեկտեմբերի 5-ին վրացական կառավարությունը, որ մինչև այդ հոկտեմբեր-նոյեմբերին բռնազավթել էր Լոռին, զորավար Մակաևի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զորք մտցրեց նաև Ախալքալաք: Տեղի հայկական ուժերը զինաթափվեցին, իսկ Հայաստանից ժամանած փոքրաթիվ հայկական զորամասը, հայ-վրացական բախումից խուսափելու համար, ստիպված դուրս եկավ Եֆրեմով-

կա-Տրոյիցկոյե գյուղերի շրջանից, որը գրավել էր թուրքերի հեռանալուց հետո[27]:

Քաջազնունու կառավարությունը, որ այդ խնդրում խորհրդարանի կողմից ստացել էր ազատ գործելու իրավունք, քանիցս բողոքեց Լոռու և Ախալքալաքի զավթման կապակցությամբ: Սակայն վրացիները մնացին անդրդվելի: Այսպես դեկտեմբերի կեսերին ծագեց հայ-վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը: Վիճելի այդ տարածքներից հեռանալուց առաջ նրանք միաժամանակ, և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի կառավարություններին հայտարարել էին գավառները նրանց հանձնելու մասին:

Հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11-12-ին հայկական դիվիզիայի 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մնած վրացական զորքերի հետ ընդհարումից հետո, հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին հյուսիս[28]:

Պատերազմի ընթացքում վրացիները Թիֆլիսում իսկական մարդաորս սկսեցին հայերի նկատմամբ: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս[29]:

Հայ-վրացական թեժ մարտերի օրերին Անտանտի ներկայացուցիչները հաշտության եզրեր էին փնտրում: Դեկտեմբերի 25-ին անգլիական զինվորական Ռայկրոֆը, ֆրանսիացի գնդապետ Շարդինեն Ն.Ժորդանիայի հետ ստորագրեցին մի համաձայնագիր: Այն նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում, Ջալալօղլի-Դսեղ գծից հյուսիս ընկած տարածքում վրացական, իսկ դրանից հարավ մնացող շրջանում՝ հայկական զորքերի տեղակայում: Ախալքալաքում հաստատվելու էր վրացական վարչակարգ՝ դաշնակից երկրների հսկողությամբ: Վարչակազմի մեջ ընդգրկվելու էին տեղի հայ և մահմեդական ներկայացուցիչներ[30]:

Այս համաձայնության տակ Հայաստանի կողմից առաջարկվեց ստորագրել Արշակ Ջամալյանին: Վերջինս կտրականապես հրաժարվեց՝ առարկելով Ախալքալաքին վերաբերող ձևակերպմանը: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալ նախադասությունը. «Պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավելու կետին»: Փաստորեն դաշնակիցները հաշվի չնստելով հայկական կողմի

կարծիքի հետ, այդ միակողմանի համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ:

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31-ին հայ-վրացական ընդհարումը դադարեցվեց անգլիացիների միջնորդությամբ: 1919թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում կայացած հաշտության կոնֆերանսը վճռեց Լոռին հռչակել Զեզոք գոտի, իսկ Ախալքալաքի հարցը մնաց առկախ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը: Հայ-վրացական հարաբերությունների լարվածությունը հետզհետե տեղի տվեց:

Մինչև 1919թ. մարտ ամիսը հայրենի գավառ վերադարձան նաև ախալքալաքցի գաղթականների մնացած բեկորները: Գավառը լիովին թալանված էր, հացահատիկը տարվել էր Թուրքիա: Բարվոք վիճակում էին միայն թրքախոս հայ կաթոլիկների և ռուս դուխոբորների գյուղերը: Ի դեպ, նրանք զգալի օգնություն ցույց տվեցին գաղթականներին ցանքս կազմակերպելու, բնակավայրերը վերականգնելու գործում:

Արդեն հունիսին Հայաստանի կառավարությունը կարողացավ երկաթուղով ստացվող հացահատիկից բաժին հանել ախալքալաքցի սովյալներին: Ստացվող հացահատիկից Ախալքալաքի գավառին բաժին հանելու գործը դրվեց պետական մակարդակի վրա: Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունում ստեղծվեց հատուկ հաստիք խնամատարության գծով, որը զբաղեցրեց Դ. Դավիթխանյանը: Միայն մայիսի սկզբին Հայաստանը Ախալքալաքի սովյալներին հատկացրեց 3 մլն. ռուբլու նպաստ և 74 մլն. ռուբ. սերմացու գնելու համար[31]:

Այդուհանդերձ, Զավախքի տնտեսական իրավիճակը չբարելավվեց: Վրաց իշխանությունները ծանր մաքսեր սահմանեցին ոչ միայն Հայաստան ներմուծվող, այլև Ախալքալաք ուղարկվող այն հացահատիկի վրա, որից մասնաբաժին էր հանվում և՛ հայ, և՛ վրացի գաղթականներին:

Խիստ պակասել էր անասնագլխաքանակը: 1918թ. վերջին սկսված սառնամանիքների պատճառով թուրքերը չէին կարողացել իրենց հետ տանել գավառում եղած բոլոր անասուններն ու շարժական գույքը: Պողոս Աբելյանը դիմեց Ախալքալաքում գեներալ-նահանգապետ նշանակված Մակահին՝ խնդրելով այդ մնացած գույքը հանձնել գաղթականությանը: Սակայն Մակահը մերժեց նրա խնդրանքը: Ցավոք, Վիրահայոց ազգային խորհուրդը, որը հատկապես հայ-վրացական պատերազմի շրջանից դարձել էր շատ

անդեմ մի մարմին, ինչպես այս, այնպես էլ ներկա խնդրում չաջակցեց Պ. Աբելյանի և հայրենասեր այլ գործիչների նման-օրինակ ձեռնարկումներին:

Գեներալ-նահանգապետ Մակաևը զինաթափեց հայ բնակչությանը, Իմերեթիայից և Թիֆլիսից բերված վրացական միլիցիայի միջոցով հաստատեց խստագույն ռեժիմ: Ընդ որում վրացիներն ու մեսխեթցի թուրքերը չզրկվեցին զենք կրելու իրավունքից: Հայերից զենք կարող էին ստանալ միայն նրանք, ովքեր «կամովին», բայց իրականում բռնությամբ զորակոչվում էին վրացական բանակ՝ անհնազանդ Աբխազիայի և Աջարիայի դեմ կռվելու համար:

Սկսվեց Ջավախքը վրացիներով «գաղութացնելու» քաղաքականությունը: Մինչև 1920թ. վերջը պետության հովանավորությամբ Ախալքալաքի գավառ փոխադրվեցին մի քանի հարյուր ընտանիք իմերեթցի վերաբնակիչներ[32]: Տեղի վրաց վարչությունը գավառի հյուսիսում և արևելքում ընկած արոտատեղիների մի զգալի մասը խլեց հայերից և հանձնեց թուշերին: Տարբեր մեքենայությունների շնորհիվ մի շարք գյուղեր զրկվեցին իրենց վարելահողերից: Ոտնձգություններ եղան Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցուն պատկանող Կարծախ, Դադեշ, Սուլդա և այլ գյուղերի հողատարածքների նկատմամբ: Վրաց կառավարությունը կանգ չառավ նաև այնպիսի մի միջոցի առջև, ինչպիսին ազգաձուլումն էր: Սկսվեց մի արշավ կաթոլիկ հայերին «վրացացնելու» ուղղությամբ[33]:

Անշուշտ, Ջավախքի նկատմամբ մենշևիկների վարած այդ շովինիստական քաղաքականությունը աննկատ չէր մնում Հայաստանում: Սակայն հայկական կառավարությունը, ինչ-ինչ նկատառումներով, հարկ էր համարում 1919թ. բավարարվել միայն իր հացահատիկից Ախալքալաքին մասնաբաժին հանելով և Վրաստանի հետ վարվող բանակցություններում սահմանների հարցի լուծումը ձգձգելով՝ մինչև Փարիզի վեհաժողովում ցանկալի արդյունքների ձեռքբերումը: Ռուբեն Տեր-Մինասյանն այդ մասին գրում էր. «Անարդար էին Վրաստանի դիտումները Հայաստանի վերաբերմամբ, անարդար էր, որ նա Ախալքալաք զուտ հայաբնակ գավառը խլած էր մեզնից, թեև թե՛ աշխարհագրական, թե ազգագրական տեսակետով այդ գավառը Հայաստանին կպատկաներ: Անարդար էր նաև Լոռիի վերաբերմամբ նրա ձգտումը... Չնայած այդ վրդովեցուցիչ դրության, Բյուրոն այն կարծիքն ուներ, որ պիտի համբերել և զիջել վրացիներին, ինչքան

որ կարելի է»[34]: Բայց Ռուբենն ու հանրապետության մյուս ղեկավարները պարտավոր էին նկատել, որ որքան հայկական կողմը զիջող էր դառնում, այնքան Ախալքալաքի ու Լոռու հարցում վրացիներն ավելի պահանջատեր էին ներկայանում:

1919թ. սեպտեմբերի 17-ին Թիֆլիսում բացվեց հայ-վրացական նոր խորհրդաժողով: Վրաստանը ներկայացնում էին Ն. Ռամիշվիլին և Ս. Մդիվանին, Հայաստանը՝ Ստ. Մամիկոնյանը և Ս. Խաչատրյանը: Վրացիները, հավանաբար վախենալով Լոռու Զեզոք գոտուց անգլիացիների դուրսբերման պատճառով հայ-վրացական նոր կոնֆլիկտի ծագման հավանականությունից, առաջարկեցին սահմանների «փոխզիջումային» տարբերակ. Հայաստանին թողնել Աքորի գյուղից հարավ ընկած տարածքները, Լոռու դաշտը (Ջալալօղլի-Վորոնցովկա), իսկ Վրաստանին՝ այդ գծից հյուսիս ընկած հողերը և Ախալքալաքի գավառը: Ընդ որում, նրանք այս «զիջումը» դիտում էին ժամանակավոր՝ մինչև Փարիզի վեհաժողովի որոշմամբ արևմտահայ գավառների միացումը Հայաստանին:

Հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ իր կառավարությունից լիազորված է հօգուտ Վրաստանի զիջելու Խրամի (Ծալկա) շրջանը, Ախալքալաքի գավառի հյուսիսային և կենտրոնական մասը: Ջավախքի հարավային մասը՝ լճերի շրջանը՝ Հեշտիա-Սաթխա-Հոկամ-Ազմանա գյուղերով՝ մինչև Կուր գետը մնալու էր Հայաստանին: Լոռիով, ըստ հայկական նախագծի, սահմանը պետք է անցներ Կողբից հյուսիս՝ Լալվար գծով: Թեև կողմերից ոչ մեկին չբավարարեց մյուսի նախագիծը և գրավոր համաձայնություն ձեռք չբերվեց, սակայն այն, որ հայկական կողմը հայտնել էր Ախալքալաքի մեծ մասը և ամբողջ Ծալկան զիջելու պատրաստակամություն, Վրաստանը համաձայնեց Հայաստանին տրամադրել տարանցիկ առևտրի, հեռագրագծի և այլ արտոնություններ: Հատկանշական է, որ «զիջելու պատրաստակամությունը» Վրաստանը ընկալեց հենց զիջում և Ջավախքի նկատմամբ իրեն վերագրեց ազատ տնօրինության իրավունք: «Վրացիները օգտվեցին մեր ինկած վիճակից,- գրում է Ռուբենը,- և շահագործեցին այդքան խիստ կերպով իրենց աշխարհագրական դիրքը՝ մեր ժողովրդյան թե՛ արժանապատվությունը, և թե՛ կենսական արդար իրավունքները ոտնահարելով»[35]:

Թիֆլիսում սահմանների հարցով խորհրդակցությունները շարունակվեցին: Ստ. Մամիկոնյանն ու Ս. Խաչատրյանը մնացին այնտեղ և, ինչպես այդ օրերին պատկերավոր ասում էին,

վրացիների հետ շարունակեցին սահմանների շուրջ անպտուղ «բազարի» քաղաքականությունը, որից դժգոհ էին և վրաց, և հայոց պաշտոնական շրջանակները: 1919 թվականից Հայաստանի կառավարությունը, համոզվելով, որ անիմաստ է վիճելի տարածքների խնդրում Վրաստանից ակնկալել փոխզիջում, աշխատեց հարցը վերջնականապես տեղափոխել Փարիզի վեհաժողով[36]:

1919թ. բանակցությունների արդյունքում ձեռք բերված դրական արդյունքներից կարելի է թերևս նշել 1919թ. նոյեմբերի 14-ի հայ-վրացական համաձայնագիրը, ըստ որի կողմերի միջև գոյություն ունեցող և ապագայում ծագելիք վեճերը պետք է լուծվեին քաղաքական ճանապարհով կամ չեզոք արբիտրաժի միջոցով:[37]

1920թ. մայիսի 7-ին կնքվեց ռուս-վրացական պայմանագիր փոխադարձ ճանաչման մասին: Համաձայնագրում վրացական կողմի պնդմամբ մտցվեցին կետեր Ռուսաստանի կողմից Լոռու, Ախալքալաքի և Զաքաթալայի նկատմամբ Վրաստանի իրավունքները ճանաչելու մասին: Այդ կապակցությամբ վարչապետ Հ. Օհանջանյանը բողոքի հեռագրեր հղեց ՌԽՖՍՀ և Վրաստանի կառավարություններին՝ հայտնելով, որ Լոռին ու Ախալքալաքը Վրաստանի մաս դիտելով վրացական իշխանությունները խախտում են 1919թ. ձեռք բերված հայ-վրացական համաձայնագրերը այդ տարածքները վիճելի համարելու վերաբերյալ[38]:

1920թ. հուլիսի 5-ին ընդունված Հայաստանի քաղաքացիության օրենքը, որը փաստորեն հանրապետության տարածքից դուրս ապրող հայերին ևս արտոնում էր քաղաքացիության իրավունք, վրացիների կողմից դժգոհությունների և ավելի շուտ, դեմագոգիկ խաղերի տեղիք տվեց հուլիս-օգոստոսին ընթացող հայ-վրացական հերթական խորհրդաժողովում: Նրանք դեմ էին Վրաստանի հայերին Հայաստանի քաղաքացիություն շնորհելուն կամ այդ դեպքում, առաջարկում էին նրանց տեղափոխել Հայաստան: Այս խորհրդաժողովում արդեն վրաց պատվիրակությունը հայերից պահանջեց Ախալքալաքի գավառն ամբողջությամբ լճերի շրջանի հետ, իսկ Լոռին մինչև Սանահին կայարան, Արդահանի ու Օլթիի գավառների մեծ մասը: Հայկական կողմը մերժեց այդ պահանջը:

Չկարողանալով լուծում տալ սահմանային վեճերին հայկական և վրացական պատվիրակությունները դիմեցին Անտանտի երկրների օգնությանը: Պատահական չէ, որ 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրում մտցվեց հատուկ հոդված, ըստ որի անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման խնդիրը

պետք է լուծվեր կողմերի ներկայացուցիչներից բաղկացած շահագրգիռ հանձնաժողովի ջանքերով, իսկ չլուծվելու դեպքում, այն մնալու էր դաշնակից երկրների հայեցողությանը:

1920թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի[39] օրերին Հայաստանի կառավարությունը, տեղյակ լինելով թուրք-վրացական գաղտնի կապերին[40], ստիպված եղավ սահմանների հարցում զիջումներ կատարելու Վրաստանին: Նոյեմբերի 13-ին վրացիները զորք մտցրեցին Լոռու Չեզոք գոտի և Արդահան:

1921թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվեց նոր արհավիրքի՝ քեմալական թուրքերի հարձակմանը: Ներխուժելով Ջավախք՝ թուրքերը փաստորեն խախտում էին թուրք-վրացական գաղտնի համաձայնագիրը Վրաստանի տարածք (որպիսին այդ ժամանակ համարվում էր Ախալքալաքը) չմտնելու վերաբերյալ: Հիմքեր կան ենթադրելու, որ անկախ Վրաստանի կառավարությունն իր անկման նախօրյակին, քաղաքական նկատառումներով թուրքերին Ախալքալաքի գավառ մտնելու արտոնություն էր տվել՝ նախապես նորից զինաթափելով հայ բնակչությանը[41]:

Թուրքաբնակ Հոկամ գյուղի մոլլա Բայրամի և Ջամալ աղայի ուղեկցությամբ Ղումանտար փաշայի զորքն ու թուրքական խուժանը շարժվեցին գավառի հարավային գյուղերի՝ Կարծախի, Սուլդայի, Դադեշի և Գումբուրդոյի վրա: Բազմաթիվ գումբուրդոցիներ, այդ թվում՝ կանայք, ընկան անհավասար մարտում: Թուրքերը Գումբուրդոյում գերի վերցրեցին հարյուրավոր տղամարդկանց, մի մասին սպանեցին Կուրի ձորում, մյուսներին, լցնելով ջրհորները, խեղդամահ արեցին: Կոտորածներ եղան նաև գավառի այլ գյուղերում: Այս անգամ գավառի բնակչությունը չգաղթեց: Թուրքերը հանդիպեցին համառ դիմադրության Ալաստան, Մոլիտ, Տաբաձղուրի և այլ գյուղերի մատույցներում[42]:

1918 և 1921թթ. թուրքական արշավանքների, սովի ու համաճարակների հետևանքով Ախալքալաքի գավառը կորցրեց իր հայ բնակչության 42-45 %-ը: Այսպես օրինակ. եթե Ախալքալաք քաղաքը 1917թ. ուներ 5070 , ապա 1922թ . միայն 2737 բնակիչ[43]:

1921թ. մարտի երկրորդ կեսին Ախալքալաք մտան 11-րդ կարմիր բանակի զորքերը: Եթե կարմիր բանակը Լոռի անցավ Հայաստանից, ապա Ախալքալաք մտավ Վրաստանից՝ Բորժոմ-Ախալցխա երթուղով[44], հանգամանք, որը քիչ դեր չխաղաց հետագայում նրա պատկանելության հարցի վճռման տեսանկյունից:

Թուրքական զորքի հեռանալուց հետո ավելի հաճախակի դարձան ջավախքցիների դիմում-խնդրագրերը ուղղված Խորհրդային Հայաստանի, Վրաստանի հեղկոմներին, կարմիր բանակի ղեկավարությանը, ինչպես և զանազան այլ ատյանների՝ գավառը Խորհրդային Հայաստանին կամ Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Նրանցից մեկում, գրված ապրիլի 23-ին, Սուլդա, Մրագովալ, Դադեշ, Վաչիան, Կարզախ գյուղերի ներկայացուցիչները Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին հայտնում էին. «Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80000 բնակչությունից 60000-ից ավելին հայեր են, ...միացնեք Հայաստանի Հանրապետության: ...Եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից, ևս առավել, եթե մեր երկիրը չդառնա Սովետական Ռուսաստանի մասը և մեր գլխից չվերանա թուրքական-յաթաղանը, մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը...»[45]:

1921թ. գարնանից Անդրկովկասի նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև բազմաթիվ վիճելի տարածքների թվում դրվեց նաև Ախալքալաքի ու նրան հարակից Խրամի (Ծալկայի) շրջանների լուծման հարցը: Այդ խնդիրների համար 1921թ. մայիսի 2-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կավբյուրոյի ստեղծած հատուկ հանձնաժողովը հունիսի 25-27-ին Թիֆլիսում հրավիրեց իր անդրանիկ նիստը՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի 2, Ադրբեջանը՝ 3, Հայաստանը՝ 1 անդամ (Ալ. Բեկզադյան): Առաջին իսկ նիստում Բեկզադյանը, նշելով ցարիզմի կողմից անցկացված վարչական բաժանման անարդարացիությունը և Խորհրդային Հայաստանի ծանր վիճակը, խնդրեց հանձնաժողովի անդամներին հայկական հոծ բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը (72 %-ը՝ հայեր), Լոռին և Լեռնային Ղարաբաղը (94 %-ը հայեր) զիջել Հայաստանին: Սակայն նա միայնակ մնաց հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի մեծամասնության հանդեպ (վերջիններիս միացավ Կիրովը), որոնք Վրաստանում և Ադրբեջանում հակահեղափոխական տարրերի աշխուժացման համար հող չստեղծելու պատրվակով, մերժեցին տարածքային փոփոխությունների մասին Բեկզադյանի առաջարկը: Վերջինս պահանջեց հարցի վերջնական լուծումը տեղափոխել ՌԿ/բ/Կ կենտկոմի Կավբյուրո[46]:

Հայաստանի ղեկավարությունը մասնագետների և գիտակ մարդկանց հանձնարարեց վիճելի տարածքների վերաբերյալ

կազմել տեղեկանքներ: Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ա. Մռավյանի հանձնարարությամբ Պողոս Աբելյանը 1921թ. հուլիսին Ախալքալաքի մասին ներկայացրեց մի ընդարձակ փաստաթուղթ[47], որտեղ պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական և տնտեսական հայեցակետերից հանգամանորեն հիմնավորում էր Ախալքալաքը Հայաստանին միավորելու հայ ժողովրդի արդարացի ձգտումը[48]. «Ջավախքի հայությունը,- գրում էր այդ զեկուցագրում Աբելյանը,- մենշևիկյան կառավարությանը տաճկականից վատ է համարում: Նրա աչքը այնպես է վախեցել, որ ոչ մի վրացական կառավարություն չի ուզում...: Այս է ճշմարտությունը: Ախալքալաքցին ուզում է, որ Ախալքալաքը լինի իսկական, թուրքի հարձակման համար հավիտյան անմատչելի՝ Ռուսաստան. եթե այդ էլ չեղավ, նա ուզում է իր բախտը կապել Հայաստանի հետ, և նա այժմ ուզում է միանալ Սովետական Հայաստանին»[49]: Աբելյանը անընդունելի էր համարում որևէ ինքնավարություն: Նա համոզված ասում էր, որ Ջավախքը Ծալկայի հետ ծայրահեղ դեպքում պետք է ունենա ինքնավարություն Հայաստանի հովանավորությամբ[50]:

1921թ. հուլիսի 7-ին ՌԿ/բ/Կ Կավբյուրոյի պլենումը Ի. Ստալինի մասնակցությամբ քննարկեց Հայկական և Վրացական ԽՍՀ-ների միջև վիճելի համարվող Լոռվա և Ախալքալաքի գավառների հարցերը: Ջայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու Չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) շրջանները Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը, տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացությունը ներկայացնել Կավբյուրոյի պլենումի քննարկման[51]: Դժվար չէ կռահել, որ վրաց բոլշևիկների հայեցողությանը թողնված հայկական կողմի պահանջը կմերժվեր: Եվ իրոք, հուլիսի 16-ին Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը՝ իր որոշումը հիմնավորելով Թիֆլիսի հետ այդ գավառների տնտեսական կապվածության շինծու և անհամոզիչ պատճառաբանությամբ և ինչ-ինչ «քաղաքական նկատառումներով»[52]: «Ջարմանալի» զուգադիպությամբ, ճիշտ նույնպիսի «փաստարկներով» մի քանի օր առաջ, Կավբյուրոյի հուլիսի 5-ի որոշմամբ Հայաստանից անջատվել և Ադրբեջանին էր տրվել հայկական մեկ այլ երկրամաս՝ Լեռնային Ղարաբաղը: 1921թ. հուլիսին վրաց-ադրբեջանական համերաշխությունն ընդդեմ Հայաստանի ակնհայտ էր: Պատմական Ջավախքը այսպես տրվեց Վրաստանին:

1918-1921թթ. հայրենիքի հետ Ջավախքի միավորման խնդիրը մնաց չլուծված հիմնականում հետևյալ պատճառներով: Հայաստանի Հանրապետությունը, առաջնային համարելով Արևմտյան Հայաստանի միացման խնդիրը, անհրաժեշտ ջանադրություն հանդես չբերեց Անդրկովկասում Վրաստանի ու Ադրբեջանի բռնազավթած հայկական տարածքների հարցում: 1918 և 1921թթ. թուրքական ներխուժումների հետևանքով Ջավախքի հայ բնակչության մոտ կեսը՝ ավելի քան 40 հազ. մարդ զոհվեց, գավառը հասավ տնտեսական լիակատար անկման, հանգամանքներ, որոնք խոչընդոտեցին հայրենիքի հետ միավորվելու ուղղությամբ հայ բնակչության մղած պայքարի ծավալմանը: Անշուշտ, իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև վրաց կառավարության կոշտ դիրքորոշումը, Անգլիայի երկդիմի քաղաքականությունը, 1920թ. թուրք-հայկական պատերազմը, 1921թ. փետրվարի վերջին՝ Վրաստանի խորհրդայնացման շրջանում քեմալականների կողմից ինչպես Ջավախքի, այնպես էլ նրա հարևան Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթված վիճակը և այլն[53]:

1921թ. հուլիսի կեսերին ջավախահայությունը, իրազեկ դառնալով Կավբյուրոյի և Վրաստանի կոմկուսի վերոհիշյալ որոշումներին, բազմաթիվ նամակ-բողոքներ հղեց Մոսկվա, Թիֆլիս, Երևան: Վրաց հեղկոմը կարծես հատուկ ավելի շիկացրեց մթնոլորտը: Ախալքալաքի հեղկոմի նախագահի պաշտոնից ազատվեց հայտնի բոլշևիկ և կարմիրբանակային, ախալքալաքցիների շրջանում մեծ հեղինակություն վայելող Առուստամովը: Նրան պաշտոնում վերականգնելու ախալքալաքցիների բողոքները մնացին անհետևանք, և «Ընկ. Առուստամովը,- գրում էին այդ օրերին Վրաստանում հայկական առաքելությանը ջավախեցիները,- ստիպված հեռացավ Ախալքալաքից՝ ժողովրդյան ամենաանկեղծ ցույցերի տարափի տակ»[54]: Շուտով գավառի միլիցիայի պետ նշանակվեց ժողովրդին ատելի Ս. Նադիրաձեն՝ մենշևիկյան տիրապետության շրջանում հատուկ պատժիչ ջոկատի ղեկավարներից մեկը: Երբ ժողովրդի ճնշման տակ տեղի հեղկոմը նրան ազատեց պաշտոնից, Թիֆլիսի վրաց բոլշևիկները, Նադիրաձեին օժտելով ավելի լայն լիազորություններով, վերադարձրեցին Ախալքալաք: Ժողովրդի նոր բողոքներին հետևեց հատուկ հանձնաժողովի ժամանումը: Հանձնաժողովի որոշմամբ ձերբակալվեցին մի խումբ մարդիկ, այդ թվում գավառում հայտնի հայ բոլշևիկ, հեղկոմի անդամ Մնոյանը և ուղարկվեցին Թիֆլիս՝ Չեկա (Արտակարգ հանձնաժողով): Մեկ ամիս անց Ախալքալաք ժամանեց նոր ար-

տակարգ հանձնաժողով, որը «ազգայնամոլ» գործունեության մեղադրանքով այս անգամ էլ ձերբակալեց ու Թիֆլիս ուղարկեց գավառում խորհրդային իշխանության հաստատման համար շարժման ակտիվիստ, Ախալքալաքի հեղկոմի հիմնադիր անդամներից մեկին՝ Կարապետ Ղազանջյանին: Ուշագրավ է, որ վերջինս 1921թ. փետրվարին, լինելով 11-րդ կարմիր բանակի վաշտերից մեկի հրամանատար, աչքի էր ընկել վրաց մենշևիկներից Լոռու ազատագրման համար մղված մարտերում:

Հայ կոմունիստների կադրային ջարդին զուգընթաց 1921թ. ապրիլ-հուլիսին իրականացվեցին հայ գյուղացիությանը ունեզրկելու միջոցառումներ: Ամեն կերպ սիրաշահվում էր տեղի թուրք բնակչությունը, որն ակտիվորեն մասնակցել էր հայերի կոտորածներին ու թալանին և խիստ հարստացել թուրքական երկու արշավանքների ժամանակ հայերից թալանված ունեցվածքի հաշվին[55]:

Այսպես, թուրքական երկու արշավանքների շրջանում տասնյակ հազարավոր զոհեր տված, վրացական տիրապետության շրջանում զանազան հալածանքների ենթարկված ախալքալաքցի հայերը 1921թ. գարնանն ու ամռանն էլ հայտնվեցին վրաց բոլշևիկների սանձազերծած նոր ազգայնամոլ ձեռնարկումների ոլորտում: Պատահական չէ, որ որոշ գյուղերի (հատկապես կաթոլիկական) ներկայացուցիչներ այդ օրերին քայլեր էին անում իրենց համագյուղացիներին Ռուսաստան գաղթեցնելու ուղղությամբ: Առանձին գյուղացիներ արդեն բռնել էին գաղթի ճանապարհը: Խորհրդային Վրաստանի կառավարությունը, անհանգստացած գավառի ամայացման վտանգից, հատուկ դեկրետով արգելեց հայերին հեռանալու իրենց բնակավայրերից[56]:

Հատկանշական է, որ այդ օրերին Խորհրդային Հայաստանի իշխանությունները ախալքալաքցիների գրած բազմաթիվ նամակ-խնդրագրերում, որոնք հնարավոր չէ ընթերցել առանց հույզի ու վրդովմունքի, Ախալքալաքում ստեղծված մղձավանջային իրավիճակից դուրս գալու միակ միջոց համարում էին գավառի միացումը Հայաստանին: Դրանցից մեկում կարդում ենք. «.. որպեսզի վերացվի Ջավախեթիայի բլոկադան,...որպեսզի կանգ առնի արտակարգ կոմիսարների այցը, որպեսզի վերջ տրվի ամենայն տեսակ տղայական կամայականության և սրբագործված ալան-թալանին, միայն մի միջոց կա, որը և ամբողջ գավառի բնակչության 75% կազմող հայ ազգաբնակչության տենչն ու փափագն է. այն է՝ միացնել Ախալքալաքի գավառը իրեն հարազատ Սովետական Հանրապետության հետ»[57]:

1921թ. հուլիսի 7-ի ՌԿ (բ)Կ Կավբյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի հուլիսի 16-ի որոշումներից հետո էլ հայ բոլշևիկների ազգային թևի մի շարք ներկայացուցիչներ որոշ փորձեր կատարեցին Զավախքի (ինչպես և Լեռնային Ղարաբաղի) ենթակայության հարցը վիճարկելու ուղղությամբ: Ախալքալաքից հայ բնակչության զանգվածային արտագաղթը կանխելու, նրա վրդովմունքը մեղմելու, խնդրի լուծման ուղիներ գտնելու նպատակով Ախալքալաքի գավառ այցելեց հայհեղկոմի նախագահ Ալ. Մյասնիկյանը: Վերջինիս նախաձեռնությամբ մի խումբ հայ գործիչներ 1922թ. ներկայացրին նախագիծ Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրացական ԽՍՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պետական շրջանակները, մտավորականության ներկայացուցիչներ (հատկապես պատմաբան Իվ. Զավախաշվիլին) սվիններով ընդունեցին այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923թ. հասան նրա մերժմանը[58]:

Ինչևէ, սահմանային հարցերում մնալով միայնակ Խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի ավելի ազդեցիկ բոլշևիկների և նրանց աջակցող կենտրոնի առջև, խիստ թուլացած Հայաստանի ղեկավարությունը, ի վերջո տեղի տվեց: Զանգվածային բռնամիջոցների շնորհիվ խորհրդային իշխանությանը հաջողվեց առժամանակ լռեցնել ջավախքահայությանը՝ նրա մեջ խեղդելով Հայաստանին միանալու ձգտումը:

* * *

Նախկին Ախալքալաքի գավառի մեծ մասից կազմվեց նույնանուն վարչական շրջանը: Հյուսիսային գյուղերից Տաբաձուրին, Մոլիտը և Չխարոլան մտցվեցին Բորժոմի, իսկ Դամալան՝ ավելի ուշ կազմավորված Ասպինձայի շրջանների մեջ: 1930թ. Ախալքալաքի շրջանից անջատվեց նրա հարավ-արևելյան մասը՝ կազմելով Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջանը:

Խորհրդային իշխանության տարիներին քաղաքական ու սոցիալ-տնտեսական լծակների անբարենպաստ ներգործության հետևանքով սկսված բնակչության արտահոսքը դարձավ Զավախքի ժողովրդագրական իրադրությանը բնորոշող երևույթ: Այդ առումով պատահական չէր, որ բնակչության տոկոսային հարաբերության տեսակետից, ի թիվս հայկական այլ տարածքների, երկրորդ աշխարհամարտի տարիներին Ախալքալաքն ունեցավ ավելի

մեծ մարդկային կորուստներ: Բավական է նշել, որ պատերազմի օրերին բանակ զորակոչված 12684 ախալքալաքցիներից զոհվեց (մասամբ անհետ կորածներ) 7788-ը, այսինքն՝ 61,4 %-ը[59]: Էթնիկական «մաքրազարդման» ենթարկվեցին նաև մեսխեթցի թուրքերը, որոնց դավաճանության մեղադրանքով Ստալինը 1944թ. ամռանը Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի և Ախալքալաքի շրջաններից աքսորեց Միջին Ասիա: Տեղի հայերին արգելվեց զբաղեցնել թուրքերից դատարկված գյուղերը: Իմերեթիայից զանգվածաբար այս շրջաններ տեղափոխվեցին վրացի վերաբնակիչներ, որոնց կառավարությունը տեղավորեց մեսխեթցիների բնակավայրերում: Վրաստանի ղեկավարության ժողովրդագրական այդ միջոցառման հետևանքով հայաշատ Ախալցխայի և Ախալքալաքի շրջանների միջև ի հայտ եկավ վրացաբնակ Ասպինձան: Միևնույն ժամանակ, 1946- 1949թթ. զգալի թվով հայեր Վրացական ԽՍՀ հայաբնակ շրջաններից, այդ թվում Ջավախքից, աքսորվեցին Ալթայի երկրամաս և Սիբիր:

1950-70-ական թթ. տնտեսական և քաղաքական շարժառիթներով հայ բնակչության արտահոսքը Հայկական ԽՍՀ, Հյուսիսային Կովկաս և նախկին ԽՍՀՄ հանրապետություններ, մեծ չափեր ընդունեց: Ահա թե ինչու, բարձր ծնելիությամբ և ընտանիքների բազմանդամությամբ աչքի ընկած Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում (որոնք միասին հիմնականում կազմում էին նախկին Ախալքալաքի գավառի կամ պատմական Վերին Ջավախքի տարածքը) 1989թ. բնակչության ընդհանուր թիվը հասնում էր սոսկ 1917 թ. մակարդակին՝ 105 հազար մարդ:

1989թ. ապրիլին Աջարիայում տեղի ունեցած երկրաշարժից անօթևան մնացած կամ մասնակիորեն տուժած աջարներին վրաց կառավարությունը չհապաղեց բնակեցնել Ախալքալաքի վրացական մի քանի (Կոթելիա, Հոկամ, Գոգաշեն, Չունչխա և այլն) և Բոգդանովկայի ռուս դուխոբորների գյուղերում՝ վերաբնակիչների համար կառուցելով երկհարկանի առանձնատներ: Խորհրդային իշխանության յոթ տասնամյակների ընթացքում Ախալքալաքն ու Բոգդանովկան այդպիսի մեծ ծավալի պետական շինարարություն չէին տեսել: Այդուհանդերձ, Ջավախքի ժողովրդագրական իրավիճակը փոխելու այդ հերթական քայլն արդյունք չտվեց: Բնակլիմայական ծանր պայմանները ստիպեցին աջարների զգալի մասին վերադառնալու իրենց նախկին բնակավայրերը:

Այսօր պատմական Ջավախքն իր երկու շրջաններով հիմնականում հայաբնակ մոտ 100 գյուղերով և ավելի քան 100 հազար բնակչությամբ (95 %-ը հայեր) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ամենամիատարր հայաբնակ երկրամասն է, որը շարունակում է ապրել իր հայաշունչ և հայեցի կյանքով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *« Հորիզոն», 1918, թիվ 10:*
2. *ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200,ց.1,գ.104,թ.45: Ախալքալաքի գավառի տարածքը (բնակչության 72 %-ը հայեր), Ծալկայի (Խրամի) և Տաբածղուրի լճի շրջակա հայկական գյուղերով կազմում էր 3400 քառ. կմ (տե՛ս նույն տեղում, թ.13):*
3. *Նույն տեղում, թ. 2-8: Եղավ նաև ենթահանձնաժողովի առաջարկը Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները իբրև գերազանցապես հայերով բնակեցված տարածքներ Ելիզավետպոլի նահանգի կազմից հանելու մասին: Սակայն ենթահանձնաժողովի մահմեդական ներկայացուցիչները հրաժարվեցին այդ փաստաթղթի տակ ստորագրել իրենց քայլը պատճառաբանելով լիազորություններ չունենալու հանգամանքով (տե՛ս նույն տեղում):*
4. *Մելիքյան Վ., 1917. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997, էջ 119:*
5. *Шахатунян А., Административный передел Закавказья, Тифлис, 1918.*
6. *«Մշակ», 1918, թիվ 16:*
7. *Ախալցխայի վեցամսյա ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918թ. ինքնապաշտպանությունը, Եր., 1992:*
8. *ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ. 114, ց.2, գ.3, թ.125ա- 126 և «Մշակ», 1918, թիվ 81:*
9. *Պողոս Գրիգորի Աբելյանը (1877-1943) հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչներից է, տնտեսագետ, իրավաբան, մանկավարժ, գրող, թարգմանիչ: Ծնվել է Ախալքալաքի գավառի Գումբուրդո գյուղում, սովորել Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում և համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Հարել է էսէռական կուսակցությանը,*

Մխալքալաքում հիմնել է ազատագրական խմբակ Արևմտյան Հայաստանում հակաթուրքական պայքարն աշխուժացնելու նպատակով: 1914-ին մասնակցել է հայկական կամավորական ջոկատների կազմակերպման գործին, 1916- 1917թթ. զգալի օգնություն է ցույց տվել արևմտահայ գաղթականներին հայրենիքում տեղավորելու համար: Եղել է կովկասահայ բազմաթիվ ընկերությունների անդամ, Մխալքալաքի Հայրենյաց վարչության ստեղծման նախաձեռնողն ու քարտուղարը: Մեծ աշխատանք է կատարել ախալքալաքցի գաղթականներին սովից ու համաճարակից փրկելու ուղղությամբ: Ջավախքը Հայաստանին միացնելու շարժման ղեկավարներից է (տես Մելքոնյան Ա., Աբելյան Պողոս, Հայկական հարց, Եր. 1996, էջ 7):

10. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, g.2, գ.3,թ.123ա:

11. Թուրքերը, առաջին անգամ Մխալքալաքի գավառ ներխուժելուց մի քանի օր հետո, ձևացրին, թե դուրս են գալիս այնտեղից: Գաղթականների մի մասը հավատաց դրան և ետ վերադարձավ: Մայիսի երկրորդ կեսին թուրքերը նորից մտան Մխալքալաք և կարողացան տիրել գաղթականների ետ բերած գույքի մի մասին, գերել ու ոչնչացնել հազարավոր մարդկանց:

12. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, (ՀՀ ԳԱԱ ՊԻԱ), Լեոյի անձն. ֆ.1, g.1, գ.242, թ.4-5:

13. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, g.1, գ. 17, թ.34-35 և ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ.1, g.1, գ.242, թ.5: Խորենիա գյուղի կոտորածի մասին տես նաև «Հայաստանի Հանրապետություն», 1998, 27 հունիս, էջ 7:

14. Մանրամասն տե՛ս Սանոսյան Ա., նշվ. աշխատությունը:

15. ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն.ֆ.1, g.1, գ.264, թ.1-2 և ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114,g.2, գ.3, թ.127ա:

16. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր. 1993, էջ 214-215:

17. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, g.2, գ.3, թ. 127-127ա և ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ.1, g.1, գ. 264, թ. 1-2:

18. Այդ հարձակումների ընթացքում թուրքերը Բակուրիանի գաղթականական ճամբարից առևանգեցին կամ սպանեցին մինչև 1500 մարդ, հափշտակեցին մեծ թվով անասուններ ու շարժական գույք:

19. Վարչության մյուս անդամներն էին Բ. Մաղաքյանը, Հովհ. Բաղալյանը, Վ. Նազարեթյանը և Թ. Մաղաքյանը:

20. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). сборник (составитель, отв. ред., автор предисловия В. Микаелян), Ер. 1995, с. 560-561.

21. Այդ խորհրդակցությանը ներկա են եղել Հովհ. Սպենդիարյանը, Լ. Էվանգուլյանը, բժիշկ Տեր- Ստեփանյանը և ուրիշներ:

22. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g.2, գ.3, թ. 131-131ա:

23. Այս անձնավորություններն ապաշնորհ գտնվեցին, զբաղվեցին նաև գաղթականների համար նախատեսված օգնության յուրացումով (տե՛ս նույն տեղում, թ. 130):
24. «Մշակ», 1919, թիվ 14:
25. ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ.1, գ.1, գ. 264, թ.1-2:
26. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, գ.2, գ.3, թ.131ա:
27. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 225-226:
28. Հարությունյան Կ. Ա, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ (դոկտորական ատենախոսություն), Եր. 1994, էջ 70:
29. Վրացյան Ս., նշվ.աշխ., էջ 242-248:
30. Նույն տեղում, էջ 234-235:
31. Նույն տեղում, էջ 266: 1919-1920թթ. Ախալքալաքի հայ և վրաց գաղթականությունը Ամերիկյան օգնության կոմիտեից ստացավ զգալի քանակությամբ հագուստ և 250 հազ. փութ սպիտակ ալյուր (տես ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, գ.2, գ.3, թ. 132):
32. Իմերեթցիների զգալի մասը, չդիմանալով Ջավախքի խստաշունչ կլիմայական պայմաններին, հետագայում վերադարձավ իրենց բնակավայրերը:
33. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, գ.2, գ. 3, թ. 122ա: Գտնվեցին առանձին ընտանիքներ, որոնք համաձայնվեցին փոխել ազգանունները: Սակայն հայ-կաթոլիկների ճնշող մեծամասնությունը չընկրկեց վրաց իշխանությունների ազգայնամոլ այդ ձեռնարկումների առջև և կտրականապես հրաժարվեց ազգափոխվել:
34. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.7, Թեհրան, 1982, էջ 242:
35. Ռուբէն, նշվ. աշխ., էջ 243:
36. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918թ., Եր. 1997, էջ 334:
37. «Աշխատավոր», 16 հունիսի 1920թ., թիվ 57
38 Նույն տեղում: 1920թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրում Ջավախքի և Լոռու հարցում Ռուսաստանի վերոհիշյալ կեցվածքը հուշում էր, որ առաջիկա հայ-ռուսական (Շանթ-Կարախան) բանակցություններում վիճելի տարածքների խնդրում դժվար էր խորհրդային կառավարությունից ակնկալել աջակցության քայլեր: Միանգամայն համոզիչ է պրոֆ. Է. Զոհրաբյանի այն պնդումը, որ 1920թ. մայիս-հունիսին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի փոխարտգործժողկոմ Լ. Կարախանի հավաստիացումները հայկական պատվիրակության անդամ Հ. Տերտերյանին Ախալքալաքի, Ախալցխայի, Խրամի, Բաթումի, ողջ Դաշտային Ղարաբաղի պատկանելության հարցը հօգուտ Հայաստանի տեսնելու Ռուսաստանի պատրաստակամության մասին, միայն անլուրջ դիվանագիտական խաղ և հայկական կողմի տրամադրությունները շոշափելու քայլեր էին:(Տես Զոհրաբյան Է. Ա., 1920թ.

թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր. 1997, էջ 68-70):

39. *1920թ. թուրք-հայկական պատերազմին իր մասնակցությունը բերեց Ջավախքի հայությունը (տես Զոհրաբյան Է., նշված աշխ., էջ 179:*

40. *Քեմալա-վրացական գաղտնի կապերի մասին տես Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 150-152: Ի դեպ, վրաց բոլշևիկները Ի. Ստալինը, Բ. Մդիվանին և ուրիշներ, Ջավախքը թուրքերին հանձնելու և դրանով այն հայաթափելու իրենց մոտեցումներով չէին տարբերվում վրաց մենշևիկներից: Նրանք 1920թ. վերջին հայտնում էին, որ առանձնապես դեմ չեն Ախալքալաքի և Ախալցխայի գավառները դաշնակից Թուրքիային հանձնելուն (տե՛ս ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի Կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), Հավաքածու 1, գ.2):*

41. *ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.3, թ.132: Ջավախքի հարցում վրացիների գործելակերպը պատկերավոր է ներկայացված ժամանակի փաստաթղթերում. «Վրաց կառավարությունը իր օրով մեզ նեղում էր ըստ ամենայնի,- կարդում ենք Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչին գրած ջավախքցի մի խումբ մտավորականների նամակում,- բացի այդ, երբ երկիրը իրենց էր մնում, գալիս տիրում էին, իսկ երբ թուրքն էր գալիս, հանձնում էին նրան ու հեռանում...» (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.46, թ. 65-66):*

42. *Մելքոնյան Ա., Ջավախքի գողգոթան, «Ազատամարտ», 24 ապրիլի 1992, էջ 12:*

43. *Նույն տեղում:*

44. *Երբ Կարմիր բանակը մտավ Ախալքալաք, այնտեղ կանգնած էր բոլշևիկների դաշնակից քեմալական զորքը, որի հետ ոչ մի ընդհարում չեղավ: Ավելին, մինչև գավառից դուրս գալը ապրիլ ամիսը, թուրքական զորքը կարմիր բանակի զորամասերի հետ նյութական նոր վնասներ հասցրեց Ջավախքի բազմաչարչար բնակչությանը:*

45. *ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.46, թ.66: Այս փաստաթղթի ընթերցումից դժվար չէ նկատել ախալքալաքցիների հաստատակամ ձգտումը Հայաստանին միանալու և ունեցած ռուսամետ կեցվածքի խնդրում:*

46. Хармандарян С.В., Ленин и становление закавказской федерации, Ер. 1969, с. 101-102.

47. *Այս փաստաթուղթը (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.3, թ.122-134), որ քանիցս վկայակոչել ենք աշխատությունում, ամբողջությամբ ներկայացված է հավելվածում (փաստաթուղթ թիվ 6):*

48. *Ջավախքը Հայաստանին պատկանելու լուրջ փաստարկներով*

աշխատություն է Ռ. Տեր- Մինասյանի «Ախալքալակի պայքարը» հոդվածը (տե՛ս «Դրոշակ», Փարիզ 1926, թիվ 1):

49. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.3, թ. 133:

50. Նույն տեղում, թ. 133ա:

51. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ.7, թ. 45:

52. Նույն տեղում, թ.43:

53. Եթե կարմիր բանակը 1921թ. հունվար-փետրվարին Երևանից մտներ Ալեքսանդրապոլ, ապա Ախալքալաք, անկասկած. և՛ Շիրակում թուրքերի կողմից հայ բնակչության կոտորածներն ու կողոպուտն այդպիսի ծավալներ չէին ընդունի, և կբացառվեր քեմալականների մուտքը Զավախք, ինչպես և գավառը Հայաստանին միացնելու հայ բոլշևիկների (Ալ. Բեկզադյան, Ա. Մռավյան, Ալ. Մյասնիկյան և այլոց) ջանքերը կարող էին հանգեցնել ցանկալի արդյունքի:

54. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.24, թ. 75:

55. Նույն տեղում, թ. 75 ա-76 և գ. 46, թ. 65-66:

56 Նույն տեղում:

57 Նույն տեղում:

58 ارتسانوچ, 1998, N 7 ցց. 29-30.

59. Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 12: Մեծ Հայրենականին ախալքալաքցիների մասնակցության և ունեցած զոհերի մասին սույն տեղեկությունները վերցված են Ախալքալաքի զինկոմիսարիատից:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի, Վրաստանի, նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների պետական արխիվներում պահվում են բազմաթիվ փաստաթղթեր Ջավախքի պատմության, մասնավորապես 1918-1921 թթ. ժամանակահատվածի վերաբերյալ: Դրանցից տասնյակ փաստաթղթեր օգտագործվել են հայ պատմաբանների կողմից: Սակայն , բացառությամբ մեկ-երկուսի, ոչ մի փաստաթուղթ առ այսօր ամբողջությամբ չի հրատարակվել, այն դեպքում, երբ այդ խնդրի գիտական և քաղաքական կարևորությունը կասկած չի հարուցում:

Աշխատության հավելվածը չծանրաբեռնելու նպատակով շահեկան համարեցինք հրատարակել միայն 7 փաստաթուղթ, որոնք առավել կարևոր նյութ են պարունակում հիմնախնդրի վերաբերյալ և նոր լույս են սփռում Ախալքալաքի գավառի պատմության այդ ողբերգական շրջանի դեպքերի վրա: Առաջին և երկրորդ փաստաթղթերը ներկայացնում են 1918թ. ամռանը և աշնանը Բակուրիանի և Ծալկայի շրջաններում ախալքալաքցի տասնյակ հազարավոր գաղթականների աղետալի վիճակը, հայրենի գավառ վերադառնալու ուղղությամբ ձեռնարկած քայլերը և այլն: Երրորդ և յոթերորդ փաստաթղթերը վերաբերում են 1921թ. քեմալական թուրքերի կողմից Ջավախքում իրականացված կոտորածների, խորհրդայնացումից հետո այնտեղ վրաց բոլշևիկների վարած ազգայնամոլ քաղաքականության, Խորհրդային Հայաստանի հետ միանալու Ախալքալաքի բնակչության ձգտումների հարցերին:

Խորհրդային Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների խնդրին վերաբերող արձանագրությունների (փաստաթղթեր թիվ 4 և 5) միկրոպատճենները, որոնք Մոսկվայից տարիներ առաջ բերվել են ակադ. Գ.Ա. Գալոյանի կողմից, թեև նորություն չեն, սակայն կարող են հետաքրքրել ընթերցող հասարակայնությանը:

Հավելվածի ամենաընդարձակ փաստաթուղթը (թիվ 6) ՀԽՍՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանի հանձնարարությամբ Ախալ-

քալաքի Հայրենյաց վարչության քարտուղար Պողոս Աբելյանի կազմած զեկուցագիրն է, որը բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ է պարունակում խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ և միաժամանակ, մի ուրույն աշխատություն է Ջավախքի ամբողջական պատմության վերաբերյալ:

Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Փաստաթուղթ թիվ 1

Правление Ахалкалакского
Армянского землячества.
8 августа 1918г., г. Тифлис, [1] 6

Г. Дипломатическому
Представителю Арм. Респ.
в Грузии

Правление Ахалкалакского Армянского землячества и представители приютившихся в Бакурианах беженцев из Ахалкалакского уезда считают своей обязанностью доложить Вам о следующем:

1. Положение беженцев

После занятия Ахалкалакского уезда турками, т.е. после 1 июня текущего года, лишь незначительная часть населения этого уезда осталась там, остались духоборы, и около 3 тыс. армян-католиков. Случайно остались и приблизительно 2000 армян Григорианского исповедания, жители сс. Тагча и Хорения, но и те почти без исключения все были вырезаны турками. Лишь около 1500 чел., состоявшие преимущественно из старух, стариков и детей, ограбленные, подвергнутые всевозможным насилиям, теми же турками были выгнаны их Ахалкалакского уезда в Бакурианы. Из 100 тыс. жителей этого уезда свыше 80 000 чел. из боязни быть поголовно вырезанными турками, до прихода последующих, бросив на произвол турок свое миллиардное имущество, состоявшее из много сотен тысяч пудов готового хлеба, урожая, могущего дать около 10 млн. пудов хлеба и т.д. – ушли из Ахалкалакского уезда и приютились в Бакурианах и в Цалкинском участке Борчалинского уезда, некоторые же, сравнительно незначительная часть, успела перебраться в Тифлис и даже перекинуться на Северный Кавказ. В Бакурианах в данное время находится приблизительно 40 тыс. беженцев ахалкалакцев, столько же живет в Цалках.

Положение и тех и других почти одинаковое, и представляет оно следующую картину:

Беженцы без хлеба и без денег. Они выбрались из Ахалкалакского уезда только со скотом, часть которого была уведена турками, напавшими на беженцев и на территории Грузинской Республики, другая часть погибла за отсутствием корма, третья часть за бесценок распродана.

У беженцев, таким образом, остается небольшое количество, главным образом, рабочего скота. Если положение беженцев не улучшится в ближайшие дни, то и эта часть скота будет продана для того, чтобы на вырученные деньги можно было купить хлеба и на некоторое время спасти себя от гибели. Положение беженцев делается катастрофическим в особенности от того, что Грузинское Правительство не разрешает им выходить из Бакурнани и покупать хлеба в других местах. Последствия голодного существования и жизни под открытым небом налицо: смертность увеличивается с каждым днем и в ближайшем будущем до таких размеров дойдет, что от населения Ахалкалакского уезда и не останется.

Показательно то, что наиболее нуждавшаяся часть беженцев, каковой является около 3 тыс. ардаганцев, шевнедцев, нашедших приют у ахалкалакцев в лучшие дни их жизни, ныне почти все погибли от голода. Такая же участь ждет и ахалкалакцев. Турки не только не разрешают беженцам вернуться на свои места, но, по-видимому, они решили Ахалкалакский уезд населить магометанами из других мест. Доподлинно нам известно, что турецкое правительство делает в этом направлении серьезные шаги и уже магометанами заняты в этом уезде такие важные армянские селения, какими являются Карцах, Сульда, Гумурдо.

1.Нужды беженцев

Спасение беженцев Ахалкалакского уезда заключается в их возвращении на родину.

Беженцы все потеряли, у них остается некоторая надежда на то, что будет спасен хоть их урожай. Если не удастся беженцам снять этот урожай, они очутятся в положении, при котором даже в случае возвращения на свои места, они погибнут голодной смертью. В силу всего этого, спасение урожая этого года – есть спасение беженцев. Наоборот, лишение этого урожая есть гибель населения. Время уборки хлеба уже наступило, вследствие чего, если через несколько дней беженцы не вернутся в Ахалкалаки, они окончательно лишатся этого урожая. На основании этих соображений настоятельно просим сделать даже невероятное для спасения населения от угрожаемой ему гибели, для чего необходимо открыть ему возможность вернуться на родину на этих же днях, с таким расчетом, чтобы не лишиться урожая. Если по тем или по другим причинам окажется невозможным для беженцев снять весь свой урожай, они, беженцы, готовы и на то, чтобы, уступая часть этого урожая туркам, тем самым получить право хоть на спасение другой части урожая.

При возвращении на родину для обеспечения жизни, чести и имущества населения беженцы просят дать им следующие гарантии:

1) Уверенность в том, что турки хорошо обращаются с армянами других завоеванных уездов, например, Александропольского, Сурмалинского и т.д.

2) В целях внушения доверия к себе, турецкое правительство должно положить конец системе закрытых дверей, иначе, оно должно дать возможность свободного сношения между армянами завоеванных Турцией областей и армянами других местностей Закавказья.

3) Как во всех других населенных армянами местностей Турции, так и в Ахалкалакском уезде правительство Армянской Республики должно иметь своих дипломатических представителей.

Было бы очень желательно, если бы такие представители были и от Германии, Австро-Венгрии, Болгарии, Грузии и Азербайджана.

4) Турецкое правительство отвечает за целость, оставленного в Ахалкалакском уезде армянами имущества.

5) Для полнейшей и окончательной ликвидации существующих между армянами и мусульманами этого уезда недоразумений и в целях установления крепких дружеских отношений между ними, необходимо эти народы, как таковые, между собой примирить.

6) При возвращении на родину беженцы восстанавливаются во всех своих правах, как гражданских, так и имущественных, в частности земельных, - Турецкое правительство не должно заселять уезд пришлым элементом. Уезд должен принадлежать лишь своим старым, коренным жителям.

7) Все население, все беженцы должны иметь право сразу вместе вернуться на родину, нельзя откладывать возвращение жителей того или другого селения.

8) Уездная милиция должна состоять из магометан и христиан на пропорциональных началах.

9) Вместе с разоружением армян необходимо разоружить и турок.

10) Чтобы приободрить население, и вообще не оставлять его без руководителей, в уезд должны вернуться интеллигентные работники-учителя, священники и т.д.

11) Жителей уезда нельзя посылать на казенные работы вне уезда и

12) Возвращение должно состояться с таким расчетом, чтобы можно было снять урожай этого года.

В случае, если невозможно вернуться на родину, просим подыскать другие пути, для спасения беженцев от гибели. В частности, просим хлопотать перед Грузинским Правительством о снятии запрещения передвижения беженцев и покупки хлеба в пределах Грузии.

Председатель Правления Ахалкалакского

Армянского землячества.
Вет. врач В. Оганджанян
Секретарь землячества П. Абелян
Представитель армянских беженцев в Бакурианах:
свящ. Арсен Блрян
уч. Хач. Тер-Ղукасян.

ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ. 17, p. 34-35:

Փաստաթուղթ թիվ 2
Թարգմանություն ֆրանսերենից

Վրաստանում թուրքական կառավարության դիվանագիտական և զինվորական ներկայացուցչին

Ախալքալաքի Հայրենյաց վարչությունը դիմում է Ձեզ հետևյալ խնդրանքով. Բակուրիանում և Ծալկայում թաքնված գաղթականների վիճակին Դուք ծանոթ եք, ուստի ներկայացման կարիք չկա: Կարծում ենք վարչությունը պարտավոր է միայն հիշեցնելու, որ Բակուրիանում ու Ծալկայում 80 հազար հայերի կեսը Ախալքալաքը փոխանակել է իսկական գերեզմանի հետ: Մենք դեռ չենք խոսում տասնյակ հազարավոր գլուխ անասունների եւ այլ բարիքների մասին, որից զրկվեցին Ախալքալաքի բնակիչները այդ մահվան դաշտերում: Տարածվող սարսափելի սովը, ցրտերը, համաճարակային հիվանդություններն իրենց ճա-

նապարհին չեն հանդիպում ոչ մի արգելքի յուրաքանչյուր օր գաղթականներից խլելով հարյուրավոր զոհեր: Եթե վիճակը շարունակի պահպանվել այդ ոգով, ապա առաջիկայում, առանց չափազանցության, 3-4 շաբաթում կզոհվեն նաև ախալքալաքցի մնացած գաղթականները: Դատապարտված մահվան, լքված բոլորից, այդ դըժբախտ ու անտուն հայերն աղերսում են փրկել իրենց մահից: Գաղթականներին մահից փրկելու միջոցները վարչությունը համարում է.

ա) Անհապաղ (գաղթականների- Ա.Մ.) վերադարձը հայրենիք: Գաղթականները համաձայն են վերադառնալ իրենց տեղերը նույնիսկ այն դեպքում, եթե (տեղում- Ա.Մ.) լինեն մահմեդական գաղթականներ, որոնք հաստատվել են Ախալքալաքի շրջանում...: Հայ գաղթականները համոզված են, որ ոչ մի դժվարություն, ոչ մի թյուրիմացություն չի լինի երկու դարավոր հարևանների միջև : Թեև բարեկամությունը մի փոքր ավելի քիչ կլինի, սակայն երկու ժողովուրդներն էլ կմնան միշտ խորապես կապված: Ներկայումս խառը հանձնաժողովը ուղևորվում է գաղթականների մոտ որոշ հարցեր պարզելու համար: Մենք մտավախություն ունենք, որ տարբեր ծեվական հարցեր կարող են ձգձգել գաղթականների վերադարձը իրենց տեղերը: Ի նկատի առնենք, որ ոչ միայն օրերը, այլև ժամերը գաղթականների համար ունեն կենսական նշանակություն: Հայրենյաց վարչությունը խնդրում է վերացնել բոլոր ձևականությունները և հնարավորություն տալ գաղթականներին վերադառնալու ավետյաց երկիրը, որպիսին նրանց համար Ախալքալաքն է: Բոլոր գաղթականները միաբերան հաստատում են. «եթե հարկ է մեռնել, լավ է մեռնել Հայրենիքում»:

բ) Եթե ինչ-ինչ պատճառներով հնարավոր չլինի գաղթականների վերադարձը իրենց օջախներ, մենք խնդրում ենք թույլատրել գաղթականներին հաստատվելու Վրաստանի այն շրջաններում, որտեղ նրանց համար կլինի հնարավոր:

Վրացական կառավարության հայտարարության համաձայն Թիֆլիսի ամբողջ նահանգը, և բնականաբար, Ախալքալաքի գավառը հանդիսանում են Վրաստանի անբաժան մասը: Ելնելով այդ դրույթից Ախալքալաքի բնակիչները հանդիսանում են Վրաստանի հանրապետության հպատակներ: Հաշվի առնելով, որ մեր հանրապետության բոլոր հպատակներն ունեն պետության տարածքով ազատ տեղաշարժվելու բացարձակ իրավունք, վարչությունը խնդրում է Վրաստանի կառավարությանը չեղյալ համարելու Բակուրիանի և Ծալկայի սահմանամերձ տեղերը անցնելու բոլոր

արգելքները: Արդեն երկար ժամանակ է, ինչ վրացական կառավարությունն առաջարկում է գաղթականներին տեղափոխվել Հյուսիսային Կովկաս: Վերջին օրերին վրացական կառավարությունը խորհուրդ է տվել Վիրահայոց ազգային խորհրդին Ախալքալաքի բնակիչների 2/3-ին գաղթեցնելու Հայաստան, որը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, դժվար է: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նա չունի միջոցներ գաղթականների այդպիսի երկարատև տեղաշարժ կազմակերպելու համար: Առավել ևս, որ դա կարող է ունենալ ամենաաղետալի հետևանքները: Ախալքալաքցի գաղթականները կարծում են, որ իրենց գոյատևման լավագույն միջոցը տվյալ պահին Վրաստանի հայկական և Բորչալուի գավառում մահմեդականների լքած գյուղերն են: Բոլոր դեպքերում Ախալքալաքի բնակիչների համար ցանկալի է հարևանությունը իրենց հայրենիքի հետ: Մի քանի շաբաթ առաջ վրացական կառավարությունն իրավունք է տվել Ախալքալաքի վրացիներին թողնելու Բակուրիանն ու Ծալկան և ուղևորվելու մեր հանրապետության լավագույն տեղերը: Մենք խնդրում ենք, որ համանման հարմարություններ ու իրավունքներ շնորհվի նաև Ախալքալաքի հայերի համար, որոնք կողք-կողքի վրացիների հետ պայքարել են Ախալքալաքի գավառի ազատագրության համար:

գ) Եթե գաղթականների վերադարձն իրենց օջախներ անհապաղ դրական լուծում չստանա կամ ձգձգվի, հարկ կլինի ձեռք առնելու անհրաժեշտ քայլեր գոյության բոլոր միջոցներից զուրկ գաղթականության մեծամասնությանն օգնության հասնելու համար: Անհրաժեշտ է նաև տեղավորել որբերին: Դժբախտ երեխաներին փրկելու համար հարկավոր է բավարարել գաղթականների բժշկական պահանջները: Մենք նաև խնդրում ենք Ամերիկյան բարեգործական ընկերությանը, որը շատ բան է արել և անում է հայ ժողովրդին փրկելու համար, զբաղվելու Ախալքալաքի գավառի բնակիչների վիճակով, որոնք անաղմուկ հրաժեշտ են տալիս կյանքին, և որոնք գրեթե ոչ մի տեղ չեն գտնում օգնություն մահվան դեմ պայքարում:

Գաղթականները հույս ունեն և հավատում են, որ Դուք, համակված հումանիզմով, խստորեն կբռնեք մահվան ձեռքը, որն արդեն 5 շաբաթ է անպատիժ խլում է տասնյակ հազարավոր կյանքեր: Այն գաղթականները, որոնք մեր միջոցով դիմում են Ձեզ, հնարավոր է դիմում են վերջին անգամ և աղերսում են փրկել իրենց: Ամեն կարգի ուշացում նման չէ մահվան, այլ մահվան դատապարտվածների համար հենց մահ է:

Նման խնդրանքով վարչությունը դիմում է վրացական կառավարությանը, հայկական կառավարությանը, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, Վիրահայոց ազգային խորհրդին և Ամերիկյան բարեգործական կոմիտեին:

Նախագահ /ստորագրություն/

Նախագահ /ստորագրություն/

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ,Լեոյի անվան թիվ 1 ֆոնդ, ց.1, գ. 264, թ. 1-2 (ֆրանսերեն):

Փաստաթուղթ թիվ 3

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի հարգելի ներկայացուցչին Վրաստանում

Թիֆլիս

Հարգելի ներկայացուցիչ.

Մենք՝ Ջավախքի Ախալքալաք գավառի ավերված-թալանված գյուղերի ներկայացուցիչներս եկած ենք հայտնելու Հայկական միսսիային.

1. Այն կոտորածի ու թալանի մասին, որ մարտի սկզբին արին մեզ մասամբ տաճկական ասկյարները և գլխավորապես մեր դրացի թուրքերը.

2. Մեր անտեր մնացած որբերի մասին.

3. Մեզ շուտափույթ օգնություն հասցնելու մասին.

4. Քննություն կատարել տալու բոլորովին չեզոք մարդկանց ձեռքով՝ այն սպանությունների ու թալանի մասին, որ եղան վերջերս.

5. Մեր գավառը՝ Ջավախքը Հայաստանի Հանրապետությանը միացնելու մասին.

6. Հակառակ դեպքում մեզ գաղթեցնելու մասին Ռուսաստանի խորքերը:

---

1. Մեծամասնականները (բոլշևիկներ-Ա.Մ.) նոր էին մտնում Անդրկովկաս՝ Ադրբեջան, Հայաստան ու Վրաստան, որ մենք մեր հարևան թուրքերի հետ պայման կապեցինք. եթե Կարմիր բանակը մտնի Ջավախք՝ մենք նրանց կյանքը և ինչքը պաշտպանենք (մեզ համար մինչև այսօր էլ հայտնի չէ, թե թուրքերը ինչու համար վախենում էին սովետական Կարմիր բանակից), իսկ եթե քեմալականները մտնեն՝ նրանք մեզ պաշտպանեն ասկյարներից: Սակայն այդ ազնիվ խոսքը թուրքերի կողմից այդպես չեղավ, երբ վրաց զորքը հեռացավ գավառից և տեղի տվեց թուրք ասկյարին, երբ սրանք փետրվարի վերջերին մտան մեր գյուղերը՝ սկսեցին թալանը ոսկու, արծաթի, փողի, կտորեղենի, զգեստի ու մասամբ տավարի. դրանից հետո եկավ թուրք խուժանը (մեր հարևանները), որն սկսեց մեզ ծեծել, ամբողջովին մերկացնել, մեր բոլոր ունեցածը, մինչև անգամ ոտքերիս տրեխներն ու ասեղները խլել, բառնալ մեր սայլերին, մեր անասունների հետ քշել իրենց գյուղերը, դրա հետ զուգընթաց բոլոր բռնաբարությունները կանանց և աղջկերանց ու կոտորածը: (Սա չորրորդ անգամն է, որ մենք ենթարկվում ենք այդպիսի դառն ճակատագրի, և եթե մեր վիճակը չփոխվի՝ մենք այլևս անկարող ենք այդտեղ մնալ):

2. Կոտորածի ու թալանի շնորհիվ շատ երեխաներ մնացել են անտեր, շատերին էլ տարել ենք զանազան տեղեր՝ տվել աշխատելու. այդ երեխաները ըստ մեծի մասին 8-14 տարեկան են. նրանք կարող են բոլորովին մեզ համար կորսվիլ. խնդրում ենք, որ բաց անել տաք նրանց համար որբանոց, հավաքեք այնտեղ, մինչև որ մենք հնարավորություն կունենանք մեր զավակներին վերցնելու, պատսպարելու:

3. Քանի որ տաճիկներն ու թուրքերը տարան մեր ամբողջ տավարը, շորը, պաշարը, քանի որ մենք այսօր մնացել ենք բոլորովին տկլոր ու քաղցած և առանց սերմնացուի խնդրում ենք շու-

տափուլթ հասնիլ մեզ օգնության, և որովհետև նյութով օգնելը Ձեզ համար դժվար կլինի, ուստի խնդրում ենք օգնեք մեզ դրամով, մենք ինքներս թե՛ անասուններ, թե զգեստ, թե ուտելիք ու սերմնացու մեր հանան գյուղերից ու ազգերից (դուխոբոր, թուրք) կգնենք: Այդպիսի օգնություն հարկավոր է առավելապես 6 գյուղի համար. Կարզախ, Սուլտա, Դատեշ, Սրակովալ, Գյումբյուրդա և մասամբ Վաչիան, որոնց համար հարկավոր է մոտ 500 լուծք եզ, 500 կով, մարդագլուխ 2 փ. (փութ- Ա.Մ.) գարի ուտելիք, 2փ. գարի սերմնացու և 1 փ. գետնախնձոր սերմնացու. բոլոր գյուղերում կլինի մոտ 8000 բնակիչ:

4. Քննություն կատարել տալ մի չեզոք մարմնի ձեռով այն սպանությունների ու թալանների մասին, որոնք տեղի ունեցան մեր հարևան թուրքերի և գնացած ասկյարների ձեռքով. մենք ճանաչում ենք շատ- շատերին թուրքերից, որոնք ամեն բան արել են և անպատիժ շրջում են այսօր գյուղերում. տակավին այսօր էլ թուրք ագենտներ կան նրանց մեջ, որոնք ազգերի եղբայրասպանության գործով են զբաղված: Եվ երբ անաչառ ու անկաշառ քննությունը վերջանա՝ խիստ պատժի ենթարկել տալ նրանց, որ կողմից ուզում է լինի մեղավորը, որոնք այդպիսի սարսափելի ոճիր գործեցին:

5. Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80000 բնակչությունից 60000-ից ավելին հայեր են, մնացած 20000-ը թուրքեր ու դուխոբորներ (որոնք էլ ուզում են գաղթել Ռուսաստան) միացնեք Հայաստանի Հանրապետության, ըստ որում վրաց կառավարությունը իր օրով մեզ նեղում էր ըստ ամենայնի, բացի այդ, երբ երկիրը իրենց էր մնում, գալիս տիրում էին, իսկ երբ թուրքն էր գալիս, հանձնում էին նրան ու հեռանում. դեռ թողած այն, որ մեր հողերը, այն էլ վարելահողերը՝ խլում, տալիս էր թուշերին վարձով, մեզ զրկում ամեն հնարավորությունից ծանր գաղթից հետո տնտեսապես բարելավվելու (համար-Ա.Մ.) : Օրինակներ ու փաստեր շատ կան:

Եթե չլինի այժմիտ մեզ շուտափուլթ օգնություն, որ ազատվենք մահի ճանկերից, եթե մեր երեխաների մասին չլինի հոգացողություն՝ որբանոց, եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից, ևս առավել, եթե մեր երկիրը չդառնա Սովետական Ռուսաստանի մասը և մեր գլխից չվերանա թուրքական յաթաղանը մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը, և պիտի

ավելացնենք, որ այդ ուղղությամբ շատ գյուղեր արդեն քայլեր արել են, ինչպես օրինակ մեր եղբայր կաթոլիկ հայերը, որ պատրաստվում են գաղթելու:

Հույս ունենք, որ մեր այս գրությանը ուշադրություն կդարձնեք և կտնօրինեք ինչ հարկն է և կուղարկեք Ձեր կողմից մի մարդ՝ մեր երկրին ու կենցաղին տեղյակ մարդ, որ գա ամեն ինչ տեսնի ու Ձեզ մանրամասն զեկուցանի: Սակայն ամենից առաջ օգնություն շորի ու սննդի:

Սուլդայի ներկայացուցիչներ՝ Թադեոս Ապաջյանց
Վաղարշակ Ակոպյանց
Գրիգոր Կուջոյան՝ նրա անգրագիտության պատճառով և իր խնդրանոք ստորագրեցի՝ Մամիկոն Ալթունյան

Մրակովալ գյուղի ներկայացուցիչ՝ Լևոն Կարապետյան

Վաչիան գյուղի ներկայացուցիչներ՝ Լևոն Ալեքյանց,
Արտակ Կասպարենց
Վարդգես Պոլոյենց Ափոյենց

Կարզախի ներկայացուցիչներ՝ Ցոլակ Կարապետյան
Մամիկոն Ալթունյան

Դատեշ գյուղի ներկայացուցիչ՝ Մեսրոպ Մովսիսյան

23/4 1921թ.
Թիֆլիս

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. .114, ց.2, գ.46, թ.65-66:

Փաստաթուղթ թիվ 4

Протокол ¹ 13
Зас. пленума Кавбюро 7.VII.1921
Сталин, Орджоникидзе, Махарадзе, Киров,
Нариманов, Мясников, Назаретян,
Орахелашвили, Фигатнер.

НКИД* Г. Сванидзе
А. Мравян

1. О присоединении нейтральной зоны к Грузии или к Армении	1 Вся нейтральная зона входит в состав ССР Армении (голосуют за – 6, воздержался – 1)
2. О присоединении к Армении Ахалкалакского и Храмского районов	2.Передать на рассмотрение ЦК Грузии, заключения которого внести на следующий пленум.

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, թ. 45:

* Народный комиссар иностранных дел.

Փաստաթուղթ թիվ 5

Протокол № 1

Заседания Политбюро ЦК КПГ 16.VII.1921г.

Присутствовали: Махарадзе Ф., Мдивани Б., Орахелашвили М.

Слушали:	Постановили:
1. О нейтральной зоне	1.Подтвердить постановление Кав.бюро ЦК РКП о передаче этой зоны Сов. Армении. За: Махарадзе, Орахелашвили Мдивани полагает, что этот вопрос уже предрешен в постановлении Кав.бюро, иначе он считал бы целесообразным производство плебисцита населения.
2. Об уступке Сов. Армении для переселенческого фонда Ахалкалакского и Храмского районов	2. Исходя из соображений политических, равно как экономической связи Ахалкалакского района с Тифлисом, признать предложение т.т. армян неприемлемым.

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, թ. 43:

Փաստաթուղթ թիվ 6

....ԱԽԱԼՔԱԼԱՔԻ[1] ԳԱՎԱՌԸ

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

Խ. Ս. Հայաստանի

Արտաքին Գործոց

Ժողովրդական

կոմիսար

ընկ. Ասքանազ

Մռավյանի համար

Պողոս Աբելյանից

Ընկեր Մռավյան.

Դուք ինձ առաջարկեցիք առողջանալուց հետո գրել մի համառոտ զեկուցագիր Ախալքալաքի գավառի մասին: Ես կարող եմ ուշ առողջանալ կամ էլ չառողջանալ. իսկ իմ տալիք տեղեկությունները Ձեզ այժմ են հարկավոր: Վերջին հանգամանքը ի նկատի ունենալով՝ ես որոշեցի թեկուզ հիվանդ, տալ Ձեզ մի քանի էական տեղեկություններ Ջավախքի դրության և կյանքի զանազան կողմերի մասին: Անշուշտ, Դուք գրությանս շատ թերություններին ներողամիտ աչքով կնայեք, չմոռանալով, որ նրա հեղինակն անկողնի մեջ պառկած է շարադրում այս զեկուցագիրը:

1. Ջավախքի պատմությունից

17-րդ դարից սկսած մինչև 1828թ., այսինքն՝ մինչև ռուսական տիրապետությունը, Ախալքալաքի շրջանը, Ախալցխայի փա-

շայության հետ միասին, Տաճկաստանի տիրապետության տակ էր գտնվում: Նշանակում է, Ռուսաստանն Ախալքալաքը ստացել է պատերազմի իրավունքով (Տաճկաստանից և ոչ թե Վրաստանից):

Մինչև 1829 թիվը Ախալքալաքի շրջանում ապրելիս են եղել մեծ մասամբ տաճիկներ, սակայն նրանք ռուսների գալով, մեծ մասամբ գաղթել են Տաճկաստան, որքան ինձ հայտնի է, Էրզրումի շրջանը այն հայերի վայրերում, որ 1828 և 1829թթ. Կարապետ եպիսկոպոսի[2] ղեկավարությամբ Էրզրումից գաղթեցին մասամբ Ալեքսանդրապոլ, գլխավորապես՝ Ախալքալաք և Ախալցխա: Բայց չի կարելի ասել, թե Ախալքալաքի հայությունը բաղկացած է միմիայն գաղթական տաճկահայերից. դեռ օսմանյան տիրապետության շրջանում այնտեղ ապրելիս են եղել ինձ համար անհայտ քանակությամբ հայեր, որոնց տոհմերին մինչև օրս էլ կարելի է պատահել օր. Տիլիսկա, (Դիլիսկա - Ա.Մ.), Գանձա (Վահան Տերյանի գյուղը) գյուղերում: Այդպիսիներին գավառում անվանում են եռլիներ՝ բնիկներ: Տաճկաստանից, եթե չեմ սխալվում, գավառ են գալիս մոտ 15000 հայ, որ տեղական չնչին քանակությամբ տաճիկների, մի քանի տասնյակ քրդերի և վրացիների համեմատությամբ, կազմում են հենց սկզբից (1829թ.)[3] բնակչության ճնշիչ մեծամասնությունը: Գաղթական հայերի[4] հետ եկած, ինչպես հայախոս հայ կաթոլիկներին (ներկայումս մոտ 7-8 հազար), այնպես էլ տաճկախոս հայ կաթոլիկներին (թվով մոտ 9000) վրաց մենշևիկյան կառավարության օրոք ու հովանավորությամբ և վրաց մամուլի զգալի մասը և ինքը՝ մենշևիկյան կառավարությունը, զանազան խոստումներով ու ահաբեկումներով, հայտարարեցին վրացի կաթոլիկներ...: Հայ կաթոլիկների մի մասը, անգիտակից, աղքատ, ճնշված մասը, ինքը նույնպես ինքնապահպանման բնազդից դրդված, իրեն վրացի սկսեց համարել և շատերն իրենց ազգանունները վերածեցին ձե, շվիլի վերջավորությունների: Բայց մյուս մեծ մասը կանգ չառավ մենշևիկյան բլոկի հալածանքների դեմ և իր մարդկային արժանապատվության դեմ ոչինչ չարեց՝ նա իրեն հայ է համարել, հայ էլ համարում է: Եթե չեմ սխալվում, հիսունական թվականներին Նիկոլայ I Բոնապետը Ղրիմից մի մեծ քանակության դուխոբորներ է աքսորում Ախալքալաքի գավառը[5]: Բայց այդ դուխոբորներն Ախալքալաքի շրջանում ստանում են յուրաքանչյուրը մի քանի անգամ ավելի հող, քան հայերը, վրացիները և թուրքերը: Այժմ էլ ամեն մի դուխոբոր, համեմատած բնակչության մյուս տարրերի հետ, իրեն ներկայացնում է մի տեսակ կալվածատեր: Դուխոբորներին տալիս են մեծ մասամբ մոտակա,

հայերից խլած հողերը: Այդ է պատճառը, որ ժամանակ առ ժամանակ, մանավանդ հեղափոխությունների սկզբներին, դուխոբորների ու սակավահող հայ գյուղացիների մեջ վեճ է ծագում մի ժամանակ խլված հողերը վերադարձնելու մասին: Դուխոբորների և հայերի այդ վեճը բարեբախտաբար երբեք սուր աստիճանի չի հասել, իսկ այժմ անասնազուրկ և սերմազուրկ հայն իր ունեցած հողն էլ չի կարողանում ցանել և չի հիշում իր հին հողային իրավունքների մասին: Ավելին, այժմ դուխոբորներն ուզում են իրենց հին հայրենիքը վերադառնալ: Գավառի ինչպես ամբողջ հայությունը, այնպես և դուխոբորների հետ դավա դատ ունեցող հայերը պատրաստ են նոր արտոնություններ տալ նրանց, միայն թե չգնան: Ախալքալաքցին առանց նրան վախենում է մենակությունից, այսինքն կարծում է, որ առանց ռսի տաճիկն իրեն ավելի շատ կոչնչացնի, պարզ է, ներկա օսմանյան կառավարության մտքով: Դուխոբորի գնալն Ախալքալաքից ախալքալաքցու համար համազոր է ռուսի գնալուն Կովկասից:

2.Ջավախքի աշխարհագրական դիրքը

Ջավախքը, ինչպես հայտնի է, բաղկացած է ընդարձակ, այսպես ասած լեռնադաշտից և նրան եզրող բարձր լեռներից: Թե՛ լեռնամասերում և թե՛, մանավանդ, սարահարթերում բուսնում են գարի, ցորեն, կտավատ և առհասարակ զանազան ծիթաբույսեր: Ախալքալաքում գրեթե աշնանացան չկա: Անծրևներ հաճախ են գալիս: Առանց ոռոգման լավ աճում են նույնպես գետնախնձոր և այլ բանջարեղեններ: Բայց Ախալքալաքի ապագան նրա անասնապահության և մեղվաբուծության մեջ է: Ախալքալաքի անասունի միսը և մեղրը եզակի համ ունեն: Ամեն մի քայլափոխում հիանալի աղբյուրներ կան: Անտառներ գավառը չունի: Ախալքալաքի հյուսիսային մասում Գորվա գավառում կան յայլաներ, արոտատեղեր, որ հնուց Ախալքալաքի տասնյակ հայ գյուղերի ձեռքումն են եղել: Այժմ աշխատում են, օգտվելով գյուղացիների խեղճացած դրությունից, խլել այդ հողերը, սարերը և տալ դրսի տարրերին թուրքերին: Նույնիսկ սակավանասուն ախալքալաքցին զգում է դրա մեջ իր տնտեսական զարգացման համար մահացու սպառնալիք: Բղավող պահանջն է՝ այդ յայլաները պետք է խլել Գորվա գավառից և միացնել իրենց բնական վայրին Ջավախքին: Նրանց արհեստական կերպով մի ժամանակ կտրել են Ախալքալաքից և միացրել

են Ռոմանովների տան Բորժոմի կալվածքին: Այժմ այլևս ոչ ոք բռնությամբ չի կարող գավառից կտրել նրա օրգանական մասը, երկրորդ յայլաները պետք է մնան իրենց նախկին իսկական տերերի ձեռքում: Առհասարակ նկատվում է. ինչ հողեր որ այս երկուերեք տարում պետականացվել են, զարմանալի զուգադիպությամբ հայերին չեն տրվել: Չեն տրվել հաճախ և այն կալվածատիրական հողերը, որ ի սկզբանե եղել են հայ ժողովրդի ձեռքում: Օրինակ՝ Ախալցխայի եկեղեցիների, ճիշտը՝ դպրոցների հայտնի (15.000 դեսյատինից ավելի Ախալքալաքի գավառում) կալվածքը՝ «Գեոգ դաղ» արոտատեղերը խլում են եկեղեցուց, բայց և մեծ մասամբ խլում են միաժամանակ մերձակա Սուլտա, Տատեշ և Կարծախ գյուղացիներից, որոնք 1829 թվից ապրում են այդ հողերի մոտ ու վրա: Ասենք (խոսքը- Ա. Մ.) հայերին գավառում խորթ հայտարարելու մասին է:

Ախալքալաքից չորս մեծ ճանապարհներ են գնում ա) մեկը՝ դեպի Ախալցխա, ամենալավն է, որովհետև ձմեռը ձյունով չի ծածկվում բ) մյուսը՝ ոչ այնքան կանոնավոր, Ծալկայի և Մանգլիսի վրայով գնում է դեպի Թիֆլիս, գ) երրորդը՝ մոտ 100 վերստ երկարությամբ (Ախալքալաքից Ախալցխա տանող ճանապարհը 66 վերստ է), տանում է դեպի Ալեքսանդրապոլ և դ) չորրորդը՝ նույն երկարությամբ խճուղին տանում է դեպի Արդահան: Ախալքալաքի գավառի մակարդակը, որքան հիշում եմ, 2200 վերստի չափ է: Այս ճանապարհներից վերջինը՝ Արդահանինը բնակչության համար 1918 թվից հանդիսացել է ուղղակի մահվան ճանապարհ: Տաճիկները, այդ թվից սկսած մինչև այս տարվա մարտի սկիզբը, չորս անգամ մտել են գավառ, թալանել, կոտորել են գյուղացիությանը, հատկապես՝ հայերին (միայն 1918 թվին վրացիներին էլ, երբ սրանք հայերի հետ միասին կռվում էին տաճիկների դեմ) և անպատիժ հեռացել: Այդ այսպես կոչված Արդահանի դուռը միշտ փակված պետք է պահել թե՛ գավառի և թե՛ առհասարակ Թիֆլիսի շրջանի համար:

Չէ՞ որ տաճիկները 1914 թվին նույնպես այդ դռնով փորձեցին մտնել Անդրկովկաս: Այս լավ էր գիտակցում Ախալքալաքի Հայրենակցական նախկին վարչությունը: Ես և գրող Դերենիկ Դեմիրճյանը դեռ Ախալքալաքի անկումից մի երեք ամիս առաջ, 1918 թվի փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին շարունակ դիմում էինք կովկասյան նախկին սեյմին, մեր այն ժամանակվա Ազգային խորհրդին, հատկապես նրա զինվորական նախարար Ստ. Մամիկոնյանին, ցույց էինք տալիս ժողովրդի գլխին պատրաստվող

աղետի հնարավորությունը և պահանջում էինք ա/. բնակչության մթերքի, գոնե միլիոնավոր փթերով հացահատիկի մի մասն արտահանել հարևան գավառները, որ մի գայթակղություն քիչ լինի ավազակային հարձակման համար գավառի վրա, բ). պատրաստվել հնարավոր էվակուացիայի համար և գ). գլխավորը. գավառը, ճիշտը՝ խեղճ գյուղացիությունը պաշտպանելու համար ուժեր ուղարկել գավառ և կազմակերպել տեղական ուժերը, առհասարակ գավառը համարել կարևոր զինվորական կետ: Մեզ չլսեցին, մեր առաջարկներին Մամիկոնյանը միշտ պատասխան ուներ. «ոչ մի փամփուշտ ախալքալաքցիներին»: Վերջ ի վերջո մի պոգրանիչնի ժանդարմ-գնդապետ գրաբերի[6] ուղարկեցին , որը վախից փախավ, երբ տաճիկները մտան քաղաք: Այժմ էլ բնակչությունը վախենում է, որ այդ կետի վրա ուշադրություն չեն դարձնում, ուստի հնարավոր է նոր աղետ: Տաճկաստանն այդ կետի նշանակությունը լավ է հասկացել իր պոգրոմային[7] նպատակների համար: Նա Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում, այդ գործին լավատեղյակ Զորի Զորյանի[8] ասելով, ունի պահած այժմ էլ 60-70 հազար կանոնավոր և ոչ կանոնավոր զորք, որն ամեն մի հարմար րոպե կարող է մտնել գավառ, ինչպես և մտել է: Ով կամենում է Ախալքալաքի, մասամբ և Բորչալուի և Լոռվա գյուղացիությանը փրկել անակնկալներից, Արդահանի դուռն ընդմիշտ պիտի փակել, այսինքն մի կողմից Ախալքալաքը պետք է զինվորապես ուժեղացնել, մյուս կողմից պետք է Արդահանի, Չլդրի և հարևան շրջաններում կուտակվող ուժերը ցրել, ինչպես և ոտքից գլուխ զինված բնակչությունը (մահմեդական)՝ զինաթափել:

Ախալքալաքցի հայերին մենշևիկյան Վրաստանը վաղուց զինաթափ էր արել՝ զինելով գավառի թուրքերին ու վրացիներին:

3.Բնակչության կազմը

Բնակչության կազմը որոշելու նյութեր պետք է տային 1916 և 1917թթ. գյուղատնտեսական միօրյա թվագրի (однодневная сельскохозяйственная перепись) հետևանքները, որ դժբախտաբար, դեռ հրատարակած չեն: Սակայն կովկասյան օրացույցի 1917թ. վերջի (տվյալները-Ա.Մ.) և մեր անձնական տեղեկությունները գրեթե տալիս են բնակչության ազգագրական կազմի հետևյալ ստույգ պատկերը.

Ըստ կովկասյան օրացույցի՝ միակ պաշտոնական տեղեկությունների 1916 թվի հունվարի 1-ին (այնուհետև տեղեկություններ չեն եղել) Ախալքալաքի գավառում կար ընդամենը.

1.հայեր շուրջ թիվ	83000 հոգի
2. Քրիս. և մահ. վրացիներ...	10000 ,,
3. դուխոբորներ.....	8000 ,,
4. Թուրքեր (տաճիկներ).....	8000 ,,
5. Քրդեր և մի քանի տասնյակ հույներ և այլ ազգեր	1000 ,,
Ընդամենը՝	110000 ,,

1918թ. հունիսից սկսած այս թվերի մեջ տաճկական արշավանքը և նրա ուղղակի ու անուղղակի հետևանքները (գլխավորապես մենշևիկների սարքած արհեստական սովամահությունը և ցրտահարությունը Բաքուրիանի[9] և Օալկայի մահավայրերում) առաջացրին հետևյալ մոտավոր թվերը: Հայ բնակչության թիվը կովկասյան օրացույցում զգալիորեն պակաս պետք է բերված լինի. հայերը 1916 թվի հունվարի 1-ին գավառում կլինեին ոչ պակաս 90-95 հազարից: Եթե 1916 թ.-ի հունվարի 1-ից աճումը հաշվենք մինչև տաճկական մեծ արշավանքը, մինչև 1918 թ.-ի հունիսի 5-ը՝ Ախալքալաքի գրավումը և բնակչության փախուստը, այն ժամանակ բնակչության թվական պատկերը կլինի հետևյալը.

1. հայեր ընդհանուր թվով	100000 հոգի
2. վրացիներ /մահ. և քրիս./	11000 ,,
3. դուխոբորներ	9000 ,,
4. թուրքեր	$8^3/_4$ հազ. ,,
5. քրդեր և այլ ազգեր	$1^1/_4$ հազ ,,
ընդամենը՝	130000 ,,

Ներկայումս ժողովուրդի՝ գլխավորապես հայերի և մասամբ վրացիների մի մասի մահացումից հետո (նույնպես թուրքերը քիչ տուժեցին).

1. հայեր՝ ոչ պակաս ...	60000 հոգի
2. վրացիներ (մահ. ու քրիս)	8000 ,,
3. դուխոբորներ....	9000 ,,

4. թուրքեր.... 8000 ,,

Ընդամենը՝ 85000 ,,

Ուրիշ խոսքով, տոկոսական տեսակետից բնակչության ազգագրական կազմը (ամբողջության վերաբերմամբ) արտահայտվում է այսպես.

1. հայեր 70,5 %
2. վրացիներ 9,5 %
3. թուրքեր 9,5 %
4. դուխոբորներ 11 %[10]

Եթե վերցնենք միմիայն հայերին և վրացիներին, նրանք կազմում են.

1.հայեր 88 %
2. վրացիներ 12 %

Մենշևիկյան կառավարությունն աշխատում էր դրսից բերած վրացիներով բնակեցնել գավառի հայապատկան հողերը, սակայն նա առանձին հաջողություն չունեցավ՝ տաք եղանակի սովոր քութայիսցի վրացին դաժան բնություն ունեցող (ձմեռը) Ախալքալաքից չէր հափշտակվում: Այնուամենայնիվ, կարծեք, մի քանի հարյուր հոգի բերված են, որոնց ես հաշվի չեմ առնում: Նրանք բերված և բնակված են տեր ունեցող հողի վրա, ուստի գավառի բնակիչներ չեն կարող հաշվվել:

4.Տաճկական առաջին հարձակումները գավառի վրա

Վրաց մենշևիկյան և մանավանդ կալվածատիրական մամուլը վերջին տարիներն աշխատում էր Ախալքալաքի վրա թուրքերի հարձակվելը միմիայն դաշնակցության գործ դուրս բերել: Ես Ախալքալաքում չեմ եղել: Եղա 1918 թվի մայիսի վերջերից մինչև գավառի անկումը, իբրև հայ-մուսուլմանական բլոկի և հայրենակցությունների միության ներկայացուցիչ գավառի ժողովուրդների մեջ համերաշխություն հաստատելու համար: Սակայն ուշ էր համերաշխության համար աշխատելը, գավառում թուրքեր չկային, նրանք փախել էին: Տաճիկ զորքի հետ կռվում էին միացած հայերը և վրացիք: Ինձ վիճակվեց գավառական ամբողջ ինտելիգենցիայի և հայ զորքերի հրամանատար գնդապետ Առաքելյանի ֆիքսա-

ցիայի ենթարկված փախուստից հետո, երկու-երեք օրով կազմակերպել դիմադրություն տաճիկներին, որ ժողովուրդը կարողանա փախչել: Սակայն, ամեն միջոցով ես Թիֆլիսում անաչառորեն հետևել եմ դեպքերի զարգացմանը գավառում և ահա ինչպես են նրանք հաջորդվում (հիշողությամբ եմ ասում՝ գրավոր ոչինչ չկա տրամադրությանս տակ, ուստի շատ մանրամասնություններ բաց եմ թողնում):

Կարծեք 1918 թվի փետրվար ամսին տաճկական ագենտների ղեկավարությամբ Ախալցխայի շրջանի մեծամասնություն կազմող թուրքերը (չխառնել թաթարների հետ) հարձակվեցին նույն գավառի վրացական 11 գյուղերի (Սարո, Խիզաբավրա և այլն) վրա և թալանեցին: Թիֆլիսի թերթերը և սեյմը ստացան հեռագրեր: Հայերը (Ախալքալաքի գավառի) օգնեցին վրացիներին և ետ մղեցին գրոհը: Այսպիսով, կազմվեց երկու կողմ՝ թուրքեր օսմանցիների ղեկավարությամբ և հայեր ու վրացիներ, սկզբում իրենց տեղական խմբապետների, իսկ մի երկու ամիս անց, մարտ-ապրիլից սկսած, իբր թե կանոնավոր զորահրամանատարների ղեկավարությամբ՝ հայերը գնդապետ Առաքելյանի (որն իրեն ենթակա էր համարում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, իսկ վերջը, երբ պետք է Բաքուրիանից փախչեր՝ Բորժոմում նստած վրացի գեն. Արջևանիձեին), իսկ վրացոց ղեկավարն էր (միաժամանակ բոլոր ուժերի հրամանատար) այդ գեն. Արջևանիձեն, որը տաճիկների դեմ գործում էր և Ախալցխայի շրջանում: Այդ ժամանակ (մարտին՝ իմ կարծիքով) Ախալքալաքի ավելի ուժեղ հայությունը հարձակվում է Ախալքալաքի և Ախալցխայի սահմանի վրա գտնվող թուրք, որքան հիշում եմ Կոկիա գյուղի վրա, թալանում են գյուղը (ոչ քանդում), գյուղացիք փախչում են Արդահան: Արդահանի տաճիկներն այդ բանից երեք օր հետո կոտորում են Արդահանի մի քանի հազար հայերին: Երկու հազարի չափ արդահանցի ճողոպրած կանայք ու երեխաներ սոսկալի դրությամբ հասնում էին Արդահանից Ախալքալաք: Ախալքալաքցիները նրանց ընդունում են, պահում, սակայն նրանցից տպավորությունը ցնցող է լինում: Տեղական խուլիգան տարրերը, որոնց տրամադրություն չեն ունենում սանձահարելու իշխանությունները, ձեռքում ունեցած հայ էսէռները և դաշնակցականները, մանավանդ ավելի ուժեղ դաշնակցականները, հարձակվում են բանտում նստած մոտ 300-400 հոգի թուրք, գլխավորապես հարուստ (կալվածատեր Պալավանդովների ամբողջ տոհմն այստեղ է լինում) գերիների վրա, անպատվում են նրանց, կողոպտում

և տան մեջ այրում բոլորին: Մինչ այս ամենը տեղի էր ունենում գավառում, սեյմը և Ազգային խորհուրդը ոչինչ չարին տեսնելու, թե ինչ է կատարվում այդ խորշում: Սարոյի դեպքերի առթիվ սեյմի անդամները քիչ գործածեցին իրենց լեզուները, իբր թե պատգամավորություն ուղարկեցին: Բայց այս ամենը կատարվեց: Որքան դեպքերն ավելի էին ծավալվում, այնքան Հայոց ազգային խորհուրդը և սեյմը խուլ էին ձևանում: Այդ ժամանակ միակ խելացի և գիտակից գործող ուժը Տաճկաստանն էր: Նա Արդահանի ճանապարհով, զինված խուժանով մտնում է Ախալքալաք: Առաջին անգամ մտավ մայիսի երկրորդ կեսին: Ժողովուրդը փախավ: Տաճիկները ետ քաշվեցին, երևի կամենալով անտառները փախած ժողովրդին ետ բերել անասունները խլելու և իրենց կոտորելու համար: Հիրավի, ժողովուրդը հետ եկավ: Հունիսի 1-5-ը տեղի ունեցավ երկրորդ արշավանքը: Այս ժամանակ գավառի ամբողջ ժողովուրդը փախավ, նույնպես գնդապետ Առաքելյանը: Ժողովուրդը և զորքը մնացին անտեր: Ես մի երկու օր առաջ գավառ եկա (ասացի հայ-թրքական բլոկի և հայրենակցական միությունների կողմից համերաշխություն հաստատելու), ստիպված եղա գործի գլուխ կանգնել: Սքանչելի ռուս կապիտան Ռեզնիկովի հետ արագ կազմակերպեցինք երկու-երեք օրով դիմադրություն: Ամսի 4-ին մեր ընդ. հրամ. գեն. Արջևանիձեն, առանց մեզ իմաց տալու (կանգնած էինք առաջին գծում, թշնամուց 5-6 վերստ հեռու) գիշերը Բորժոմ է քաշում վրացական ուժերը և մեր թիկունքը բաց անում: Բարեբախտաբար՝ բնակչությունը (բացառությամբ թուրքերի ձեռքը մնացած մի քանի հազար հոգու, որոնց նրանք կոտորում են, խնայում են միայն մի քանի տասնյակ քաղաքացի պառավների և կանանց, որոնց վռնդում են գավառից) արդեն Բորժոմի և Օալկայի սահմաններումն էր: Հունիսի 5-ին մեր զորամասը ևս մաքրեց գավառը, որը մնաց ամբողջապես տաճիկների ձեռքը մինչև 1918թ. դեկտեմբերի սկզբները, ճիշտը՝ մինչև դեկտեմբերի 5-ը, երբ դաշնակիցների հաղթության հետևանքով նրանք հեռացան և մտան վրացիները: Ինձ ամենաստույգ աղբյուրներից հայտնի է, որ տաճիկները հեռանալիս առաջարկել են գրավել գավառը Երևանի կառավարությանը, սակայն սա, չկամենալով անկոռեկտ լինել վրաց նկատմամբ, հրաժարվում է, և այսպիսով, վիճելի գավառը ժամանակավոր գրավելու իրավունքը տալիս է վրացիներին:[11]

5.Տաճիկներն ի՞նչ տարան գավառից

Ախալքալաք գավառը հաճախ ենթակա է լինում բնական պատահարների՝ կարկուտ, երաշտ, ցուրտ և այլն, ուստի և հաճախ աղքատանում է: Սակայն վերջին տարիները բնությունը որոշել էր ապշեցնել գյուղացիությանն իր առատաձեռնությամբ: Մի քանի տարի իրար հետևից լինում էր չտեսնված բերք, մանավանդ 1917 և 1918թթ.: Բնակչությունը փողի կարիք չուներ և քիչ էր ծախսում իր բերքը՝ գարին և ցորենը: Թուրքերի եկած ժամանակ գավառում կլիներ ամենաքիչը 3-4 միլիոն փութ պատրաստի հացահատիկ, 30 հազարից անց փեթակ, 200 հազարից անց գլխավորապես խոշոր անասուններ, միլիոնավոր փթերով դարման խոտ և հարդ, տասնյակ հազարներով տնային թռչուններ (հայտնի է, որ գլխ. Ախալքալաքն էր Թիֆլիսին ձու տվողը) և այլն և այլն: Մի խոսքով սա Կովկասի ամենահարուստ գավառն էր այդ շրջանում: Իսկ անասուններով միշտ ամենահարուստն է եղել: Ախալքալաքի թե տնտեսական զարգացումը և թե՝ բնակչության աճումը եզակի տեղ էին բռնում: Բնակչության աճումն արտահայտվում էր 2 1/4 և 2 1/2 կոեֆիցենտով (Ռուսաստանում այդպիսի կոեֆիցենտ չկա): 1829 թվի 10-15 հազար հայությունը 1918 թվին 100 հազարի էր հասել... օր. մեր գյուղը (Գյունբուրդա), որ 1829 թվին 20-25 տնից էր բաղկացած, 1918 թվին 250 տուն ուներ, ըստ որում Ախալքալաքի գյուղական միջին ընտանիքն ուներ 8 անդամից ոչ պակաս, գուցեև մինչև 9: Պաշտոնական տեղեկությունները երևի 6-7 անձից ավելի չեն հաշվում, ուստի և բնակչության ընդհանուր թիվը պակաս է դուրս գալիս: Գավառը տնտեսապես այնպես էր զարգացել, որ չգիտեր ինչ աներ շատ արտադրությունից: Փաստ է՝ 1917թվին հարսանիքներին հաճախ պարում էին հարյուրանոցների վրա: Բնության առատաձեռնությունից կատաղած այս կրեսոսները տաճկական արշավանքով ոչ միայն կորցրին իրենց ամբողջ գույքը, այլև 1918 թվի բերքը, որ ամենահամեստ սպասելիքներով պետք է տար 7-8 միլիոն փութից ավելի: Ի դեպ, գավառից չփախան մոտ 6 հազար հայ կաթոլիկներ (նրանք մնացին իբրև Հռոմի կամ ինչպես իրենք են թուրքերին ասել, Ավստրիայի հպատակներ), դուխոբորները և բնականաբար՝ թուրքերը: Փախան մոտավորապես 90 հազար հոգի հայեր: 2-4 հազ. հայ գավառում մնացին, մասամբ մորթվեցին, ինչպես Խորենիա, Սաթխա և այլ գյուղերի բնակիչների

մի մասը, մասամբ էլ հետագայում վռնդվեցին Բորժոմի կողմերը, ինչպես քաղաքի մոտ 1000 պառավներ, երեխաներ և կանայք: Փախան և 11 հազար վրացիներ (բոլոր վրացիները): Այս 100 հազար գյուղացու ձեռքում կլիներ 60 հազար դեսյատինից ոչ պակաս բերք:[12] Եթե դեսյատինը տար 150 փութ , այդ կաներ 9 միլիոն փութ հաց: Կարճ (ասած-Ա.Մ.), տաճիկներին պատրաստի և բերքով մնաց ոչ պակաս 10 միլիոն փութ հաց, միլիոնավոր փթերով դարման, տասնյակ հազար փթերով յուղ, պանիր, տասնյակ հազար փեթակներ, հավեր, տաս հազար փութ բուրդ, անսահման տնային իրեր, երկրագործական գործիքներ, քաղաքի ապրանքը, զինվորական գույք և այլն, և այլն: Նույնպես նրանց մնաց, կամ հետագայում Բորժոմի լեռներում և Ծալկայում անպաշտպան գաղթականության վրա հաճախ հարձակումներով, խլվեց երեք-չորս տասնյակ հազար խոշոր անասուն: Ահա այսպիսի ժառանգություն մնաց տաճիկներին: Հետագայում ականատեսները պատմում են, որ թուրքերը ամբողջ հինգ-վեց ամիս, իրենց տիրապետության շրջանում հունիսի 5-ից մինչև դեկտեմբերի 5-ը (1918թ.) գավառի հայ կաթոլիկների և դուխոբորների հարյուրավոր սայլերով կրում էին Տաճկաստան այդ բարիքը և ապշած էին մնացել այդ հարստության վրա: Տաճիկների ասելով այդպիսի հարուստ գավառ նրանք չէին տեսել: Այսպես անկազմակերպ, անտեր գյուղացիության վրա հարձակվեց մի զինվորական ուժ, կողոպտեց այդ գյուղացիությանը և անպատիժ կերպով յուրացրեց թալանը: Կրեսոսները դարձան մուրացիկներ, իսկ մուրացիկները՝ կրեսոսներ: Մեկը աշխատեց, մյուսը խլեց այդ աշխատանքի արդյունքը:

6.Բնակչությունն օտարության մեջ

Ախալքալաքի ճարհատ հայությունը և 10 հազար վրացիությունը գավառից կարողացան փախցնել իրենց անասունների զգալի մասը, բավականաչափ անկողին, առհասարակ տնային իրեր և մի երկու ամսվա հաց: Գաղթականությունը մի կողմից ուղղվեց Բաքուրիան, մյուս կողմից՝ Ծալկա: Վրաց կառավարությունը, որ չկարողացավ մի 1000-2000 տաճկից (այդքանից ավելի չէր լինի տաճիկ զորքը, իսկ եթե կազմակերպեին, միայն Ախալքալաքը՝ չհաշված Ախալցխան, կհաներ 10 հազարից ավելի բանակ) պաշտպանել գավառը, ժողովրդի ձեռքից Բաքուրիանի սահմանի վրա խլեց ամբողջ զենքը, նույնիսկ հայ զորամասերից:

Վրաց կառավարությունը Ախալքալաքը համարում էր իրենը, ուրեմն և ախալքալաքցիք իր հպատակն էին: Չնայած սրան, իր քաղաքացիներին իրավունք չտվեց դուրս գալու Բաքուրիանի և Ծալկայի գծերից և դենը շարժվել: Բնակչությունն իր առողջ, աշխատասեր բնավորությամբ կարող էր Վրաստանում գործ գտնել, իր սայլերով կարող էր Հյուսիսային Կովկասից (ճանապարհը դեռ բաց էր) հաց բերել, փայտ կարող էր բերել Թիֆլիսից, տասնյակ հազարավոր կովերով Թիֆլիսին կարող էր կաթ տալ, մի խոսքով, այդ գյուղացիությունը ոչ միայն չէր ծանրանա Վրաստանի վրա, այլ կթեթևացներ նրա տնտեսական ճգնաժամը, եթե նրան չզրկեին ամեն մի քաղաքացու անբռնաբարելի իրավունքից տեղաշարժության իրավունքից: Չնայած այս ձեռնտու հանգամանքին, մենշևիկյան կառավարությունը որոշ դիտումով գյուղացիության առաջ կարդոններ[13] դրեց Վրաստանում չտարածվելու համար: Վրաց 11 հազ. գաղթականության առաջ շուտով այդ արգելքները վերացան: Նրան ազատություն տրվեց գնալու ուրիշ վայրեր, իսկ երբ ցրտերը եկան (հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին), կառավարությունն ինքը վրացի գյուղացիներին ջոկեց և տարավ այդ լեռներից Կարայազ: Կառավարությունը, հայ գյուղացիությանը բացօդյա ձերբակալման ենթարկելով, արդարանում էր մի կողմից նրանով, թե Վրաստանում ժողովուրդը կզայրանա, եթե այդքան գաղթականն հայեր ցրվեն նրանց մեջ և, երկրորդ, իբր թե գաղթականությունը հիվանդություններ կտարածե: Սուտ է, ոչ վրաց ժողովուրդն էր զայրանում, նա ևս ամեն մի ժողովրդի նման բնական էր գտնում գաղթականներին տեղ տալը (3 միլիոն ժողովուրդ տեղ պետք է տար 100 (հազ-Ա. Մ.) գաղթականի), մյուս կողմից, գաղթականության մեջ առաջին ամիսներին ոչ մի հիվանդություն չկար: Կառավարությունն ինքը ստեղծում էր պայմաններ հիվանդությունների երևան գալու համար, և հիվանդությունները հետագայում առաջ եկան:

Այսպիսով, Ախալքալաքի 90 հազար հայ գաղթականությունը գտնվում էր երկու սվինի մեջտեղը՝ հետ, Ախալքալաք գնալուն արգելում էր տաճկական սվինը, առաջ՝ Վրաստան շարժվելուն արգելում էր վրացական սվինը: 1918թվի հունիսի 5-ից մինչև 1918թ. դեկտեմբերի վերջերը, այսինքն՝ մինչև վերադարձը, գաղթականությունը Բաքուրիանում և Ծալկայում ապրեց այդ գծերի շրջանում: Միայն ճարպիկ քաղաքացիների զգալի մասը կարողացավ Թիֆլիս անցնել: Թե ինչ անտակտ վարվեց կառավարությունը, երևում է հետևյալ հանգամանքներից:

Բաքուրիանում և Ծալկայում շատ քիչ բնակչություն կա. Բաքուրիանում հույն և օս, Ծալկայում հայ և հույն: Ամենից առաջ կառավարությունը ոչինչ չուներ (անհանգստանալու-Ա. Մ.), որ 90 հազար գաղթականությունը, բնականաբար մի անկյուն որոնելով, կնեղեր մի երկու տասնյակ հազար ոչ վրացի տարրերի: Նրանց և հայերի գժտվիլը նույնիսկ վատ չէր լինի մենշևիկների համար: Սակայն, ի պատիվ Բաքուրիանի օսերի, Ծալկայի հույների և հայերի, պետք է ասել, որ նրանք գաղթականության ամբողջ ծանրությունը վերցրին իրենց ուսերին և չդժգոհեցին: Միայն գաղթականության շատ չնչին մասը կարողացավ տներում տեղավորվել: Ուրեմն շատը մնաց բացօդյա: Երկրորդ, անասունները կեր չունեին և պետք է կամ ծախեին կամ անասունները պետք է կոտորեին: Ճիշտը՝ անասունները և ծախեցին, և կոտորեցին: Այնուհետև կառավարությունն արգելեց, որ գաղթականության համար Վրաստանից հաց բերվի: Այդ իրավունքից զուրկ չէին միայն գաղթ. մարմինները. զուրկ չէին երևի, որովհետև նրանք կամ ոչինչ չէին անում, կամ ոչնչացնում էին իրենց պետքերի համար գաղթականության համար բերված սուղ մթերքները: Այսպիսով, Ծալկայում և Բաքուրիանում (ոչ-Ա. Մ.) գաղթականությունը, ոչ էլ նրա անասունները ոչ տուն ունեին, ոչ սնունդ, ուստի պետք է լիկվիդացիա լինեին: Այս տեսնում էր կառավարությունը՝ չնայած մամուլի մեջ հարուցված բողոքի և ճիչի, որ այդ առթիվ հանեց Ախալքալաքի, Թիֆլիսի հայրենակցությունն իր բազմաթիվ դիմումներով: Այնուհետև վրաց կառավարությունը «մահվան շրջանում» (ինչպես ես անվանել եմ 1918թ. իմ հոդվածներից մնում՝ էսէռական ռուս թերթերում Բաքուրիանն ու Ծալկան) հայտնված գաղթականության մեջ, կարգ պահպանելու համար բաց թողեց իր միլիցիոներներին: Նրանք սկսեցին ժողովրդին ճնշել, թալանել և այլն, մի խոսքով դարձան կատարյալ ենիչերիներ: Այդ առթիվ կան բազմաթիվ պաշտոնական հեռագրեր: Կառավարությունը ոչ մի ձայն չհանեց: Գյուղացիական զարդարանքների խոշոր մասը կարգապահների (միլիցիոներների-Ա.Մ.) ձեռքն անցավ: Ամենաողբերգականն է հետևյալը. Ախալքալաքի կողմից տաճիկները շարունակ հարձակվում էին գաղթականության թիկունքի վրա, սպանում էին մարդկանց (մոտ հինգ, վեց ամսում 1000 տղամարդ է սպանված) և տանում էին տասնյակ հազարավոր խոշոր անասուններ: Վրաց կառավարությունը ոչ միայն չպաշտպանեց զենքով իր հպատակներին, այլև այդ հարձակումների համար անգամ չբողոքեց տաճկաց ներկայացուցիչ Աբդուլ Քերիմի դեմ: Վրաց

կառավարության խնդրանքով Բորչալուի համեմատաբար ապահով ֆրոնտում՝ տեղական մի քանի թուրք գյուղերի և տաճիկների դեմ պիկետներ էին դրված և մի անգամ գերմանացիք վրացիներին պաշտպանելու համար լավ ջարդեցին իրենց դաշնակից տաճիկ զինվորներին (1918թ. կարծում ենք, հուլիսին): Եթե վրաց կառավարությունը մազաչափ հոգ տաներ ախալքալաքցիների մասին, ամենից առաջ նրանց չէր ծերբակալի, երկրորդը՝ ծերբակալելուց հետո Բաքուրիանում և Ծալկայում պիկետներ կդներ (գերմանական), ամենահարկավոր տեղում՝ Ախալքալաքի սահմանում: Այդ չարվեց ու Տաճկաստանին ազատություն տրվեց իր ավազակային, պոգրոմային գործը շարունակելու: Բնորոշ է՝ ոչ միայն կառավարությունն ինքը գերմանացիների կամ իր զինվորների միջոցով չպաշտպանեց ախալքալաքցիներին, այլև վերջիններիս ձեռքից այդ պայմաններում զենքը խլեց, որով անզեն գառը կանգնած մնաց զինված գայլի՝ տաճիկի դիմաց: Եվ Տաճկաստանը սիրով օգտվում էր իրեն տրված իրավունքից՝ ինչպես ասացի, շարունակ հարձակվում էր ժողովուրդի վրա, կոտորում էր հարյուրավոր մարդիկ, տանում էր տասնյակ հազարավոր անասուններ: Տաճիկների պակասները լրացնում էին վրացական ադմինիստրացիայի ներկայացուցիչները, որոնք մի տեսակ կարտբլանշ չունեցող ավազակներ էին: Վրաց կառավարության ճիվաղային վերաբերմունքը բնորոշող փաստեր շատ կան: Բայց մեկն էլ այն է, որ Քութայիսի և Թիֆլիսի բոլոր մսագործներին, բոլոր սպեկուլյանտներին թույլ էր տրված անարգել մոլեգնել գաղթականության մեջ, մինչդեռ, ինչպես պետք է հիշել, գաղթականությունը բանտարկված էր և իրավունք չուներ շուկա դուրս գալու, շուկա ընտրելու, իր ունեցածն ուզածի պես ծախելու և գնումներ կատարելու: Գյուղացին անասունների համար կեր չուներ, անասունը (գյուղացու վերջին հույսը) սատկում էր աչքի առաջ, և ահա գյուղացին ստիպված էր իր մոտ եկած սպեկուլյանտներին, մի տեսակ սպեկուլյանտների սինդիկատին ամենաէժան և ամենաչնչին գնով ծախել անասունները: Այն կարևոր ու ուշագրավ երևույթ է:

100 հազարից ավելի գաղթականությունը հետը բերել էր 100 հազարից ավելի խոշոր անասուններ: Այդ հարստության թեկուզ մի մասը, եթե նա ծախեր քիչ թե շատ կարգին գներով, գաղթականությունը մինչև վերադարձը (մինչև նույն 1918թ. դեկտեմբերը), կապրեր, իսկ մյուս մասը՝ հետը կտաներ գավառ: Այնինչ, մինչև 1918թ. նոյեմբերի սկիզբը գրեթե ամբողջ 100 հազար անասունը չնչին գներով նետվեց Վրաստանի շուկա...Վրաստանը, հա-

ռուստ Վրաստանը ինքն օգտվեց գաղթականությունից և լավացրեց իր դրությունը... Մինչև Ախալքալաքի դժբախտությունը միսը (մսի գինը- Ա. Մ.) Թիֆլիսում արագ բարձրանում էր և հասել էր մինչև 4-5 ռուբ. գրվանքան: Այդ կարելի է ստուգել: Ախալքալաքի գաղթից հետո Կովկասի տնտեսական իրականության մեջ մի տեսակ հրաշք կատարվեց՝ մսի գինը հունիսից (Ախալքալքի անկումից) սկսած մինչև նոյեմբեր (մինչև անասունների սպառումը Բաքուրիանում, Ծալկայում) անընդհատ ընկնում էր՝ հասնելով մինչև 2 ռուբլի գրվանքան: Այդ ամիսներին ընդհակառակը, եթե չլիներ Ախալքալաքի միսը, պետք է (գները-Ա. Մ.) կատաղի բարձրանային, որովհետև Թիֆլիսի համար ոչնչացավ Ղարսը: Չէր գործում Նոր Բայազետը և այլն: Նույն թվի հայկական ու ռուսական թերթերի մեջ զետեղված հատուկ հոդվածներով ես այս երևույթը համարեցի ժամանակավոր, հիվանդագին, (այն-Ա.Մ.) բացատրեցի ախալքալաքցիների անասունների անկեր դրությամբ: Նույն հոդվածում հայտնում էի, թե թող թիֆլիսեցին չասե, թե ախալքալաքցին ծանրացել է իր վրա, ընդհակառակը, գաղթական ջավախքեցին ամեն օր, ամեն մի 3-4 գրվանքա գործադրող ընտանիքի նպաստ է տալիս՝ քիչը 3-10 ռ. (եթե նա չլիներ, միսը կարժեր գրվանքան 5 ռուբլուց ոչ պակաս, մինչդեռ ուտում էին 2 ռուբլով): Ենթադրությունս այդ երևույթի բացատրության (խնդրում-Ա. Մ.) վրաց մամուլին (ռուսատառ «Борьба» և վրացատառերին) դուր չեկավ: Նրանք դժգոհ էին, որ շնորհակալության փոխարեն գաղթականությունը դուրս է բերվում նույնիսկ իր դժբախտ ժամանակը մայրաքաղաքցիներին ձրիակերությամբ պարապելու հնարավորություն տվող տարր... Բայց իմ մարգարեությունը մի երկու-երեք ամսից հետո կատարվեց բառացի, որով և իմ հոդվածի ճշտությունն անկասկած դարձավ (նույնիսկ Կովկասի գիտնականն Ավդեևը իմ բացատրությունը կասկածելի էր գտնում): 1918թ. նոյեմբերին վերջացան ախալքալաքցիների անասունները և մսի գինը Թիֆլիսում միանգամից թռիչք արեց վերև և այնուհետև անընդհատ գնում ու գնում էր վերև:

Այսպիսով, մենշևիկյան կառավարությունը 100 հազար գաղթականությանը (ճիշտը 90 հազար հայությունը, ինչպես ասացի, վրացիներին համեմատաբար դյուրություններ արվեցին Բաքուրիանի և Ծալկայի մահավայրերից դուրս թռցնելու համար) իր միանգամայն գիտակից կարգադրություններով դրեց այնպիսի պայմանների մեջ, որ մի կողմից տաճիկը կոտորեց, կողոպտեց, մյուս կողմից էլ Վրաստանի կեղեքիչները հանձին միլիցիայի և

սպեկուլյանտների, թալանեցին: Ձերբակալված ջավախեցին ոչ մի շարժում չէր կարող անել իր փրկության համար:

Նոյեմբերի սկզբներին արդեն սառնամանիքներով ծածկվող Բաքուրիանի և Ծալկայի բարձրունքներում (7-8 հազար ոտնաչափ) գյուղացիությունը կանգնած էր թալանված, մերկ, քաղցած, անտուն: Տարածվում էին հիվանդություններ: Վիրահայ Ազգային խորհուրդը խնդրեց կառավարությանը թույլ տալ գյուղացիներին տեղավորել գոնե Բորչալուի հայ գյուղերում՝ այդ էլ մերժեցին: Միայն այն ժամանակ, երբ դաշնակիցները հաղթել էին և տաճիկները հեռանում էին, կառավարությունը թույլ տվեց Մանգլիսի գաղթականությանը (գաղթականության չնչին մասին) տեղավորվելու զորանոցներում, և իհարկե, այդ սիրալիրությունից օգտվելու ժամանակ չեղավ:

Կառավարության այս դաժան, հիրավի մարդաջինջ և հայաջինջ քաղաքականության հետևանքը եղավ հետևյալ հայտնի տխուր փաստը. 1918թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ծալկայի և Բաքուրիանի լեռներում բացօդյա ոչնչացավ մոտ 30 հազար հայ գաղթականություն: Եթե վերադարձ չլիներ՝ կառավարության կամքից անկախ, որին նա դեմ էր, մինչև հունվար, փետրվար ոչ մի մարդ կենդանի չէր մնա: Պատկերները սոսկալի են. օրինակ առավոտը մայրը վեր է կենում, տեսնում է սառած երեք որդիներին ծյան վրա: Գաղթականությունը կոտորվեց և մի քանի հազար զոհ էլ տվեց վերադարձի օրերին: Այդ ամենը ես իմ աչքով եմ տեսել: Վիրահայ Ազգային խորհրդի կողմից 1918թ. դեկտեմբերին Ծալկայի վրայով ուղևորվեցի Ախալքալաք՝ իմանալու, թե առաջին վերադարձողներին տաճիկները խոմ չեն կոտորում և ահա ճանապարհին աչքերիս տակ բացվեց աննկարագրելի տեսարան: Մերկ, սոված, հյուծված, հիվանդ գաղթականությունը, շատերը շատ ծանր հիվանդ, հարյուր վերստից ավելի ճանապարհը վազում էին հասնելու համար ավետյաց երկիրը, ինչպիսին էր Ախալքալաքը նրանց համար: Ցրտերը հասնում էին 25-35 աստիճանի: Միայն մի օր (վերադարձը տևեց մոտ մի ամիս) մի 15-25 վերստ տարածության վրա տեսա ընկած էր դիակ, մերկ, գայլերը կերած, մի դիակ առանձին, մի մայր չորս երեխայով առանձին...

Հատկապես այս մի քանի հազար հոգու կորուստն ընկնում է Ազգային խորհրդի խղճի վրա: Նա Ծալկայում և Բաքուրիանում ուներ լիազորներ, որոնք գաղթականության վերադարձի ժամանակ նստած էին տաք տեղերում: Ամենագլխավորը՝ նրանք նույնիսկ մի սննդաւոու կայան չշինեցին այդ օրերին, ոչ մի շոր չտվին, մինչդեռ

գաղթականության վերադարձից հետո նրանք, պահեստներից հանելով, ծախեցին մեծ քանակությամբ շաքար և շորեղեն... Այս ամենի մասին իմ ընդարձակ զեկուցագրի մեջ և առանձին հայտագրերով գրել եմ Վիրահայ Ազգային խորհրդին: 1919թ. հունիսի 6-ին, սակայն, հակառակ իմ պահանջի, լիազորներից ոչ մեկը դատի չհանձնվեց: Ծալկայի լիազոր Արարատ Տեր-Գրիգորյանը (հայտնի ավազակ, Արամ Տեր-Գրիգորյանի հաջորդը, ազգականներ չեն) և Բաքուրիանի լիազոր Արշակ Թորոսյանը (բաթումցի) Վիրահայ Ազգային խորհրդում նստած քիրստոնյաների կողմից նույնիսկ հանդիմանության խոսքի չարժանացան ... Իսկ հազարավոր նրանց զոհերի գերեզմանները, երկրի երեսին ցրված ոսկորները, Բաքուրիանից և Ծալկայից Ախալքալաք տանող ճանապարհների վրա բղավում են անլուր ոճիրի մասին... Բայց ոճրի մեջ այդ օրերին ետ չմնաց և վրաց կառավարությունը (այս մասին իր ժամանակին բանավոր պատմել եմ Վիր. Ազգային խորհրդին և Ախալքալաքի հայրենակցական միությանը, բայց անհարմար եմ համարել գրի անցկացնել): Նրա վրա խնդրում եմ ձեր առանձին ուշադրությունը: Դեկտեմբեր ամսին Բաքուրիանի սոսկալի բարձունքները ճեղքելով, գաղթականությունն ուղիղ ճանապարհով ուզում էր ընկնել Ախալքալաքի դաշտը, բայց վրաց զորքերը ստիպում էին գաղթականությանը՝ փոխանակ ուղիղ ճանապարհով գնալու, ծռվել և անել, 30^{0} ցրտին, 7-8 վերստ ավելի: Շնորհիվ այս հավելյալ ճանապարհի հարյուրավոր մարդիկ ոչնչացան... Ես այդ երևույթը կարողացա բացատրել. վրացական արտիլերիան և սայլերը պահանջում էին ձյան մեջ տանելի ճանապարհ և որպեսզի այդ ճանապարհը շարունակ բանուկ մնա, գաղթականությանը տասնյակ օրեր քշում էին այդ երկար ճանապարհով, ուրիշ խոսքով, փոխանակ թիերով[14] ճանապարհը բաց անելու, գաղթականության դիակներով էին բաց անում: Իրենք վրացիք, ճիշտը՝ վրացական զորամասի հրամանատար կապիտան Կանդելակին բացատրեց ինձ այդ նրանով, որ իբր գավառից դեռ ոչ բոլորովին հեռացած տաճիկները թույլ չէին տալիս ուղիղ ճանապարհով իջնել: Այդ սուտ էր՝ իմ դիմումից հետո այդ բանը վերջացավ: Ի դեպ, գաղթականության վերադարձի ժամանակ Ծալկայում և Բաքուրիանում նստած տասնյակ գաղթականական ծառայողներից ոչ մեկը ոչ միայն ոչինչ չտվեց գաղթականությանը, այլև ամբողջ ամսվա ընթացքում չանցավ սպրերից դենը և չտեսավ, թե ինչպես է վերադառնում գաղթականությունը: Ասենք գաղթականության մարմինները ինձ համար միշտ եղել են հակագաղթականական, հակաժողովրդա-

կան մարմիններ, ուր հավաքվում են (չնչին բացառությամբ ազնիվ մարդկանց) զանազան գողեր, կասկածելի մարդիկ, ավազակներ, թալանչիներ, սպեկուլյանտներ և այլն և այլն՝ ժողովրդի պատառի հետ հաշիվ տեսնելու:

7.Գաղթականությունը հայրենիքում

Դեկտեմբերին (1918թ.) բացի մի երկու հազար քաղաքացիներից, ամբողջ գաղթականությունը Ախալքալաքումն էր: 90 հազար հայության փոխարեն վերադարձավ մոտ 55(հազ.-Ա. Մ.) հոգի, որ, ինչպես ասացի, տեղում մնացած կաթոլիկների հետ միասին կազմում է ներկայումս 60 հազարից ոչ պակաս: Գաղթականության վերադարձից հետո էլ քիչ (մարդ-Ա. Մ.) չկոտորվեց տեղում: Շատ չնչին քանակությամբ անասուններ փրկվեցին և բերվեցին Ախալքալաք: Տաճիկները ցրտության պատճառով գավառից չէին կարողացել տանել բավականաչափ խոտ, չէին կարողացել կալսել շատ դեզեր և դուրս տանել մի քանի հազար փութ հացահատիկ: Ախալքալաքի և Ախալցխայի նահանգապետ գեն. Մակահին (հետագայում Բաքվում սպանվեց) ես՝ որպես Ազգային խորհրդի ներկայացուցիչ, խնդրեցի, որ այդ ամբողջ գույքի մնացորդը տա գաղթականությանը՝ որպես նրա սեփականության մի մասը, որպես նրա գույքի չնչին մնացորդը: Մակահը չտվեց: Այս հարցը ես կառավարության առաջ կամեցա դնել Ազգային խորհրդի միջոցով, սակայն նա չդրեց: Այսպիսով, տաճիկներից հետո Ախալքալաքի բնակչության գույքի մնացորդն էլ յուրացրեց և հափշտակեց վրաց կառավարությունը: Այսուհետև մինչև մեծամասնականության (բոլշևիկներ-Ա.Մ.) գալը մենշևիկյան կառավարությունն ամեն կերպ աշխատել է խանգարել բնակչությանը գոնե իր ուժերով ոտքի կանգնելու գործում. հափշտակել է նրանց հողերը, արոտատեղերը, ճընշել է, չի թույլ տվել ունենալու իր ընտրովի միլիցիան և քաղաքական կոմիսարներ կայլն և այլն: Ամեն ինչից պարզ երևում էր մի բան. կառավարության համար անախորժ է եղել, որ թեկուզ այդքան հայություն ազատվել և ապրում է գավառում: Կառավարությունը կկամենար գավառը բոլորովին ազատված տեսնել հայությունից: Համենայն դեպս, կառավարությունն իրեն նպատակ էր հետապնդում այս կամ այն կերպ թուլացնել հայությանը նույնիսկ վերադարձից հետո:

Իր տեղում, ցրվածությունից մոռացա բերել մի մեծ փաստ: Ինչպես հայտնի է, վրաց կառավարությունը Ախալքալաքը միշտ համարել է Վրաստանի անբաժան մասը, հետևաբար պետք է եզրակացնել, որ ախալքալաքցի բոլոր հայերին նա համարում էր վրացահպատակներ: Եվ ահա այդ վրացահպատակների հետ ինչ խաղաղ կոմեդիա խաղաց այդ խարդախ կառավարությունը հիրավի (ինչպես անվանեցին նրան Թիֆլիսի դաշնակցականները) էնվերներից և թալիաթներից բաղկացած կառավարությունը, որի պրեոմներն ավելի կիրթ էին... 1918թ. սեպտեմբերին բավականին կողոպտված էր գաղթականությունը: Այդ ամսի 4-ին (գրեթե լավ եմ հիշում, սակայն, եթե սխալ դուրս գա, պետք է վրաց կառավարության արխիվում որոնել, սեպտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 4-ը) վրաց կառավարության կանցելարիան, հանձին правитель канцелярии, հայտնի Կոժուղովի (հետագայում Վեշապելու[15] կողմից մեղադրված գեղծումների մեջ) Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին (Վիր. Ազգային խորհրդին կից) ուղղում է մոտավորապես այսպիսի բովանդակությամբ թուղթ (բովադակությունը լավ չեմ հիշում). ի նկատի ունենալով, որ Վրաստանում պարենավորման ճգնաժամ է, որ մյուս կողմից, տաճկաց հրամանատարությունը վերջնականապես հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի գաղթականությանը վերադառնալ հայրենիք, այսու առաջարկվում է Ձեզ ամենակարճ ժամանակամիջոցում այդ գաղթականությանը տանել Յուսիսային Կովկաս (ընդգծումը իմն է- Պ. Ա.): Կրկնում եմ, բառացի չեմ հիշում բովանդակությունը, բայց գրեթե բառացի այս էր այդ թղթի իմաստը: Գաղթականական խորհրդի նախագահ Սամ. Հարությունյանն[16] անմիջապես հրավիրեց խորհրդի անդամներին (Հովհ. Սպենդիարյան, հանգուցյալ Լևոն Էվանգուլյան, հանգ. բժ. Տեր-Ստեփանյան --- և այլոց), վերջապես Վիր. Ազգային խորհրդի պրիզիդիումը: Ես որպես Ախալքալաքի հայության ներկայացուցիչ, խնդրեցի նույնպես ինձ թույլ տալ ներկա լինել: Կարդացին թուղթը: Ես այդ ժամանակ տեղյակ էի վերադարձի խնդրին (Ջամալյանի օրոք), և ես գիտեի, որ ընդհակառակը, տաճկաց միսիան (Աբդուլ Քերիմը) խոստանում էր վերադարձնել գաղթականությանը և մերժում չի տվել: Ուստի պահանջեցի միսիայից բերել գործերը (Ջամալյանը Երևանում էր այդ ժամանակ) և համոզվել, որ, հիրավի, ոչ միայն մերժում չկա, այլև շարունակվում են բանակցություններն Աբդուլ Քերիմի հետ: Երկու օր առաջ հենց ես եղել էի (նրա օգնականի հրավերով) մոտը և, պարզ է խոսքով, հավաստիացում էի ստացել, որ գաղթականությունը կվերադառնա:

Գլխավորը, ձևական մերժում չկար: Բերին գործերը և պարզվեց, որ Կոժուղովը սուտ է գրում, որ ընդհակառակը թղթերից երևում էր, որ վերադարձի հարցը Հայկական Միսիայի, տաճկական հրամանատարության, Պոլսի կառավարության և Պոլսի հայկական պատվիրակության բանակցությունների առարկա է նույնիսկ տվյալ րոպեին: Այս պատճառով որոշվեց Կոժուղովից խնդրել տաճկական հրամանատարության մերժման թղթի պատճենը: Այդպես էլ գործը մնաց: Այսպիսով, վրաց կառավարությունը խաբեբայական միջոցներով ուզում էր նոր գաղթի միջոցով միանգամից արագ կերպով կոտորել տալ ջավախքցիներին և Ախալքալաքը ստանալ առանց հայերի:

Մի այլ փաստ ևս, որից ուրիշ հոտ է գալիս: Նոյեմբերին (1918), ինչպես ասացի, գաղթականությունը մերկ, սառցապատ լեռներից փախչում էր իր հայրենիքը, իր տունը: Այդ ժամանակ Բաքուրիանում վերոհիշյալ գեն. Մակալը հավաքում է գաղթականներին և պահանջում է նրանցից վրացահպատակության ստորագրություն տալ: Հակառակ դեպքում, ասում է, դժվար կլինի Ձեզ թույլ տալ գնալ: Գաղթականությունը ժամերով կանգնում է և ստիպված է լինում այդ պայմաններում այդ վայրենի պահանջին բավարարություն տալ: Գաղթականության ներկայացուցիչը լինում է մի գյուղացի Ավետիս Ղարսլյան ազգանունով (Ախալքալաքի գավառի Մեծ Խանչալի գյուղից): Այդ պատմությունն իր ժամանակին ես մանրամասն արել եմ Թիֆլիսում (Ղարսլյանն այնտեղ էր): Գրի եմ առել, ստորագրել է Ղարսլյանը, իսկականը տվել եմ Վիր. Ազգային խորհրդին, մի օրինակն էլ, որքան հիշում եմ, Հայկական միսսիային, մյուսն էլ ինձ մոտ է:

Ախալքալաքի 60 հազար հայ բնակչության դրությունը մենշևիկյան կառավարության օրոք մանրամասն չեմ նկարագրելու, միայն այսքանը կասեմ, որ մենշևիկները խորթ, շատ խորթ աչքով էին նայում հայությանը և ամեն կերպ աշխատում էին թուլացնել նրանց՝ հող պատրաստելով իրենց հիմնական նպատակի իրագործման համար՝ Ախալքալաքը Վրաստանին տալ առանց հայերի: Եթե, այնուամենայնիվ, գաղթականությունն ապրեց և որոշ չափով վերականգնեց իր տնտեսությունը, այդ հետևանք է նախ ջավախեցի հայի բառացի անօրինակ աշխատասիրության և երկրորդ, Ամերիկյան օգնության: Չհաշված միլիոնավոր արժեք ունեցող շորեղենը՝ 1919թ. և 1920թ. ընթացքում Ախալքալաքի հայությանը և վրացիներին ամերիկացիք տվին 250 հազար փութ սպիտակ ալյուր (ճիշտը 249 հազար փութ 7 գր. հաշիվներն ամերիկյան ներ-

կայացուցիչների ստորագրությամբ կա ինձ մոտ): Այդ ալյուրը Հայաստանի հաշվին ստացված ալյուրիցն է: Ուրեմն վրաց գաղթականությունն Ախալքալաքում ապրել է Հայաստանի ալյուրով, ավելին, վրաց գաղթականությունը նույնիսկ Ախալքալաք է տեղափոխվել Հայաստանի միջոցներով: Այսպիսով, աղքատ Հայաստանն անուղղակի կերպով օգնում էր վիճելի Ախալքալաքի և՛ հային և վրացուն, իսկ Վրաստանը զբաղված էր հայ տարրը ոչընչացնելով: Մենշևիկների համար բնորոշ երկու փաստ ևս. առաջինը նրանք աչքաբաց օգնում էին գավառում վրացի գաղթականներին, և սրանք այժմ հայերից շատ ուժեղ են տնտեսապես: Երկրորդ. կառավարությունն աշխատեց հայ և վրացի ժողովուրդների մեջ անտագոնիզմ առաջ բերել և հայերի դեմ գրգռել մնացած վրացիներին և թուրքերին, հայ կաթոլիկների մի մասին, նույնիսկ դուխոբորներին: Բարեբախտաբար, այդ անտագոնիզմը գրեթե արմատներ չի գցել, թեև իրեն զգալի է դարձնում: Հատկապես կառավարությունն աշխատել է ախալքալաքցիներին զինաթափ անել: Ընդհակառակը, թուրքերին ձեռք չէր տալիս: Կառավարության խուլիգանության և պոգրոմության մի ապացույց ևս. մեծամասնականների գալուց առաջ հեռանալով Ախալքալաքից՝ նա նախօրոք մի անգամ ևս զինաթափ է անում հայերին և դիմում է հարևան տաճկական զորքերին, որ մտնեն գավառ: Հրավիրում է տաճիկներին՝ շատ լավ գիտենալով, թե նրանք ինչ պետք է անեն: Եվ հիրավի, սույն 1921թ. մարտին Ախալքալաք են մտնում 23 հազարի չափ տաճիկ զորքեր և խուժան, թալանում են 15 գյուղ, որոնցից չորսը՝ Կարծախ, Սուլտա, Տատեշ, Գյունբուրդա, տուժում են առանձնապես: Տանում են նրանց անասունները և հացը և ամեն ինչ: Դրանք սահմանակից գյուղեր են: Մեծ է լինում մանավանդ իմ հայրենի Գյունբուրդա գյուղի հարվածը. հինգ հազար հոգի 9 օր նստում են այդ գյուղում: 9 օրում 60 տղամարդ են սպանում, բռնաբարում են բոլոր կանանց և ութ տարեկանից վեր երեխաների, տանում են բացարձակապես ամեն ինչ, նույնիսկ մերկացնում են բնակչությանը՝ տանում զգեստները: Այս ամենը հաստատված է Կարմիր բանակի ակտերով: Գյունբուրդան, որ 1918թ. 2500 մարդուց ավելի բնակիչ ուներ, այժմ հազիվ 1000 հոգի ունի, այն էլ մեծ մասամբ կանայք և երեխաներ. ահա ինչպես է լուծվում հայկական հարցը Ախալքալաքի գավառում:

8. Ջավախքի հայության երկյուղները և ցանկությունները

Ախալքալաքի հայությունը սոսկալի ահաբեկվել է տաճիկներից: Այս երկյուղն այնքան մեծ է, որ շատերը մտածում են թողնել ու փախչել հայրենիքից: Հայ կաթոլիկ և հայ լուսավորչական շատ գյուղերից նույնիսկ ներկայացուցիչներ են գնացել Ռուսաստան՝ նոր հայրենիք գտնելու: Բնակչությանը սարսափեցրել է այն, որ իրեն տաճիկները շարունակ բնաջինջ են արել և ոչ ոք այս բանի վրա ուշադրություն չի դարձրել: Ի դեպ է այստեղ ասել, որ տաճիկներն էլ այն կողմից են աշխատում Ախալքալաքը ստանալ առանց հայերի: Եվ նրանք էլ մենշևիկների նման եռանդուն գործում են այս ուղղությամբ: Անգորայի կառավարությունը պաշտոնական որոշում ունի, որ Ախալքալաքը, Ախալցխան և Աջարիան պետք է միացվեն Տաճկաստանին: Դեռ 1918թ., երբ Ախալքալաքը տաճիկների ձեռքն էր, սրանք հազարավոր դրսեցի, նույնիսկ Անատոլիայից, տաճիկներ էին՝ բերել և բնակեցրել հայ գյուղերում: Դաշնակիցների հաղթությունից հետո շփոթված տաճիկները՝ դուրս տարան այդ նոր ախալքալաքցիներին: Այժմ էլ այդ նպատակը դրել են տաճիկները, աշխատում են հայ բնակչությանը ոչնչացնել, բայց տները պահել (են-Ա. Մ.) իրենց գաղթականության համար: Կարծ, ինչպես որ Կարսի շրջանը դատարկելով, իրենց կենտրոնները լցնում են տաճիկներով, այնպես էլ ծրագրված է հետզհետե լցնել Ախալքալաքը: Տաճիկներն իրենց երկրի պերիֆերիաները բնակեցնելով թուրք խիտ բնակչությամբ, ուզում են դնել բոլորին կատարված փաստի առաջ: Ախալքալաքի հարցում այժմ նրանց խանգարում է Կարմիր բանակը: Սակայն Ախալցխայի գործերին լավատեղյակ Զորի Զորյանի ասելով (մի երկու ամիս առաջ) Արդահանի և Չլդրի շրջաններում տաճիկներն ունեին մոտ 70 հազար զորք և խուժան: Ախալքալաքից 4 վերստ հեռու, իսկ Ախալցխայից 16 վերստ (հեռու-Ա. Մ.) գնվում են տաճկական մեծ ուժերը, որ ամեն րոպե կարող են մտնել Ախալքալաք և Ախալցխա, երբ հարմար լինի: Մեծ փաստ է՝ Արդահանի, Չլդրի, Ախալքալաքի և Ախլցխայի թուրքերը ոտից գլուխ զինված են, իսկ հայությունը, նրանց զինման օբյեկտը՝ բոլորովին անզեն: Այս ավելի է վախեցնում հայության մնացորդներին: Տաճիկ ագենտներն այս 3-4 տարում, պարապ ժամանակ շարունակ ուժեր են պատրաստում այդ լեռներում: Այսպիսով, հայ բնակչությունն զգում է, որ հարևան տաճկական կուտակված և կուտակվող ուժերի նպատակակետն ինքն է եղել և ինքն է այժմ: Ուստի կամ ուզում է փախչել, կամ երաշխիք. առան-

ծին զինվորական համապատասխան ուժերով արտահայտվող երաշխիք է պահանջում իր գոյության, պատվի և գույքի համար: Նա էլ չի կարող սպասել, մինչև որ վերջնականապես բնաջնջվի... Վրացական ներկա կառավարությունը դեռ չի ըմբռնել բնակչության ոչ տնտեսական պահանջները, ոչ էլ զգում է բնակչության հիմնական սարսափը: Ջավախքի հայությունը մենշևիկյան կառավարությանը տաճկականից վատ է համարում: Նրա աչքը այնպես է վախեցել, որ ոչ մի վրացական կառավարություն չի ուզում... : Այս է ճշմարտությունը: Ախալքալաքցին ուզում է, որ Ախալքալաքը լինի իսկական, թուրքի հարձակման համար հավիտյան անմատչելի՝ Ռուսաստան. եթե այդ էլ չեղավ, նա ուզում է իր բախտը կապել Հայաստանի հետ, և նա այժմ ուզում է միանալ Սովետական Հայաստանին:

Առաջին հարցը ևս ջավախքեցի հայ գյուղացին համարում է ֆիզիկական ապահովության խնդիրը, երկրորդը՝ իր տնտեսության վերականգնումը, որը տեղի կունենա հեշտությամբ, չնչին օգնությամբ, արդ հայտնի է, որ ամբողջ Անդրկովկասում ախալքալաքցուց շուտ շենացող ու շենացնող ժողովուրդ չկա:

9. Իմ կարծիքները

1. Ախալքալաքցու առաջին պահանջը նրա ֆիզիկականի ապահովումն է, ուստի անկարելի պիտի դարձնել տաճկական արշավանքները:
2. Հայաստանը պետք է այս խնդիրը Վրաստանի և Ռուսաստանի հետ լուծի:
3. Բնակչությանը պաշտոնապես, կոմպետենտ մարմնի կողմից պետք է գրավոր և տպագիր հայտնել, որ հանգիստ նստի իր տեղը և զբաղվի գործով:
4. Ախալքալաքը ազգագրորեն պատկանում է Հայաստանին՝ այսպես է և բնակչության մեծամասնության կամքը: Սակայն եթե մենք Տաճկահայաստանը ստանայինք, հայ-վրացական բարեկամությունն ամրապնդելու համար, ըստ իս, Ախալքալաքը պետք էր նվիրաբերել վրացիներին (հեռացնելով հայերին), մանավանդ, որ վրացի գյուղացիությունը սակավահող է և կարիք ունի գաղթավայրի. հայությանը կտանեինք իմ պաշտելի գավառից, օրինակ. Ալաշկերտ:

5. Բայց, քանի որ Տաճկահայաստան չկա, արդարությունը պահանջում է, որ վրացիք առանց առարկության զիջեն Հայաստանին Ախալքալաքը, մանավանդ որ աշխարհագրորեն նա Շիրակի շարունակությունն է:
6. Ախալքալաքին պետք է միացնել ա) Գորվա գավառի, այսպես ասած մեծ իշխանի արոտատեղիները, բ) դեպի Ախալքալաք նայող անտառները և գ) Բորչալուի Ախալքալաքին հարող և ախալքալաքցիների ձեռքում գտնվող արոտատեղիները: Այդ պահանջում է և աշխարհագրական դիրքը և այն, որ այդ հողերը փաստորեն ախալքալաքցիների ձեռքին են և պետք են: Ճիշտ է, այսօր բնակչությունն անասուն քիչ ունի, բայց մի երկու տարուց հետո կունենա:
7. Եթե Ախալքալաքը Հայաստանին չմիացվի, նա Ծալկայի հայության հետ միասին, պետք է ստանա Աջարիայի նման տերիտորիալ ավտոնոմիա Հայաստանի հովանավորության տակ: Սա ծայրահեղ դեպքում:
8. Եթե մնա Վրաստանի սահմաններում, անպայման պետք է (ունենա-Ա. Մ.) ավտոնոմիա և համաձայնություն Վրաստանի հետ, որ երկուսը՝ Հայաստանը, Վրաստանը (և թերևս, Ռուսաստանը՝ դուխոբորների համար) միասին ապահովեն բնակչության ինչպես գոյությունը, այնպես էլ գույքը: Բայց բնակչությունը չի հաշտվի Վրաստանի սահմաններում մնալու հետ:
9. Ախալքալաքը հովանավորությամբ այդ երեքի կարող է ստանալ ավտոնոմիա: Գլխավորն այն է, որ մի կողմից արտաքին թշնամին՝ տաճիկն ընդմիշտ չեզոքացվի ախալքալաքցու բախտի մեջ և մյուս կողմից, ներքին վրացական շովինիզմի զազրելի ճնշումը և պրովոկացիան չլինեն:
10. Պետք է մինչև տնտեսության վերականգնումը բնակչությանն իրավունք տալ իր հողերի խոտը հնձել և տերը լինել: Այժմ, որքան գիտեմ, խոտի մի մասն ուզում են խլել, խոտհարներն էլ հաճախ թուշերն են արածացնում: Խոտն ախալքալաքցու տնտեսական գոյության ներկայումս գլխավոր նեցուկն է: Նա նրանով անասուններ է ձեռք բերում (փոխում է թուրքերի հետ), բերում է ծմեռը Ախալցխայից թուրքերի անասունները և պահում է աթար վերցնելով, հորթով և այլն: Կարճ (ասած-Ա. Մ.), խոտը նշանակում է անասուն, աթար, հացահատիկ և այլն: Այս տարիներին (ախալքալաքցիները-Ա. Մ.) խոտով են գլխավորապես անասունները շատացրել:

11. Հայաստանը մեծ գործ արած կլինի, եթե ինքը համոզի ամերիկացոց (այդ հարցը հարուցված է), որ էլի Ախալքալաքում գործեն:
12. Ամենից առաջ և ամենից վերջ ախալքալաքցիներին տվեք կյանքի ապահովություն, և գյուղացիներն անապատն էլի կդարձնեն սքանչելի:
13. Եթե ռեֆերենդումով կարիք եղավ լուծելու Ախալքալաքի հարցը (թեև դրա կարիքը չկա: Հայության տոկոսը բղավում է հարցի ինչ կերպ լուծվելու մասին), այդ դեպքում Հայաստանն իր ներկայացուցիչներով պետք է հետևի տեղնուտեղը, որ բնակչության խիղճը չահաբեկվի: Հատկապես հայ կաթոլիկներն ահաբեկված են և ռեֆերենդումից առաջ նրանց Հայաստանի կողմից պետք է ասվի, որ չվախենան. գավառը վիճելի է, և այս միջամտությունն անկոռեկտություն չի լինի Հայաստանի կողմից:
14. Մոռանում են կապել Ծալկայի հայության հարցն Ախալքալաքի հարցի հետ: Ծալկան աշխարհագրորեն կապված է Ախալքալաքի հետ, ունի մի տարածության վրա գտնվող 13 հայկական գյուղեր՝ մոտ 20 հազար բնակչությամբ: Բնական է, որ Ծալկան ևս պետք է միանա Հայաստանին՝ Ախալքալաքի հետ միասին:
15. Վերջապես, Ախալքալաքի բնակչությունը ոչ այս կամ այն Վրաստանի հպատակությունն է ուզում, ոչ էլ ավտոնոմիա Վրաստանի հովանավորության տակ. նա վճռապես Ծալկայի հետ, 70-80 հազար հայ բնակչություն ունենալով, ուզում է միանալ Հայաստանին: Մոտ երեք միլիոն բնակչություն ունեցող Վրաստանը պետք է Հայաստանին տա իր հարազատ բնակչությանը, Հայաստանին, որ հազիվ 6-7 հարյուր հազար բնակչություն ունի: Բայց գլխավորը տաճկական վտանգի արմատական վերացումն է, որ պահանջում է բնակչությունը:

17 հուլիսի 1921թ., Պողոս Աբելյան
Երևան

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122-134:

Ծանոթագրություններ (փաստաթուղթ թիվ 6)

1. *Ձեկուցագրի տեքստը մեքենագիր է՝ հեղինակի ուղղումներով: «Ախալքալաք» բառը Պ. Աբելյանն ամբողջ փաստաթղթում գործածել է «Ախլքալակ» ձևով: Սակայն, քանի որ ճիշտ անվանումը «Ախալքալաքն» է, և հեղինակն էլ հենց վերնագրում ձեռագրով այն ուղղել է, ամբողջ փաստաթղթում բառը տառադարձել ենք «Ախալքալաք» տարբերակով: Ինչպես երևում է Աբելյանի խոսքից, փաստաթուղթը գրվել է հիվանդ վիճակում, որով էլ մասամբ կարելի է բացատրել տեքստում տեղ գտած լեզվաոճական անհարթությունները: Բնագրի ոգուն հարազատ մնալու նպատակով, աշխատել ենք խուսափել տեքստային խմբագրումներից, և նյութը զետեղել ենք գրեթե առանց կրճատումների: Առանձին տեղերում կատարվել են միայն քերականական միջամտություններ:*
2. *Խոսքը էրզրումի հոգևոր առաջնորդ, 1830թ. գաղթի կազմակերպիչ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (1779-1856) մասին է:*
3. *Արևմտահայ գաղթականությունն Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում հաստատվել է ոչ թե 1829թ., ինչպես նշվում է փաստաթղթում, այլ՝ 1830թ.:*
4. *«Գաղթական հայեր» ասելով հեղինակը նկատի ունի գաղթականության մեծ մասին, որոնք հայ առաքելականներ էին:*
5. *Ռուս աղանդավորականների՝ դուխոբորների աքսորը Ձավախք տեղի է ունեցել ոչ թե 1850-ական, այլ 1840-ական թվականներին:*
6. *Այդ գնդապետն Առաքելովն էր՝ մի ապաշնորհ անձնավորություն, որը ոչ մի լուրջ քայլ չկատարեց գավառում ինքնապաշտպանություն կազմակերպելու համար:*
7. *Պոգրոմային (погром)- ջարդարարական:*
8. *Ջորի Ջորյանն Ախալցխայի քաղաքագլուխն էր՝ այնտեղի վեցամսյա հերոսական ինքնապաշտպանության (1917թ. դեկտեմբեր- 1918թ. մայիս) ղեկավարը:*
9. *Ախալքալաքի գավառի հյուսիսում ընկած այս բնակավայրի ճիշտ անվանումը Բակուրիանն է:*
10. *Դուխոբորների տոկոսային հարաբերակցությունը սխալ է հաշված. Պետք է լինի ոչ թե 11%, այլ 10,5%:*
11. *Իրենց դուրս գալուց հետո Ախալքալաքի գավառը գրավելու իրավունքը նաև Հայաստանի կառավարությանն արտոնելու մասին լուրը Պ. Աբելյանը, ամենայն հավանականությամբ, անձամբ ստացել էր Վրաստանում թուրքական առաքելության ղեկավար Աբդուլ Քերիմից:*
12. *«Բերք» բառը, անշուշտ պետք է կարդալ «հող»:*
13. *Կարդոններ- արգելափակոցներ:*
14. *Թի-ծյուն մաքրելու բահ:*

15. Ի նկատի ունի Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1921) մենշևիկյան կառավարությանը:
16. Խոսքը հայ ժողովրդական կուսակցության ղեկավար Սամսոն Հարությունյանի մասին է:

Փաստաթուղթ թիվ 7

Պ ա տ ճ ե ն

Տփխիսի հայկական միսսիային

Զեկուցում Ախալքալաքի գավառից
1921թ. 24 հուլիսի
Տփխիս

Ախալքալաքում տեղի են ունենում լուրջ անցքեր: Վրացական կառավարությունը վարում է ամենածայրահեղ շովինիստական քաղաքականություն: Այժմյան տեղի ունեցած դեպքերը մոռացության են տալիս մենշևիկների քաղաքականությունը: Կենտրոնը ուղարկում է գավառ ամենակասկածելի անցյալ ունեցող պաշտոնյաների, որոնց թագն ու պսակը հայտնի Լժենի անձնական քարտուղար և թարգման Ս. Նատիրաձեն, որը և մենշևիկների ժամանակ Ասոբիյ ատրյադում[1] կարևոր պաշտոն ուներ և այս հայտնի հերոսը առանձին լիազորություններով կենտրոնից ուղարկվում է Ախալքալաք՝ նաչալնիկ միլիցիի, որին ժողովրդի արդար բողոքի հիման վրա տեղական ռևկոմը հեռացրեց: Սակայն կենտրոնը ավելի լայն իրավունքներով և առանձին թիկնապահներով նորից (նրան- Ա.Մ.) վերադարձրեց: Ժողովուրդը նորից հուզվեց, բողոքեց, դրան պատասխան եղավ կենտրոնից ուղարկված մի ինչ որ արտակարգ Կոմիսսիայի (ժամանումը-Ա.Մ.), որը առանց մի որևէ քննության, զանազան մութ անձնավորությունների գանգատների հիման վրա, (Նադիրաձեն էր կազմակերպել), ձերբակալեց գավառին հայտնի հասարակական գործիչ,

հայ կոմունիստ և Ռակոմի անդամ Մնոյանցին և ուղարկեց Տփխիս Չրեզվիչայկային[2]: Բողոք, գանգատ լսող չկա: Ընդհակառակը հազարավոր բողոքող գյուղացիներից հինգ-տասը մարդկերանց էլ ուղարկեցին Տփխիս՝ Չրեզվիչայկային: Նախքան այս բանը, դրանից մի ամիս առաջ ամենադատարկ պատճառով կենտրոնը հեռացրեց Ռակոմի նախագահ, հայ կոմունիստ, կարմիր բանակային Առուստամովին: Ժողովուրդը, կազմակերպությունները, հիմնարկությունները բողոքեցին, խնդրեցին, հեռագրեցին ոչ մի պատասխան, և ընկ. Առուստամովը ստիպված հեռացաւ Ախալքալաքից՝ ժողովրդական ամենաանկեղծ ցույցերի տարափի տակ:

Չէր անցել այս բողոքից դարձյալ մի ամիս, մի երկրորդ արտակարգ հանձնաժողով է գալիս Ախալքալաք և այս անգամ էլ ազգայնամոլ ուղղության համար ձերբակալում և Տփխիս են ուղարկում մի ուրիշ ազդեցիկ հայ կոմունիստ Կարապետ Ղազանճյանին, որը Լոռվա կռիվներում կարմիր բանակի մեջ ռոտայի (վաշտ- Ա.Մ.) հրամանատարն էր, որը մասնակցել է շատ կռիվների, ի միջի այլոց, մեծ գործունեություն է ցույց տվել Շահալու կամուրջը վերցնելիս, զանազան կետերում վերցրել է մոտ հազար գերի և այլն: Կռիվները վերջանալուց հետո, դուրս գալով գնում է հայրենիք՝ Ախալքալաք և ուրիշ ընկերների հետ կազմակերպում է կառավարչական մարմիններ ու ինքն էլ նշանակվում է Ռակոմի անդամ, իսկ այժմ, առանց լուրջ պատճառի նստած է Չրեզվիչայկայում: Սա դեռ գավառիս <u>մաքրազարդումը հայ ազդեցիկ կոմունիստներից:</u> Իսկ ինչ վերաբերում է գավառին (ապա այնտեղ-Ա.Մ.) համատարած կամայականությունն է թագավորում: Հայ ժողովուրդը որոշ պաշտոնների համար համարյա օրենքից դուրս է: Առանձին խնամքով շոյվում են ամեն տեղական թուրքերը, մասամբ դուխոբորները, որոնք չեն տուժել և որոնք շատ բարեկեցիկ կյանք են վարում, նամանավանդ կենտրոնից եկած կոմունիստները նրանց օգնությունների, արտակարգ կոմիսարների առանձին ուշադրության առարկա են նոքա: Հայտնի ավազակաբարո թուրք գյուղը[3], որը հենց այս տարի քեմալականների հետ կազմակերպեց իրենց հարևան հայ գյուղերի՝ Կարծախի, Սուլտայի, Վաչեանի և Գյումբուրդայի կողոպուտը և կոտորածը: Բայց կենտրոնի բարձրաստիճան պաշտոնյաների երուսաղեմն է դառել այդ գյուղը: Երբ ժամանում են Ախալքալաք, առանց գործի նայելու, իսկույն առանձին շուքով գնում են Սալավատի այդ, մինչև այժմ աննշան, սարերի մեջ կորած գյուղը: Իսկ թշվառ, թալանված հայ

գյուղերը և հայ գյուղացիք, որոնք իսկապես, որ կարոտ են այցելության, չեն արժանանում այդ շնորհին: Շատ բաներ են խոսում այդ այցելությունների մասին, բայց ավելորդ և անտեղի է այստեղ հիշելը. գավառիս հայ բնակչությունը (միայն հայ), բլոկադայի ենթարկված վրաց իշխանության կողմից, ոչ մի հայ գյուղացի իրավունք չունի գավառիս սահմանից դուրս գալու, որովհետև սահմանի վրա նստած պաշտոնյաները, ձեռքերը բռնած փախստականների վերաբերյալ դեկրետը,[4] չեն թույլ տալիս (միայն հայերին) (տեղաշարժվելու -Ա.Մ), որովհետև բոլոր հայերին համարում են փախստական. ասենք մեղավոր չեն, որովհետև Նոյ Ժորդանիան էլ իր փախուստի նախօրյակին, պառլամենտի հանդիսավոր նիստում իր ճառի մեջ ամբողջ հայ ժողովրդին որակեց այդ բառով: Այստեղ ոչ մի բացատրություն չի օգնում. իհարկե, բացի կաշառքից: Այստեղ կարիք չկա գրելու թուշերի մասին. դա մենշևիկներից մնացած ժառանգությունն է, որը մի խոշորագույն ցավ է գավառիս համար: Կենտրոնը ամեն ջանք գործ է դնում, որպեսզի ի հաշիվ թշվառ, թալանված, աղքատ հայ գյուղացիների, ավելի ևս հարստանան թուշ կրեսոսները, որոնցից ամեն մեկը մի քանի միլիարդների տեր են...Բացարձակ քաոս: Փոխանակ ի հաշիվ հարստի աղքատը բարելավվի, աղքատի վերջին կտոր հողն էլ խլում են՝ հարստին բարելավելու համար...Մի խոսքով, հազար ու մի փաստեր կան, բայց գրելը արդյոք ճիշտ կլինի՞: Միայն այս կարող եմ ասել, որ ժողովուրդը դժգոհ, աչքերը (ուղղել է -Ա.Մ.) այս ու այն կողմ, որ իրեն պաշտպանեն, չթողնեն ճնշելու, հալածելու, թալանելու, բայց այդպիսի անձնավորություններին էլ չեզոքացնում են, ստեղծում են կլյաուզներ և խեղդում ամեն բողոքի ձայն: Իհարկե, այս բոլորը Ձեզ լավ հայտնի է, որովհետև շատ է բողոքվել: Եվ որպեսզի վերացվի Ջավախեթիայի բլոկադան, որպեսզի չեզոքացվի թուշերի էկզեկուցիան, կանգ առնի արտակարգ կոմիսարների այցը, որպեսզի վերջ տրվի ամենայն տեսակ տղայական կամայականության և սրբագործված ալան-թալանին, միայն մի միջոց կա, որը և ամբողջ գավառի բնակչության 75% կազմող հայ ազգաբնակչության տենչն ու փափագն է. այն է՝ միացնել Ախալքալաքի գավառը իրեն հարազատ Սովետական Հանրապետության հետ:

Վ. Ի. ՊՈՅԱՀՅԱՆ

Հ.Գ.[5] Հանուն ժողովրդի շահերի խնդրում ենք միջոցներ ձեռք առնել ազատելու կոմունիստ ընկ. ընկ. Մնոյանին և Ղազանճյանին

Իսկականի հետ ճիշտ է
Գործավար /ստորագրություն/

ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g.2, գ. 24, թ.75-76:

Ծանոթագրություններ (փաստաթուղթ թիվ 7)

1. *Особый отряд- Հատուկ ջոկատ, որը զբաղված էր բնակչության նկատմամբ պատժիչ գործողությունների իրականացումով:*
2. *Չրեզվիչայկա (Չեկա)- Արտակարգ հանձնաժողով: Չեկայի մարմիններն ստեղծված էին ոչ այնքան ներքին կարգ ու կանոնի պահպանման, որքան այլախոհական, ոչ բոլշևիկյան քաղաքական ուժերի հետ հաշվեհարդար տեսնելու համար:*
3. *Խոսքը հավանաբար թուրքաբնակ Հոկամ գյուղի մասին է:*
4. *Այս փաստաթղթից երևում է, որ հատուկ դեկրետով հայերին Վրաստանում տրվել էր փախստականի կարգավիճակ և արգելվել էր հեռանալ գավառից;*
5. *Հ. Գ.- հետգրություն:*

Անձնանուններ

Աբաս 13
Աբդուլ Քերիմ 31, 77, 83, 90
Աբդռահիբ զորավար 9
Աբելյան Պողոս 17, 26, 30, 31,32, 34
35, 40, 45, 51, 65, 89, 90
Աբրահամ Կրետացի 15, 21
Ադոնց Նիկողայոս 19
Ալեքյանց Լևոն 62
Ալթունյան Սամիկոն 62
Ալիբեկի որդի Ռոստոմ 13
Ալիշան Ղևոնդ 19
Ալփ-Արսլան 10
Ակոպյանց Վաղարշակ 62
Սհարոնյան Ավետիս 28, 31
Ամիրխանի որդի 13
Անանիայի որդի 14
Անտոն 14
Ապաջյանց Թադեոս 62
Առաքել 13
Առաքելյան/Առաքելով/ գնդապետ 26
71, 72, 73, 90
Առուստամով 41, 92
Ասվա/ծա/տուր 13, 14
Ավագ 13
Ավագ Հանեսի13
Ավալով Զուրաբ 24
Ավդեև 79
Ավետիսյան Հ. 47
Արգիշտի I 6
Արգուման 13
Արշակ Բ 8
Արշակունիներ 8, 9
Արջևանիծե 27, 29, 72, 73
Արտակ Կասպարենց 62
Արտաշես 13
Արտաշես I 7, 8
Արտաշեսյաններ 8

Բաբայան Տիգրան 4
Բագրատ Գ 10
Բագրատ Դ 10
Բագրատունիներ 9-12, 21
Բադալյան Հովհ. 46
Բայանդուր 13, 14
Բայրամ մոլլա 38
Բարթիկյան Հրաչ 20
Բեկզադյան Ալ. 39, 49

Բերիկ Սուրադի 14
Բերիկ Փիրազիզի 14

Գալոյան Գ. Ա. 50
Գեորգի Գ 11
Գրիգոր 13
Գրիգոր Սուքիասի 14
Գուդովիչ 15
Գուշար 7

Դավիթ 13
Դավիթ Շինարար 10
Դավիթխանյան Դ. 34
Դավլիանիծե Լ. 20
Դարբինյան Ռուբեն 17
Դեմիրճյան Դերենիկ 26, 68
Դեմիրճյան Լյուդվիգ 26
Դիատբեկ Սահակի 14
Դոլիկ Ասվա/ծա/տուրի 13
Դրո 33

Եդիգար 14
Ելդկուզ /սուլթան, աթաբեկ/ 11
Եղիազար 13
Երեմյան Ս. 5, 18, 19
Երվանդունիներ 7

Զադիկ 13
Զաքար 13
Զաքարյան Զաքարե 11
Զաքարյան Իվանե 11
Զաքարյաններ 11, 12
Զոհրաբյան է. Ա. 47, 48
Զորյան Զորի 25, 69, 86, 90

Էվանգուլյան Լ. 46, 83
Էփրիկյան Ս. 20, 22

Թամար թագուհի 11
Թեմուրյաններ 12
Թոռնիկ Ծառուկի 14
Թորեցիներ 11, 12
Թորոսյան Արշակ 31, 81

Ժորդանիա Նոյ 28, 33

Ինճիճյան Ղուկաս 15, 21

Լալայան Երվանդ 20
Լենկ-Թեմուր 12
Լեո 46, 47, 59
Լեոնտի Սրովելի 6, 8

Խաչատուր 13
Խաչատուր Ալեքսանի 14
Խաչատրյան Ս. 36
Խաչիկ Համբարձումի 14
Խաչիկ Յարալի 14
Խանոյան Զարմայր 26
Խատիսյան Ալ. 25, 28, 29
Խատիսյան Գ. 29
Խարաբայի որդի Դավիթ 13
Խոսիկ-Հուսիկ 13, 14

Օառուկի որդի 14
Օերեթելի Ի. 29

Կանդելակի 81
Կարագեոզյան Հ. 18
Կարախան Լ. 47
Կարապետ 14
Կարապետ արք. Բագրատունի 16, 17, 22, 66, 90
Կարապետյան Լեոն 62
Կարապետյան Սամվել 4, 20
Կարապետյան Ցոլակ 62
Կարծիկյան Խ. 29
Կիրակոս 13
Կիրակոս Ասվա/ծա/տուրի 13
Կիրով Ս. 39
Կյուրիոն Սկուտրիեցի 21
Կոժուխով /Կոժուղով/ 30, 31, 83, 84
Կուջոյան Գրիգոր 62
Կոտլյարևսկի 15

Հակոբ 13, 14
Հակոբ Կարնեցի 21
Հանես Իշխանի 13
Հանես Սարգսի 13
Հավաթեղ Կարապետի 13
Հարությունյան Կ.Ա. 47
Հարությունյան Սամսոն 31, 83, 91
Հերակլ II 15
Հովհան Մամիկոնյան 9, 19
Հովհաննես Ամիրազիզի 14
Հովհաննես Բայանդուրի 14
Հովհաննես Դրասխանակերտցի 9, 19
Հուսեին Ղուլի խան 15

Ղազար 13
Ղազանջ/ճ/յան Կարապետ 42, 92, 94
Ղարսլյան Ավետիս 84
Ղորղանյան Գ. 29
Ղուլիջանի որդի Նորսես /Ներսես/ 14
Ղումանտար փաշա 38

Մալխասյան Հովի. 30
Մալխասյան Ստ. 19
Մակաև /Մաղաշվիլի/ 32, 34, 35, 82, 84
Մաղաքյան Բ. 46
Մաղաքյան Թ. 46
Մամիկոնյան Ստ. 36, 68, 69
Մանաս 13
Մանվել Սարգսի 13
Մանուկ 13
Մանուկ Ասվա/ծա/տուրի 13
Մասուր /Մանսուր/ 13
Մատթեոս Ուռհայեցի 10, 20
Մարգար 14
Մարգարյան Հ. Գ. 20
Մարգարյան Մկրտիչ 25
Մարտիրոս Ավանեսի 14
Մդիվանի Բ. 48
Մդիվանի Ս. 32, 36
Մելեյան Մեսրոպ քահանա 31
Մելիքյան Վ. 45
Մելքոնյան Ա. Ա. 21, 22, 46, 48, 49, 51
Միկիրտիչ Վելիջանի 14
Միտիչի /Մկրտչի/ թոռ 13
Միտիչի /Մկրտչի/ որդի 14
Միրիան /Միհրան/ վրաց թագավոր 19
Մկրտիչ 13, 14
Մյասնիկյան Ալ. 43, 49
Մնոյան / Մնոյանց/ Խորեն 26, 41, 92, 94
Մոսե 13
Մովսես Խորենացի 7, 8, 19
Մովսիսյան Մեսրոպ 62
Մռավյան Ա. 40, 49, 51, 65
Մուշեղ սպարապետ 8
Մուրադ 13, 14

Մուրադ Կարապետի 14
Մուրադ Չիհանշեի 13
Մուրադյան Հ. Ղ. 105
Մուրադյան Պ. 20
Մցխեթոս 6

Յաղուբ խան 12
Յաղուբյան Կարապետ 17
Յայազիզ Տեր-Հակոբի 14
Յարալ 13
Յարալ Կիրակոսի 13

Նադար Շահնազարի 14
Նադիր խան 14
Նադիրաձե Ս. /Նատիրաձե/ 41, 91
Նազարեթյան Վ. 46
Նազարի որդի 13
Նիկոլայ I 66
Նինո /Նունե/ 8

Շալվա Թորելի /Թորեցի/ 11
Շահաբա Սկրտիչի 13
Շահազիզ 14
Շահխաթունյան Ավ. 25
Շահկուլի որդի Աբրահամ 13
Շահմուրադ 13
Շահպարոնյան Կարապետ 30
Շանթ 47
Շարա 7
Շարդինե 33
Շերմազան 13
Շիրինյան Սերգեյ 4

Պալավանդովներ 72
Պապ թագավոր 8
Պապոյան Գր. 30
Պապու Մարգարի 14
Պապու Շիրինի 14
Պասկևիչ 15
Պաուլուչչի 15
Պոյաճյան Վ. Ի. 93

Ջալալեդդին 11
Ջաղեցիներ 12
Ջամալ աղա 38
Ջամալյան Ա. 31, 33, 83
Ջանիբեկ Սարգսի 13
Ջավախիշվիլի Իվ. 43
Ջավախոս 6, 7

Ջհանշե Կիրակոսի 14
Ջոջիկ Ջհանշեի 13

Ռամիշվիլի Ն. 28, 36
Ռայկրոֆ 33
Ռեզնիկով 27, 73
Ռոմանովներ 68
Ռոսեբ /Հովսեփ/ 13
Ռոսեփ /Հոսեփ/ 13
Ռոստոմ 13, 14
Ռուբեն 13

Սահակ 13, 14
Սահակ Գրիգորի 13
Սամսոն 13
Սաֆոսյան Ա. 45, 46
Սարգիս 13, 14
Սարգիս Երկայնաբազուկ Թմգովելի /Թմգովեցի/ 11
Սարգիս Առաքելի 14
Սարգիս Ջաղեցի 12
Սարգիս Սելիքի 14
Սարգիս Մուխթարի 14
Սելևկյաններ 7
Սիմոն 13
Սմբատ I Բագրատունի 9
Սողոմոն թագավոր 15
Սպենդիարյան Հովհ. 46, 83
Ստալին Ի. 40, 44, 48
Ստեփանոս Տարոնեցի /Ասողիկ/ 19
Ստրաբոն 7, 19

Վախուշտ Բագրատիոն 14, 22
Վահրամ 13
Վաղարշակ Ա 7
Վարդան 14
Վարդան պատմիչ 10, 20
Վարդգես Պոլոյենց Ափոյենց 62
Վարծավունի 9, 19
Վարծել 14
Վեհիբ փաշա 26
Վրացյան Ս. 46, 47

Տեր-Բեկ 13, 14
Տեր-Գրիգորյան Արամ 81
Տեր-Գրիգորյան Արարատ 31, 81
Տեր-Գրիգորյան Ջալալ 17, 30
Տեր-Հակոբ 13, 14
Տեր-Հակոբ Ջոմերդի 14

Տեր-Սինասյան Ռ. 17, 21, 35, 36, 47, 49
Տեր-Ստեփանյան 46, 83
Տերյան Վահան 17, 66
Տերտերյան Հ. 47
Տրդատ Մեծ 19
Տուղրիլ 10

Փավտոս Բուզանդ 19

Քաջազնունի Հովհ. 17, 28, 33
Քարթլոս 6
Քերոբ 13

Օհանջանյան Բ. 30
Օհանջանյան Համո 17, 37
Օրբելյան Լիպարիտ 10
Օրբելյան Ստ. 18, 20

Ֆոն Կրես 30

Абелян Погос 56

Бирцян Арсен 56

Киров С. 63

Махарадзе Ф. 63, 64
Мдивани Б. 64
Микаелян В. 46
Мравян А. 63
Мясников 63

Назаретян 63
Нариманов 63

Оганджанян В. 56
Орахелашвили М. 63, 64
Орджоникидзе 63

Сталин 63
Сванидзе Г. 63

Тер-Гукасян Хач. 56

Фигатнер 63

Хармандарян С. В. 48

Шахатунян А. 45

Տեղանուններ

Աբխազիա 35
Աբուլ գյուղ 13, 15, 27
Աբուլ լեռ 18
Ադիգեն 14, 19, 44
Ադրբեջան 29, 39, 40, 41, 60
Ադրիանապոլիս 15, 16
Ազմանա 36
Ալախ, Ախալ 10, 11, 20
Ալաշկերտ 87
Ալաստան 13, 38
Ալեքսանդրապոլ 25, 29, 32, 33, 41, 49, 66, 68
Ալթայի երկրամաս 44
Ախալքալաք /Ախալքալաքի գավառ/ 4, 9-20, 22, 24-51, 56-59, 65-93
Ախալքալաքի բերդ 10, 13, 15
Ախալքալաքի սարավանդ 5
Ախալցխա /Ախալցխայի գավառ/ 4, 6, 11, 12, 14, 15, 16, 19, 21, 22, 25, 26, 28, 30, 35, 38, 44, 45, 47, 48, 66, 68, 69, 72, 75, 82, 86, 88, 90
Ախալցխայի փաշայություն 65
Աղվանք 9
Ամասիա 12
Այրարատ 5
Անատոլիա 86
Անգլիա 41
Անգորա 86
Անդրկովկաս 15, 16, 17, 24, 25, 39, 41, 60, 68, 87
Անի 11
Անտանտի երկրներ 33, 37
Աշոցքի սարահարթ 5
Աջարիա 35, 44, 86, 88
Ասպինձա /Ասպնջակ/ 19, 43, 44
Ավստրիա 74
Արաբիա 9
Արագյալ Մեծ 27
Արագովա 13, 15, 16
Արդահան /Արտահան/ 5, 15, 18, 19, 26, 37, 38, 68, 69, 72, 73, 86
Արշակունյաց Հայաստան 9
Արցախ 9
Արևելյան Վրաստան 21
Արևմտյան Հայաստան 16, 28, 41, 46
Ափնիա 13
Աքորի 36

Բաքում 28, 47
Բանուրիան /Բաքուրիան/ 27, 29, 31, 32, 46, 50, 56, 57, 58, 70, 72, 75-81, 84, 90
Բասեն /Դարույնք/ 6, 9, 15
Բավրա 13
Բարալեթ 13, 14, 15, 16, 22
Բաքու 82
Բաքուրիանի լեռներ 80
Բեժանո 13, 27
Բյուզանդական կայսրություն 10
Բոգդանովկա /Նինոծմինդա/ 18, 43, 44
Բոլնիս 18
Բողնոփոր 5, 18
Բորժոմ 27, 29, 31, 38, 43, 68, 72, 73, 75
Բորժոմի լեռներ 75
Բորչալու 24, 25, 28, 29, 43, 58, 69, 78, 80, 88
Բուխարեստ 15
Բուռնաշեթ 13

Գանձա 66
Գանձակ 11
Գերմանիա 28, 29, 30
Գյոք Դաղ լեռ /Գեոգ Դաղ արուտատեղի/ 26, 68
Գյուրջիստանի վիլայեթ 12
Գոգաշեն գյուղ 19, 44
Գոգշեն 10
Գոնդուրա 15
Գորելովկա 16
Գորի 31
Գորվա գավառ 67, 88
Գուգարաց գավառ 5
Գուգարաց նահանգ 8
Գուգարք /Գոգարենե/ 59
Գուգարքի թագավորություն 9
Գումբուրդո /Գյումբյուրդա, Գյումբուլդա/ 13, 26, 27, 38, 45, 61, 74, 85, 92

Դաղեշ /Դատեշ, Տատեշ/ 35, 38, 39, 61, 62, 68, 85
Դամալա 43
Դայա /Տայք/ 6
Դաշտային Դարաբաղ 47
Դարույնք /Բասեն/ 6
Դերջան 15
Դիաուխի 6
Դիլիսկա /Տիլիսկա/ 15, 16, 66
Դսեղ 33
Դուին/Դվին/ 11

Ելիզավետպոլ 24, 45
Երկիրն Հայոց 9
Երկիրն Վրաց 9
Երվանդունյաց Հայաստան 7
Երուսաղեմ 92
Երևան 15, 32, 41, 49, 73, 83, 89
Երևանի նահանգ 24
Եֆրեմովկա 33

Զաբախա /Զաբախյան երկիր/ 6
Զակ 13
Զանգեզուր 24, 45
Զաքաթալա 37
Զրեհ /Զրեսկ/ 13, 21

Էթիունի 6
Էրզրում 12, 15, 22, 66, 90
Էրինջա 13, 26

Թանչա 27
Թափարվան գետ 10, 18,
Թիֆլիս /Տփխիս/ 26, 28, 30, 33-36, 39-42, 45, 48, 59, 62, 68, 74, 76-79, 83, 84, 91, 92
Թիֆլիսի նահանգ 16, 24, 25, 32, 57
Թմկա բերդ /Թմոգովի,
Թմուկ բերդ/ 11, 12, 13, 20
Թորիա /Թորեա/ 11, 13
Թոք 26
Թռեղք 5, 11, 18
Թռեղքի /Թրիալեթի/ լեռներ 5, 15
Թումանյանի շրջան 18
Թուրքիա 15, 16, 18, 27, 28, 29, 30, 34, 48

Իբերիա / Վիրք, Վրաստան/ 5, 7
Իմերեթիա 12, 15, 35, 44, 47

Լալվար 36
Լեռնային Դարաբաղ 39, 40, 43
Լոմատուրցյս 13
Լոռի 10, 11, 21, 24, 25, 29, 32, 33, 35-40, 42, 47, 69, 92
Լոռվա /Կյուրիկյան/ թագավորություն 9
Լոռու դաշտ 35
Լոռու Չեզոք գոտի 34, 36, 38, 40

Խանդո 13
Խանչալի լիճ 18
Խանչալի Մեծ /գյուղ/ 84
Խանցիխե 5
Խավեր 26
Խերբվիս /Խըրթըզ/ 15, 16
Խիզաբավարա 72
Խնուս 15
Խոզաբուն /Խոզափին/ 13
Խոզափին լիճ 18
Խոսպիա 14
Խոսպիա Ներքին 13
Խոսպիա Վերին 13
Խորասան 15
Խորենիա Մեծ 13, 27, 46, 74
Խորհրդային Ադրբեջան 43
Խորհրդային Հայաստան 18, 39, 40, 42, 50
Խորհրդային Ռուսաստան 47
Խորհրդային Վրաստան 42
ԽՍՀՄ 44, 50
Խուլգումո 13

Ծալկա /Խրամ/ 4, 18, 27, 31, 32, 36, 39, 40, 45, 47, 50, 56, 57, 58, 68, 70, 73, 75-81, 88, 89
Ծալկայի լեռներ 80
Ծոբոփոր 5, 18
Ծունդա 7, 10, 11, 13, 19, 20

Կալինինոյի շրջան 18
Կախեթ 15
Կանգարք 5
Կարայազ 76
Կարզախ /Կարծախ/ 16, 26, 35, 38, 39, 61, 62, 68, 85, 92
Կարծախ Մեծ 14

Կարծախ Փոքր 14
Կարսի մարզ 26
Կարսի շրջան 86
Կեչուտ լեռ 5
Կղարջք 5, 18
Կյուրիկյան թագավորություն 9
Կոթելիա 13, 44
Կոկիա 13, 14, 15, 26, 72
Կողք 36
Կողբոփոր 5, 18
Կովկաս 31, 67, 74, 79
Կորխ 13
Կ.Պոլիս /Պոլիս/ 31, 84
Կուր գետ 9, 18, 26, 36
Կուրի դաշտավայր 6
Կուրի ձոր 11, 19, 38

Հայասա 6,
Հայաստան 5, 8-12, 18, 19, 20, 25, 28-40, 42, 43, 46-50, 58-61, 85, 87-90
Հայաստանի Հանրապետություն 31, 39, 41, 45, 59, 60, 61
Հայկական լեռնաշխարհ 5, 6
Հայկական ԽՍՀ /ՀԽՍՀ/ 40, 44, 51, 65
Հայոց երկիր 7, 9
Հարք 9
Հեշտիա 13, 16, 36
Հյուսիսային Կովկաս 31, 44, 58, 76, 83
Հյուսիսային Հայաստան 9, 11, 14
Հոկամ 13, 15, 26, 36, 38, 44, 94
Հռոմ 74

Ձորագետի թագավորություն 9
Ձորոփոր 5, 18

Ղայի Ղուլու 15
Ղարաբաղ 24, 28, 45
Ղարս 79
Ղաուրմա 13
Ղրիմ 66

Մադաթափա լիճ 18, 32
Մամզարա Փոքր 13
Մանգլեացփոր 5, 18
Մանգլիս 18, 32, 68, 80
Մաջաղիա 15
Մաջաղիա Մեծ 13
Մառնեուլ 18
Մեծ Հայք 5, 7, 8
ՄեսխեթՁ, 19
Մթին լեռ 5
Միջին Ասիա 44
Մոլիտ 38, 43
Մոսկվա 41, 45, 47, 50
Մրագովալ /Մրակովալ/ 39, 61, 62
Մուրջախեթ Փոքր 13
Մցխեթ 8

Նարմանու նահանգ 15
Նաքալաքև 13, 19
Նինոծմինդա 16, 19
Նոյեմբերյանի շրջան 18
Նոր Բայազետ 79
Նոր Քաղաք 10, 20

Շահալու կամուրջ 92
Շավշեթ 5, 18
Շիրակ 7, 11, 49, 88

Չամդուրա 13
Չլդըր /Չլտր/ 12, 14, 15, 26, 69, 86
Չխարուլա 43
Չունչխա 44

Պարսկաստան 12, 15
Պարուար 5
Պետրոգրադ 24

Ջաբախա, /Ջավախա/ 6
Ջալալօղլի 33, 36
Ջավախեթ /Ջավախեթիա/ 6, 8, 11, 15, 42, 93
Ջավախք 4-12, 15-18, 21, 22, 24, 28, 34, 35, 36, 38, 40, 41, 43-51, 59, 60, 65, 67, 86, 90
Ջավախք Ներքին 5, 7, 10, 19
Ջավախք Վերին 5, 7, 10, 18, 19, 44
Ջավախքի լեռնադաշտ 5
Ջավախքի լեռներ /Կեչուտ, Մթին/ 5
Ջաուալիս /Ջաուախս/ 10
Ջիգրաշեն 13

ՈՒԽՖՍՀ 37
Ռուսական կայսրություն 15

Ռուսաստան 15, 16, 21, 25, 37, 39, 40, 42, 47, 60, 61, 66, 74, 86, 87, 88

Սաթխա 16, 27, 36, 74
Սաղամո լիճ 18, 32
Սամսարի լեռ ներ 5
Սամցխե /Ախալցխա/ 10, 11, 12, 21
Սամցխե /Մեսխեթ գավառ/ 6, 19
Սամցխեի աթաբեկություն 12
Սանահին կայարան 37
Սասանյան Իրան 9
Սարո գյուղ 72, 73
Սեֆյան Իրան 12
Սիբիր 44
Սովետական Հայաստան 40, 87
Սովետական Ռուսաստան 39, 61
Սպեր 11
Ստեփանավանի շրջան 18
Սուլդա /Սուլտա/ 13, 19, 26, 35, 38, 39, 61, 62, 68, 85, 92
Սևան 11
Սեր 37

Վաչիան /Վաչեան/ 13, 16, 26, 39, 61, 62, 92
Վանանդ 9
Վանի թագավորություն 6
Վարձիա 19
Վարևան 16
Վիրք 7-10
Վորոնցովկա 36,
Վրաստան 8, 10, 11, 20, 27-33, 35-41, 43, 44, 50, 56-60, 66, 69, 76-79, 83, 84, 85, 87-90, 94
Վրաստանի հանրապետություն 18
Վրաց թագավորություն 7, 8
Վրաց մարզպանություն 9
Վրացիմերեթական նահանգ 16
Վրացական ԽՍՀ 40, 43, 44

Տաբածղուրի գյուղ 38, 43
Տաբածղուրի լիճ 18, 45
Տաճկահայաստան 87, 88
Տաճկաստան 66, 69, 73, 75, 78, 86
Տայք 5, 21
Տաշիր 5, 12, 18
Տարիունի/Դարույնք Բասեն/ 6
Տաուշ 11
Տրոյիցկոյե 33

Տուրցխ 13

Ցուրտավ 5

Ուտիք 5

Փամբակ 29
Փարիզ 35, 36, 37
Փարվանա լիճ 8, 18, 32
Փոցխով գետ 6

Քաջատուն /Քաջաց քաղաք, Ցունդա/ 7
Քառասունաղբյուր վտակ 10
Քարթլի 12
Քարծեփ 13
Քենարբել 14
Քիլդա 13
Քութայիս 31, 33, 78
Քուիշափոր 5

Օլավերդ 13
Օլթի 26, 37
Օսմանյան կայսրություն 28
Օրջա 13

Австро-Венгрия 55
Азербайджан 55
Александропольский уезд 54
Арм. Респ. 52, 54
Арм. ССР 63
Армения 63
Ахалкалак 54
Ахалкалакский уезд /район/ 22, 52-55, 63, 64

Бакуриан 52, 53, 56
Болгария 55
Борчалинский уезд 52

Германия 55
Гумурдо 53
Груз. Респ. 53
Грузия 52, 55, 63

Закавказье 54

Карцах 53

Северный Кавказ 52
Сов. Арм. 64
Суньда 53
Сурмалинский уезд 54

Тагча 52
Тифлис 52, 64
Турция 54

Хорения 52
Храмский район 63, 64

Цалка 52
Цалкинский участок 52

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Ջավախքի պատմական անցյալից 5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Ջավախքի պատմության ռդբերդական էջը.....24

ՀԱՎԵԼՎԱԾ 50

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ 95

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 99

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 104

Ախալքալաքի բերդը հարավ-արեւելքից



Ախալքալաք. XIXդ. վերջ: Հետին պլանում ռուսական եկեղեցին եւ Տավշանկա բլուրը



Ախալքալաքի տեսքը հարավ-արեւմուտքից,
Քառասնաղբյուր (Կրխբուլաղ) գետակի ձախ ափից (XXդ. սկիզբ)

Ախալքալաք. 1903թ., տեսքը արեւմուտքից

Ախալքալաքի սարահարթը եւ Աբուլ լեռը

Տաբածղուրի լիճը եւ գյուղը

Ախալքալաք քաղաքը Տավշանկա բլրից

Ախալքալաք. 1912թ. պատարագից հետո

Պողոս Աբելյան, Ախալքալաքի Հայրենյաց (Հայրենակցական) վարչության քարտուղար

Վահան Տերյանը իր ընկերներով Թափարվան եւ Կրխբուլաղ գետերի խառնարանի մոտ (XXդ. սկիզբ)

Չամդուրա գյուղ, խաչքար XVդ.

Խաչքար 13-14 դդ., հայտնաբերվել է Ախալքալաք քաղաքատեղիից 1988թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



Մաջադիա գյուղ, խաչքար XV - XVIդդ.

Տուրցխ գյուղ, խաչքար XVդ.

Տուրցխ գյուղ, խաչքար XVդ.

Ղուլալիս գյուղ, խաչքար XIVդ.

ԼՈՒՍԱՎՈՐ ՓԻՏՈՒՓՈՒՆՆԵՐԻ
ՀՈՒՇԱՄԵՆՅԱՆ ՓՈՍԴԱՐԱՆ

Ախալքալաք, թեւավոր խաչ XXդ. սկիզբ

[500դր.]

Ախալքալաք, խաչքար 1979թ. Սբ. Խաչ եկեղեցու բակում

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆՔԱՅԻՆ ԳՈՒՆԴԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՋԱՎԱԽՔ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

АШОТ АГАСИЕВИЧ МЕЛКОНЯН

ДЖАВАХК: ОЧЕРКИ ИСТОРИИ

խմբագիր՝ Հ. Ղ. Մուրադյան
համակարգչային ձևավորումը՝ Ա. Ս. Սարգսյանի

ծավալը՝ 6.2 մամուլ + 21 լուսանկար
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., գիրքը տպագրվել է Երևանի «Հայք» տպարանում / Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24 դ/

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0214357

A II
25321